ԴՐՈՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

№ 5 (1596) ՄԱՅԻՍ 2008



Հայաստանի Հանրապետություն

Վաշինգտոնի Դեսպանատան

Գաղութատիրական Վկայագիր

Սույն վկայագրով լիազորվում է ~~Պարոն Յովհաննէս Սարգսեան~~ որպէս ~~Դեսպան~~, ~~Էջ~~ տեղ ~~ծնած~~ 1884 թուականին, նախկին ~~Օսմանեան~~ հպատակ, արդարադատութեան Նախարարի 4 Դեկտեմբերի Նախագահական հրամանագրի համաձայն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութեան ստանալու համար դիմում է ներկայացրել, որպէսզի նրան տրուի սույն վկայագիրը:

Սույն վկայագրի հիման վրայ նրան տրվում է սահմանադրական կարգով ստորագրուած գաղութատիրական կոչում:

Յ. Սարգսեան

Վաշինգտոն, 16, 1920

Հաստատող

ARMENIAN LEGATION
ARMENIAN REPUBLIC
AT WASHINGTON

ԴԵՍՊԱՆ
Հայաստանի Հանրապետության
Վաշինգտոնի Մ. Նահանգներում

ԴՐՈՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



Հարցազրույց

6 *"Դրոշակ" - ի հարցերին պատասխանում է Լեւոն Մկրտչյանը*

Սոցիալ-տնտեսական

13 *ՀՀ պարենային անվտանգության հիմնախնդիրները*

21 *Ծկնոթյուն ամեն հարցում*

Իմացաբանական

25 *Փնտրտուք անձնական հիշողության մեջ (շարունակություն)*

Պատմության գաղափարներ

31 *Դրվագներ ոչ մոտիկ անցյալի պաղ պատերազմեն*

Մեր երթևեկությունները

37 *Սարդարապատի պատմաշինության ժամանակագիրը*

Տեղեկանք

40 *Հ այերը ԱՄՆ - ում*

Դամոկանք

43 *Արամ Մանուկյանը Ատրպատականի մեջ*

Թերթելով «Դրոշակ» - ի էջերը

53 *Ի՞նչ է գրել « Դրոշակը» 100 տարի առաջ*

Դասկերտարան

56 *Լաուրա Ավետիսյան*

"Դրոշակ" ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության:
Հիմնադիր՝ ՀՅԴ
Գլխավոր խմբագիր՝ **Ռուբեն Հովսեփյան**
Խմբագիր՝ Կ.Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝ Ս.Խաչատրյանի
Ձեւավորումը՝ Մ.Հովսեփյանի
Գրանցման վկայական 897
Երեւան,375010,Միեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@ arf.am
Տպագրությունը՝ «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ի

" **Droshak"** monthly, ARF dashnaktsoutiun publication
12/ 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am
Editor-in-Chef: **Rouben Hovsepian**

Digitized by ARF PR Office

ՀՅԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՀԵՏԵՎՈՒՄ, ԸՆԴԱՌԱՋ՝

ՀՅԴ 30-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

2008թ. մայիսին Հայաստանում գումարվելու է ՀՅԴ 30-րդ Ընդհանուր ժողովը, ուր պիտի խորքային վերլուծության ենթարկվեն ՀՅԴ համազգային դերակատարությանը, հայաստանյան քաղաքականությանը եւ սփյուռքյան գործունեությանն առնչվող մանր ու խոշոր բազմաթիվ հարցեր, տրվեն համապատասխան գնահատումներ եւ ընդունվեն առաջիկա քառամյա գործունեության ռազմավարության եւ մարտավարական սկզբունքների մասին որոշումներ:

Այսպես է եղել կարգը ՀՅ Դաշնակցության ծնունդից ի վեր:

Այսօր Դաշնակցությունը գումարում է իր հերթական Ընդհանուր ժողովը մի այնպիսի պայմաններում, երբ՝

- Հայ դատի արդար լուծման ճամփին Հայաստանն ու Հայությունը կանգնած են համաշխարհային ու տարածաշրջանային լուրջ մարտահրավերների դեմ հանդիման: «Հանուն բարիդրացիության եւ պետական կյանքի բնականոնացման հրաժարվել պահանջատիրությունից» մաշված հանկերգը այսօր նորից է վերահնչում ու խառնվում հայ-թուրքական հարաբերությունների կոնտեքստում Ցեղասպանության ճանաչման հարցը դիվանագիտական ճնշամիջոցի վերածելու խորամանկ ելեւէջներին... Իսկ ո՞րն է ՀՅԴ սկզբունքային կեցվածքը: Մեր համոզմամբ ե՛ւ Հայաստանի Անկախ պետականությունը, ե՛ւ Հայոց ցեղասպանության հարցը, ե՛ւ Արցախյան հիմնահարցը միեւնույն արժեքային համակարգի բաղադրիչներն են, ազգային միեւնույն իդեալին ձգտելու ռազմավարական հանգրվանները: Հետեւաբար աղետաբեր եւ անհեռանկարային է մեկը մյուսին հակասող մարտավարական քայլերով ընթանալ դեպի այդ հիմնախնդիրների վերջնական հանգուցալուծումը... Հայ-թուրքական հարաբերությունների կոնտեքստում ցարդ մեր որդեգրած քաղաքականությունը նոր ենթաշերտերով զինելու անհրաժեշտություն է զգացվում: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, որպես միացյալ հայության միասնական պահանջ, օրակարգի վրա պահելով, պիտի քննարկել մեր պահանջատիրության այլ բաղադրիչների զուգահեռ արծարծման կարելիությունները՝ վիլսոնյան արբիտրաժի լույսի տակ հայ-թուրքական սահմանի ճշտորոշման հարցը, Թուրքիայի հայ քրիստոնյա համայնքի եւ Արեւմտյան Հայաստանում դավանափոխ եւ այլալեզու հայ զանգվածների մարդկային եւ համայնքային իրավունքների պաշտպանության հարցը եւ այլն:

- 2008 թ. նախագահական ընտրությունների նախընտրական եւ հետընտրական գործընթացներում քաղաքական դերակատար ուժերի ցուցաբերած անհեռատեսության բերումով մի կողմից վտանգվել է մեր պետականության քաղաքական կայունությունը, մյուս կողմից՝ քաղաքական դաշտը բեւեռացվել եւ վարակվել է ոչ-ժողովրդավարական արատներով... Եթե քաղաքական կայունության ճամփով՝ ժողովրդավարական բարեփոխումների ձգտումը գրեթե անհնար է բազմազգ

պետություններում, ապա այսօր բազմաթիվ փոքր ու մեծ ազգ-պետություններ դա իրականացրել են էթնիկական միատարրության պայմաններում: Ի՞նչն է խանգարում մեզ նույն ճանապարհով ընթանալ, եթե ոչ պետական մտքի, վարչական փորձի եւ քաղաքական մշակույթի անկատարությունը: Մեր համոզմամբ, ՀՅԴ Ընդ. ժողովը, վերլուծելով ՀՅԴ Բյուրոյի եւ Հայաստանի Գերագույն մարմնի որդեգրած քաղաքականությունը՝ կայունության եւ ժողովրդավարության վերահաստատման ուղղությամբ, եւ կշռադատելով ձեռք բերված արդյունքները, ճշգրտելու է հայաստանյան մեր քաղաքականության առաջիկա գիծը:

- Հայաստանի ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի պայմանները շարունակում են մնալ անբարոր: Մշակված օրենքների ոգուն հակառակ, հիմնականում գործադրական մեխանիզմների անկատարության պատճառով, երկրում մոլեգնում են վայրի կապիտալիզմին հատուկ երեւույթները՝ կոռուպցիա, գնագոյացման լիակատար անկառավարելիություն, տնտեսական իշխանությամբ օժտված խմբավորումների տիրապետություն, մենաշնորհներ, փոքր ու միջին գործարարության եւ տնտեսվարության խեղճացման եւ փոշիացման լայնամասշտաբ գործընթաց եւ այլն: Օրենսդիր եւ մեր մասնակցությամբ ձեւավորված կոալիցիոն գործադիր իշխանություններում ՀՅԴ կեցվածքի ու դերակատարության բնույթն ու ձեւաչափը նորովի դրսեւորելու կարեւոր առաքելությունն է ակնկալվում ՀՅԴ Ընդ. ժողովից: Մեր կիրառելիք կեցվածքն ու դերակատարությունը որքան համահունչ լինեն ՀՅԴ ծրագրային հիմնարար արժեքներին եւ հայաստանյան պլատֆորմի հասկացություններին, բարեփոխումների ուղղությամբ առած մեր քայլերը որքան բարեկարգչական լինեն եւ համակարգային, այնքան ավելի է արդյունավորվելու ընկերվարական եւ ժողովրդավարական մեր էությունը: Դեռ ավելին՝ համոզված ենք, որ Հայաստանի քաղաքական դաշտում ձախ հոսանքի եւ աշխատավորական ուժի ձեւավորման, համախմբման եւ գաղափարականացման հարցում առանցքային նշանակություն կարող են ունենալ ՀՅ Դաշնակցության կազմակերպական ավանդը, գործադիր ոլորտներում վաստակած փորձը եւ գաղափարախոսական ներուժը: «Ազատ շուկայական» տնտեսակարգի օրենքները թափանցել են գիտության եւ մշակույթի բնագավառներ: Հայաստանի արհեստագիտական մըտքից եւ հոգեմտավոր որակից այսօր մնացել են աննշան հետքեր միայն, այն էլ՝ դարձյալ ենթակա վայրի կապիտալիզմի քմահաճույքին: Դժվար է արծարծել այն ցավոտ իրողությունը, որ այսօր հայկական նկարագրի պահպանումը բուն երկրում նույնքան օրախնդիր է, որքան սփյուռքում: Փաստորեն այս մտահոգիչ իրավիճակը էապես բարեշրջելու հրամայականի առջեւ է կանգնած Դաշնակցությունը:

- Արցախյան հիմնահարցի բանակցային գործընթացը Մինսկի խմբից ՄԱԿ-ի միջազգային ասպարեզ տեղափոխելու լուրջ միտումներ են նկատվում Ադրբեջանի կողմից: Պատճառը պարզ է՝ հարցի իրավական եւ պատմա-քաղաքական ծալքերը որքան ավելի են բացահայտվում անկողմնակալ իրավարարի համար, այնքան ավելի է ենթադրվում հայանպաստ հանգուցալուծում: Պատմական իրավացիությունից, արդարությունից բխած այս պարզ ճշմարտությունը, թվում է, թե Մինսկի խմբի կողմից արդեն ընկալվում է, սակայն ՄԱԿ-ի պարագայում դա ընկալվելու համար հարկավոր է եւս մի քանի տարի: Ահա թե ուր պիտի փնտրել Ադրբեջանի ռազմավարական այս մոդուլացիայի բուն դրդապատճառը: ՀՅԴ Ընդ. ժողովը ՀՀ արտաքին քաղաքականության ցարդ տված արդյունքների եւ հակառակորդի դիվանագիտական նոր հնարքների լույսի տակ, գծելու է մեր առաջիկա կեցվածքն ու համակուսակցական գործունեության շրջանակը:

- Ղարաբաղի Հանրապետության սոցիալական կացութաձեւը եւ տնտեսակարգը տրամաբանական շարունակությունն են Հայաստանի Հանրապետության: Թեեւ այնտեղ համեմատաբար մեղմացված են վայրի կապիտալիզմի երեւույթները: Շնորհիվ արցախյան քաղաքական վերնախավի ցուցաբերած խոհեմ մոտեցումների ու որդեգրած արդյունավետ վարչարարության, ժողովուրդը գտնվում է առավել տանելի կենսամակարդակում: Այնուամենայնիվ անհրաժեշտ է այս պարագայում եւս հետամուտ լինել աշխատավորական ուժի ձեւավորմանը եւ սոցիալական բարեկարգչությանը:

- Հայրենի Զավախքի հայության քաղաքացիական իրավունքների պաշտպանության հարցը, ինչպես նաեւ նրա սոցիալական կյանքին եւ Զավախքի ժողովրդագրական դիմանկարին սպառնացող վտանգների դիմագրավումը, մեր պահան-

ջատիրական պայքարի մաս են կազմում: Այս բնագավառում ՀՀ արտաքին քաղաքականությունը չունի հստակ ծրագիր եւ գործելակերպ, որոնց հիմքում պիտի ուրվագծվի Ջավախքի հայապատկան լինելու հանգամանքը:

- Սփյուռքը շարունակում է մնալ այլասերման, ուծացման վտանգին ենթակա: Աննախադեպ չափերով ավելացել է միջինարեւելյան գաղութներից արտագաղթը դեպի հեռավոր ափեր: Ու փաստորեն հայապահպանման առգո կարելիություններով ի զորու չենք դիմակայելու հարաճուն ապազգայնացմանը... ՀՀ քաղաքացիության մասին վերջերս մշակված եւ ընդունված օրենքը, մեր վախճանական իղձերի իրականացման իմաստով, անկյունադարձային, նշանակալից եւ առաջադիմական երեւույթ է, որի գործադրական ձեւերի հստակեցման համար, ինչպես նաեւ նրա պրոպագանդման եւ տարածման համար մեծ դեր է վերապահված համահայկական կառույցներին, այդ թվում ՀՅԴ-ին: Սփյուռքյան տարաբնույթ ու բազմաշերտ դժվարություններին պետք է ավելացնել եւս մեկը. վերջերս Թուրքիայի պետության կողմից առաջ է մղվում մի գաղափար, ըստ որի Ցեղասպանության ճանաչման հարցը հայկական սփյուռքի գործն է: Այս գաղափարը, որ նախապես լայն շրջանառության մեջ էր դրվում թուրքական քարոզչամեքենաների միջոցով, արդեն պաշտոնապես հայտարարվում է Թուրքիայի վարչապետի բերանով: Եվ սա նշանակում է, որ թուրքերը մտադիր են սփյուռքն առանձնաբար դարձնել իրենց հարվածների թիրախ: Այս վտանգավոր գաղափարի դեմ եւս ՀՅԴ Ընդ. ժողովը, անհրաժեշտաբար, որոշումներ է ընդունելու:

Եկեք հաստատենք, թե պատմական ինչ վճռորոշ պահի է գումարվում ՀՅ Դաշնակցության 30-րդ Ընդ. ժողովը:

Թեեւ նշված հարցերից բխած դժվարությունները առնչվում են այսօրվան, սակայն դրանց լուծման համար պահանջվող վճռակամությունը, ողջամտությունն ու սկզբունքայնությունը չեն պայմանավորվում սոսկ ժամանակային պարամետրերով, հետեւաբար չեն կարող խզված լինել անցյալի ոգուց: Այս առումով փորձեցինք պատմա-գաղափարական հետադարձ հայացք նետել ՀՅԴ Ընդհանուր ժողովների անցած ուղուն, եւ ստացվեց այնպես, որ տարբեր Ընդհանուր ժողովներից ընտրված ձեւակերպումներն այսօր էլ պահպանում են իրենց հնչեղությունն ու այժմեականությունը:

110 տարի առաջ, երբ Դաշնակցությունը նոր էր կայանում որպես կազմակերպություն, ապակենտրոնացման սկզբունքը արդեն ապացուցել էր իր արդյունավետությունը. «*Կազմակերպության հիմնական սկզբունքի՝ այն է ապակեդրոնացման մասին վիճաբանություն գրեթե տեղի չունեցավ, որովհետեւ ժողովն ուրախությամբ հաստատեց, որ Դաշնակցությունն իր վեց տարվան հարաճուն գործունեությունը մասամբ կը պարտի ապակեդրոն դրության, որ մեկ կողմեն առաջ բերած է նախաձեռնության ոգի եւ պատասխանատվության գիտակցություն եւ, մյուս կողմեն, ձեւական շղթաներու մեջ չկաշկանդելով դաշնակցական մարմինները, թույլ տված է յուրաքանչյուրին անկախ զարգանալու, գործի շահերուն եւ տեղական պայմաններու համաձայն*» (ՀՅԴ երկրորդ Ընդ. ժողով, 1898 թ., Թիֆլիս):

Շուրջ 90 տարի առաջ, երբ արդեն գոյություն ուներ Հայաստանի Հանրապետությունը եւ առաջին անգամ Դաշնակցությունն իր Ընդհանուր ժողովը գումարում էր Անկախ Հայրենիքի մայրաքաղաքում, պետական կառավարման համար ընդունվեցին հետաքրքրական որոշումներ. «*...Իբրեւ հիմք պետական ներքին քաղաքականության ընդունել կուսակցության ծրագիրը, հետեւողական եւ արագ կերպով իրականացնելով կյանքի մեջ նրա հիմնական սկզբունքներն ու պահանջված ընկերային բարեփոխությունները:*

...Ռամկավարացնել պետության վարչական ամբողջ մեխանիզմը, վերացնելով միապետական կարգերի մնացորդները...

...Պարտավորիչ զինվորությունը ընդունիլ իբր անհրաժեշտ չարիք, քանի չէ լրացած եւ ամրապնդված Անկախ եւ Միացյալ Հայաստանը իբրեւ պետություն եւ քանի Ազգերի Դաշնակցությունը գործնականապես չի ապահովում փոքր ժողովուրդների պաշտպանությունը...

...Աշխատանքի եւ դրամագլխի անխուսափելի պայքարի մեջ մեր կառավարությունը պետք է կատարելապես, ռամկավար օրենսդրությամբ, զորավիգ լինի աշխատանքին եւ աշխատավորությանը...

...Կառավարության անդամներուն կեսեն ոչ պակասը կը նշանակվի արեւմտահայերեն» (ՀՅԴ 9-րդ Ընդ. ժողով, 1919 թ., Երեւան):

70 տարի առաջ, Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ Դաշնակցությունը վտարանդի կուսակցություն էր եւ մի կողմից ենթարկվում էր չեկիստական հալածանքների, իսկ մյուս կողմից՝ առաջնորդում էր ազգային ազատագրական պայքարը եւ ծավալում հայապահպանման գործը սփյուռքում, ՀՅԴ Ընդ. ժողովը որոշում էր ընդունում. «*...Միացյալ եւ Անկախ Հայաստանի գաղափարը կը մնա ՀՅ Դաշնակցության ծրագրի հիմնական նպատակը: Միացյալ եւ Անկախ Հայաստանի գաղափարը արգելք չի հանդիսանար սակայն, որ Դաշնակցությունը, իրական պայմաններու նկատառությամբ, իրականացնե հայրենիքի ազատագրության գործը՝ աստիճանաբար...*

...Մերժել որեւէ քաղաքական հակում (օրիանթասիոն) եւ թույլ չտալ, որ հայ ժողովուրդը գործիք դառնա որեւէ մեծ պետության ծրագիրներուն...

...Հակազդել գաղութներու մեկուսացման ձգտումին եւ արմատացնել այն գիտակցությունը, որ ընդհանուր ազգային շահերը պետք է գերադասել տեղականներեն. տոգորիլ գաղութահայ բազմությունը հայրենիքի գաղափարով եւ բոլոր կարելի միջոցներով սերտացնել անոր հոգեկան կապը երկրի ժողովուրդին հետ...

...Ամեն կերպ պայքարել ապազգայնացման եւ այլասերման վտանգին դեմ» (ՀՅԴ 13-րդ Ընդ. ժողով, 1938 թ., Կահիրե):

30 տարի առաջ, երբ Հայ դատի լուծման ուղղությամբ ծավալվող պահանջատիրությունը թեւակոխել էր ազգային ազատագրական պայքարի նոր հանգրվան, Ընդ. ժողովը ՀՅԴ վերամշակված ծրագրում առաջադրում էր. «*Հայ դատի լուծումը, փաստորեն, ոչ միայն արդարության, ցեղասպանության դատապարտության ու պատժարկման գործնական արտահայտություն է, այլեւ մարդկային եւ միջազգային իրավունքի հարց մը, ազգային ազատ ինքնորոշման իրավունքի անկապտելի սկզբունքի հիման վրա»* (ՀՅԴ 21-րդ Ընդ. ժողով, 1978 թ.):

20 տարի առաջ, երբ հայրենի ժողովուրդը, համազգային կամքով եւ թոթափելով խորհրդային ամբողջատիրության նկատմամբ ենթակայության մտակեցվածքը, ձգտեց Ղարաբաղի լիարժեք ազատագրության եւ վերամիավորման, ՀՅԴ Ընդ. ժողովը համոզում էր հայտնում. «*...ՀՅ Դաշնակցությունը կը վերահաստատե իր անմիջական պարտավորությունները հայրենի ժողովուրդին նկատմամբ,- լրիվ զորավիգ հանդիսանալ անոր տրամադրություններուն եւ ձգտումներուն, անոր ազգային ազատություններուն, ընկերային եւ քաղաքական պահանջներուն, ջանալ ամեն կերպով, որ առողջ եւ իրատես հունի մեջ մնա հայրենի պահանջատիրության շարժումը, զայն ապաժամ ու վտանգավոր նախաձեռնություններե հեռու պահելու նախանձախնդրությամբ...»* (ՀՅԴ 24-րդ Ընդ. ժողով, 1988 թ.):

10 տարի առաջ, երբ դեռ արգելափակված էր մնում Դաշնակցությունը ՀՀՇ-ական իշխանության օրոք, Ընդ. ժողովը ՀՅԴ մերամշակված ծրագրում հայտնում էր. «*Հայ հեղափոխական դաշնակցությունն իր էությամբ, աշխարհայացքով եւ ավանդներով ազգային, ընկերվարական, ժողովրդավարական եւ հեղափոխական կուսակցություն է:*

...Հայ հեղափոխական դաշնակցության համոզումով, ընկերվարության ճանապարհով է, որ մարդկային քաղաքական, տնտեսական եւ ընկերային զարգացումը օժտվում է արդար եւ համերաշխ հարաբերություններով...» (ՀՅԴ 27-րդ Ընդ. ժողով (արտակարգ), 1998 թ.):

Կար ժամանակ, երբ հակադաշնակցական թթու դեմքերը, ՀՅԴ Ընդհանուր ժողովների նախօրյակին կամ դրանցից հետո, սիրում էին կրկնել ու կրկնել, թե «այս մեկն արդեն դաշնակների վերջին ժողովն է»... Եղել են նաեւ պահեր, որ ամենանվիրված դաշնակցականներն անգամ, մտովի կամ անթաքույց, խորհել են, թե՝ «արդյո՞ք սա մեր վերջին Ընդհանուր ժողովն է»... Սակայն դժվարությունները հարթելու Դաշնակցության Ընդհանուր ժողովների հնարամտությունը այլեւս այսօր հուսախաբ է արել հակադաշնակցական «թթուներ»-ին, իսկ դաշնակցականներիս գոտեպնդել: Դժվար չէ նկատել, որ ՀՅԴ Ընդհանուր ժողովները մշտապես կուսակցության կամքը արտահայտող իրական թարգմանն են հանդիսացել:

"Դրօշակ" - ի հարցերին պատասխանում է << կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը

ԵՐԿՈՒ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՑՈՒՄ ՉՈՒԳԱՀԵՌՆԵՐ

«Դրօշակ» - Որպես պատմաբան ի՞նչ զուգահեռներ կգծեիք Հայաստանի Առաջին Հանրապետության և վերանկախացած Հայաստանի Հանրապետության միջև, որո՞նք են երկու պետությունների քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային առանձնահատկությունները:

Լ. Մ. - Իսկապես հետաքրքիր հարց է: Ամենակարևոր զուգահեռը, որ բնորոշում է Առաջին Հանրապետության և այսօրվա Հայաստանի Հանրապետության նմանությունը, դա այն է, որ երկու հանրապետություններն էլ ծնվեցին և ձևավորվեցին ազգային-ազատագրական պայքարի արդյունքում: Մեր Առաջին Հանրապետության ձևավորման հիմքում գոյապահպանության խնդիրն էր դրված, և հայ ժողովուրդն ստիպված էր ցեղասպանությունից հետո իր արևելյան ու արևմտյան բեկորները փրկելու համար դուրս գալ համազգային զինված պայքարի (Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա), իսկ նորօրյա Հայաստանի Հանրապետության անկախության հիմքում դրված էին Արցախյան ազատագրական պայքարն ու մեր երկրի սահմանների պաշտպանության կարևորագույն խնդիրները: Երկու հանրապետություններն էլ ի վերջո ձևավորվեցին ճգնաժամային իրավիճակում՝ համազգային կամքի և միասնության շնորհիվ: Հիմնական զուգահեռը թերևս սա է, իսկ մնացյալ համեմատությունները հիմնականում տարանջատումներն են: Բնական է, Հայաստանի Առաջին Հանրապետությունը ձևավորվում էր շատ ավելի բարդ և, կասեի, ողբերգական աշխարհաքաղաքական իրավիճակում, քան ներկա Հայաստանի Հանրապետությունը:

«Դրօշակ» - Մասնավորապես ինչպե՞ս կհամեմատեիք Հայաստանի Առաջին Հանրապետության լուսավորության նախարարությունը և ներկայիս ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

Լ. Մ. - Այս համեմատությունն արդեն ինքնին շատ պատվաբեր է: Նախ և առաջ հենց այն պատճառով, որ Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության, պետական մարմինների ձևավորումն սկսվեց զրոյական վիճակից, մի այնպիսի իրադրության մեջ, երբ մենք չունեինք նույնիսկ կուլտուր-ազգային ավտոնոմիայի փորձ, երբ

բուն պետությունն իսկ ձևավորվում էր Ռուսական կայսրությունից ժառանգություն մնացած մշակութային հալածանքների և անգամ հայկական պետական մտածողության բացակայության պայմաններում: Համաձայնեք, որ այս իրավիճակում ամենաբարդ խնդիրներն առաջանում էին նաև կրթության ու լուսավորության բնագավառում: Պատահական չէր, որ այս բնագավառը համակարգելու նպատակով ստեղծված գերատեսչությունը կոչվում էր հենց լուսավորության նախարարություն, քանի որ նախ պետք էր հուսահատված, գրեթե ոչնչացված, ապագայի նկատմամբ որևէ սպասելիք չունեցող զանգվածներին համոզել, որ իրենք ժողովուրդ են, որ իրենք ունեն ապագա և պետք է պետություն կառուցեն: Պարզապես անհամեմատելի վիճակներ են: Մեր այսօրվա հանրապետության պետական մարմինները սկսեցին ձևավորվել արդեն կայացած խորհրդային կառույցների հիմքի վրա: Մասնավորապես մեր նախարարության պարագայում առկա էր կրթական ու գիտական մեծ բազա՝ դպրոցներ, հզոր կրթական ցանց, համալսարաններ, պատկառելի գիտական ներուժ և, վերջապես, ուժեղ, հպարտ, ազգային գիտակցության եկած ժողովուրդ: Այդուհանդերձ, իմ կարծիքով, մենք չկարողացանք լավագույնս օգտագործել այդ մեծ պոտենցիալը: Ուստի, երբ հետ ես նայում, ուղղակի զարմանում ես, թե ինչպես 20-րդ դարասկզբին բոլոր առումներով բացասական իրավիճակներում կարողացան անձնազոհության գնով ձևավորել լուսավորության համակարգը: Այսինքն՝ եթե առաջին դեպքում եվրոպաներից և Ռուսաստանից հայրենիք վերադարձած մեր մտավորականների անձնազոհության ու նվիրվածության շնորհիվ հնարավոր եղավ լուսավորության կառույցներ ձևավորել՝ Մատենադարան, համալսարան, դպրոցներ, մշակութային հաստատություններ, գրադարաններ, ապա մեր դեպքում՝ պետք էր պարզապես փոխել արդեն իսկ եղածը: Տունը չքանդել, այլ փոխել բովանդակությունը, կրթությունը դարձնել ազգային: Բայց, ցավոք սրտի, մենք չկարողացանք դա այնպես անել, որ լիարժեք պահպանվեր նաև առկա պոտենցիալը: Մենք դժբախտաբար անցանք այնպիսի փուլեր, որոնց ընթացքում կրթության որակը անկում արձանագրեց: Կադրերի արտահոսք, շենքային պայմանների վատթարացում, շարունակական կրթության պայմանների անտեսում: Սրանք երևույթներ են, որոնցից մենք չկարողացանք խուսափել: Էլ չեմ ասում, որ եղավ մի փուլ, երբ նույնիսկ ազգային դպրոցի գաղափարն անգամ չէր շրջանառվում: Այդուհանդերձ մերօրյա Հայաստանի Հանրապետությանը հաջողվեց պահպանել գիտակրթական համակարգը: Դա էլ այն հենքն է, որի վրա գիտությունն ու կրթությունը պետք է զարգացնել ու համապատասխանեցնել միջազգային չափանիշներին:

«Դրօշակ» - Ըստ ամենայնի պետությունների անկախությունը, իր չափերով և որպիսությամբ համեմատական երևույթ է: Անդրկովկասյան երեք հարևան ժողովուրդներն անկախացել, խորհրդայնացել և ապա վերանկախացել են գրեթե միևնույն ժամանակագրությամբ, ենթարկվել են, կարծես, միևնույն ճակատագրին: Ձեր կարծիքով կարելի՞ է եզրեր որոնել երեք պետությունների անցյալ ու ներկա անկախությունների միջև:

Լ. Մ. - Ես արդեն վերևում նշեցի, որ մեր անկախության ձեռք բերման ճանապարհը մի շարք նմանություններ ունի Առաջին Հանրապետության ձևավորման ու ստեղծման հետ: Ցավոք, անկախացման գործընթացները նույնպիսի ընդհանրություններ արձանագրեցին նաև մեր երկու հարևանների պարագայում: Ադրբեջանում, օրինակ, թե առաջին և թե երկրորդ անգամ անկախության հռչակման գործընթացներն ուղեկցվեցին իրենց պատմական հայրենիքի տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների և հատկապես հայերի կոտորածներով, բռնի տեղահանություններով և ազգային խտրականության զանազան այլ դրսևորումներով: Մասնավորապես, Խորհրդային Ադրբեջանից անցումը ներկայիս անկախ Ադրբեջանին ուղեկցվեց Սումգայիթի և Բաքվի ջարդերով, Լեռնային Ղարաբաղի նկատմամբ զինված ագրեսիայով, Ադրբեջանի ողջ տարածքից կենսունակ հայ զանգվածի մասսայական տեղահանման տխուր երևույթներով, որոնք, անկասկած, իրենց դրոշմը թողեցին մեր հարևան երկրի անկախության կառուցման ճանապարհին:

Վրաստանն էլ իր հերթին փորձեց անկախություն կառուցել մեկի դեմ երրորդ կողմի հետ բարեկամանալու սկզբունքով: Սա, իհարկե, իմ անձնական տպավորությունն է, և Վրաստանն, ըստ իս, փորձեց գտնել հովանա-

1918 թ.

վորներ ընդդեմ մեկ ուրիշի: Եվ երբ դու անկախության ճանապարհին առաջնորդվում ես ընդդեմի գաղափարով, ապա միշտ էլ դժվարությունների ես հանդիպում: Դա է թերևս պատճառը, որ Վրաստանը, ունենալով փայլուն հնարավորություններ (բնակլիմայական պայմաններ, զարգացած տնտեսություն, աշխարհագրական շահեկան դիրք), չկարողացավ հասնել այն մեծ արդյունքներին, որոնք միանգամայն հասանելի էին:

1918-1920 թվականներին կատարվեց մի փորձ, որ թեև իր մեջ փայլուն գաղափար էր պարունակում, բայց որոշ շրջանակների նեղմտության, փոխադարձ թշնամության, ժողովուրդների՝ միմյանց նկատմամբ անվստահության պատճառով իրականություն չդարձավ:Դա Անդրկովկասյան Սեյմի ստեղծման գաղափարն էր, որ խեղաթյուրված ձևով փորձեց իրականացնել նաև Խորհրդային Միությունը՝ Անդրկովկասյան Ֆեդերացիայի տեսքով: Ի վերջո մենք պետք է հասկանանք, որ հարավկովկասյան ժողովուրդները դատապարտված են ապրելու կողք-կողքի: Հազարամյակներ շարունակ մենք վրացիների հետ ենք ապրել հարևանությամբ, որոշ շրջաններում նույնիսկ համատեղ պետություն ենք ունեցել, իսկ ահա մեր մյուս հարևանի՝ Ադրբեջանի հետ հարաբերություններում ավելի շատ արյունալի դեպքեր ենք արձանագրել: Չնայած այս հակասական իրադրությանը՝ համաշխարհային ներկա զարգացումների պայմաններում այլընտրանք միացյալ տնտեսական տարածքի, տարածաշրջանային խնդիրների համատեղ լուծման սկզբունքներին չկա: Վստահ ենք, որ վաղ թե ուշ այս տարածքը տնտեսական իմաստով պետք է դիտվի որպես մեկ միավոր: Արդեն իսկ երեք երկրներն էլ ներգրավված են Եվրոպայի հարևանության ծրագրում: Դա նշանակում է, որ Եվրոպան, նաև ամբողջ աշխարհը, Հարավային Կովկասը դիտում է որպես մեկ տնտեսական միավոր: Ուստի որքան շուտ մեր երեք ժողովուրդները հասու լինեն այս խնդրին և հասկանան, որ ոչ թե առճակատումը, այլ դիմացինի իրավունքները հարգելն է բանալին նոր հարաբերություններ կառուցելու, այնքան ավելի շուտ մեր տարածաշրջան մուտք կգործեն բարեկեցությունն ու բարգավաճումը, և այն կդառնա աշխարհի թերևս ամենածաղկուն և ամենահմայիչ անկյունը: Չմոռանանք նկատել նաև, որ մեր երեք ժողովուրդներն էլ տնտեսական առումով խիստ գործունյա ու կենսունակ են: Եկեք նայենք Ռուսաստանում և եվրոպական մի շարք երկրներում նրանց հաջողություններին ու պարզ կդառնա, որ նման ներուժի պայմաններում, ունենալով նաև այսքան

2008 թ.

կարևոր աշխարհագրական ու ստրատեգիական դիրք, չկարողանալ Հարավային Կովկասը վերածել բարեկեցիկ տարածաշրջանի, պարզապես անքույլատրելի շռայլություն է երեք երկրների կողմից: Երևի թե արդեն ժամանակն է, որ մենք մեր հարևաններից պահանջենք փոխել վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ, որովհետև, ի վերջո, բոլորից շատ անիրավությունների զոհ է դարձել ու ամենամեծ կորուստները տվել է հենց հայ ժողովուրդը: Եվ սա՝ բոլոր առումներով. և հայ-թուրքական, և հայ-ադրբեջանական, և հայ-վրացական հարաբերություններում: Ուստի որքան շուտ մեր հարևանները գիտակցեն, որ այս վիճակն իրենց ևս օգուտ չի բերում, որ իրենք ևս զրկվում են փայլուն հեռանկարներից այս պատճառով, այնքան արագ արդարությունն ու բարեկեցությունը կհասնեն մեր տարածաշրջան: Այսօր այդ արդարությունը խախտված է տարածաշրջանում, որովհետև բնիկ ժողովուրդներից մեկը դեռևս զրկված է իր հայրենիքի մեծագույն մասից և, ավելին, այն հատվածում, որտեղ դեռ գոյատևում է որպես ժողովուրդ, լուրջ խնդիրներ ունի: Այս հարցում անելիքներ ունեն նաև այն երկրները, որոնք Հայաստանը տեսնում են իրենց գլոբալ ծրագրերում (Եվրամիություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ռուսաստան): Նրանք պարզապես պարտավոր են այս մեծ ճշմարտությունը հասկացնել նաև մեր հարևաններին, եթե ցանկանում են Հարավային Կովկասը տեսնել որպես կայուն ու զարգացող տարածաշրջան:

«Դրօշակ» - Հայաստանի Առաջին Հանրապետության կարճատև գոյությունն այլևս պատմություն է և, ինչպես ամեն մի պատմություն, արժանի է յուրացման և հետնորդներին իր դասը, իր փորձը փոխանցելու առաքելությունն ունի: Սակայն, ինչպե՞ս է իրագործելու իր առաքելությունը, եթե դեռևս յուրացված չէ, եթե մեր ժողովրդի մեծ մասը կամ անտեղյակ է պատմության այդ ժամանակահատվածին և կամ տեղյակ է միայն խորհրդային կեղծ պատմագրության էջերին: Թե Սփյուռքում և թե մեզանում հրատարակվող գրականությունը (ուսումնասիրություններ, հուշեր, հուշապատումներ) լայն արձագանք չի գտնում, որովհետև մեր պատմության նկատմամբ հետաքրքրությունը մարել կամ մարում է հենց դպրոցում:

Կրթության համակարգում ի՞նչ է արվում և կամ ի՞նչ պիտի արվի այս իրավիճակը շտկելու համար: Կրթության համակարգի բարեփոխման գործընթացը որքանո՞վ է նպաստում ազգային պատմության պատշաճ մակարդակի յուրացմանը:

Լ. Մ. - Ամբողջ աշխարհում կրթության բնագավառի կարևորագույն խնդիրներից մեկը թերևս այն է, որ դաստիարակի քաղաքացիների այնպիսի սերունդ, որոնք իրենց հետագա կյանքի ու գործունեության ընթացքում կարողանան ցուցաբերել անհրաժեշտ մակարդակ: Բայց, առանձին վերցրած յուրաքանչյուր երկրի կրթական համակարգ կատարում է նաև մեկ այլ կարևոր ֆունկցիա. դա այդ ժողովրդի, այդ հասարակության տեսլականի շարունակական գոյության ապահովումն է, քանզի կրթության համակարգը չի կարող միայն տվյալ պահի խնդիրներով առաջնորդվել: Կրթությունը պետք է նայի առաջ և կարողանա ժողովրդին տանել իր հետևից՝ որոշակի երազի իրականացման ճանապարհով, որն ամենևին չի նշանակում ժողովրդին հողից կտրել: Իմ կարծիքով՝ անկախ Հայաստանի կրթական համակարգն իր առջև միշտ էլ պետք է երազի որոշակի ծողաչափ ունենա: Այսօր մենք, պայմաններից ելնելով, կառուցում ենք մեր անկախ պետականությունը պատմական Հայաստանի մի փոքր տարածքում և դեռևս փորձում ենք պահպանել ու ամրացնել այն, ինչ որ ունենք՝ Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Անկախության ամրապնդման ճանապարհը երկար է: Ժողովուրդներ կան, որ հարյուրամյակներ են քայլել այդ ճանապարհով՝ գիտակցելով, որ իրենց անքակտելի իրավունքն է իրենց պատմական բնօրրանի ողջ տարածքում ունենալ անվտանգ, անկախ պետական գոյություն: Այս երազը, այս գաղափարը սերնդից սերունդ փոխանցելուն է հենց կոչված կրթական համակարգը: Մենք էլ մեր հերթին պետք է կարողանանք պահել այդ գաղափարը և փոխանցել մեր երեխաներին, որոնք վաղը պետք է դառնան Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Նրանք պետք է վստահություն ունենան, որ ի վերջո, ինչ-որ մի պահի արդարությունը կվերականգնվի: Սա ամենևին էլ չի նշանակում հարևանների հանդեպ թշնամանքի սերմանում, մատաղ սերնդի խեղում: Ընդհակառակը, սա նշանակում է իր խնդիրը լի-

արժեքորեն գիտակցող սերունդ ունենալ, որը շատ բաց է, պատրաստ է համագործակցելու, այլ կերպ ասած՝ աշխարհաքաղաքացի է, բայց և գիտակցում է, որ ինքը, իբրև մի ազգի ներկայացուցիչ, ապրելով մյուս ազգերի հարևանությամբ, ունի չլուծված խնդիրներ և իր ոտնահարված իրավունքների հետապնդողն է: Սա հատկապես հստակ երևում է Սփյուռքի մեր հայրենակիցների չորրորդ, հինգերորդ սերնդի շրջանում: Լեզուն գրեթե կորցրած, ամբողջությամբ տվյալ երկրի կենցաղը յուրացրած, այդ երկրի բարքերով ապրող հայ երիտասարդը օտար պետության դրոշակով (Ֆրանսիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների) պահանջում է իր ազգի իրավունքների ճանաչումը: Այս երևույթն իր էության մեջ, իմ կարծիքով, խիստ համամարդկային է: Մենք պետք է հասկանանք, որ այն, ինչ տեղի ունեցավ մեր ժողովրդի հետ, համամարդկային ողբերգություն էր, և միայն մեր ողբերգությունը չէր: Սա ի վերջո միջհամայնքային խնդիր չէ, երբ, ասենք, հայկական համայնքը ցույց է կազմակերպում իր իրավունքների պաշտպանության կոչերով, իսկ հարևան փողոցում դրա դեմ հակացույց է անում թուրքական համայնքը, որովհետև ողբերգությունն ինքնին ազգային տարողունակությունից դուրս է: Վերն ասվածը, ինչպես նաև հայրենիքի հզորացման, հայրենիքը սիրելու, ժողովրդին հարգելու գաղափարախոսության շարունակական փոխանցումը սերունդներին Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Սփյուռքի կրթական համակարգերի կարևորագույն խնդիրն է: Դրա իրականացման համար կոնկրետ քայլեր են անհրաժեշտ: Մենք այսօր ունենք հայոց պատմության շատ հզոր ներկայություն դպրոցական ծրագրում, դասավանդվում է եկեղեցու պատմությունը, լուրջ հիմքերի վրա է հայոց լեզվի և հայ գրականության ուսուցումը: Օրենքով ամրագրված են այս առարկայախմբին հատկացված ժամաքանակները թե հանրակրթության և թե բարձրագույն կրթության համակարգերում, նաև հստակեցված, որ դրանց ուսուցումը պետք է ավարտվի քննությամբ: Պետք է նկատել, սակայն, որ չնայած այդ ամենին, հայագիտությունն ամբողջությամբ վերցրած, այսօր կարիք ունի արմատական և որակական փոփոխությունների: Գիտական առումով այս բնագավառը հայտնվել է իսկական ճգնաժամային վիճակում: Մենք այլևս չենք տեսնում միջազգային ճանաչում ունեցող հայագետների, չենք տեսնում մասնագետների, որոնք կկարողանան միջազգային խոշոր գիտաժողովներում պաշտպանել իրենց գիտական թեզերը, օտարազգի գիտնականների շրջանում չենք տեսնում հետաքրքրություն՝ զբաղվելու հայագիտությամբ: Այս ամենի մասին անհրաժեշտ է խոսել, բարձրաձայնել, որպեսզի ընդհանուր մտահոգության պայմաններում լուծումներ գտնվեն: Այլապես, եթե մենք շարունակենք ինքնագովությամբ զբաղվել, ես դա շատ մեղմ եմ ասում, և առատորեն դոկտորների աստիճաններ ու ակադեմիկոսների կոչումներ շռայլել, ապա մեր գիտական հետազոտություններն այդպես էլ կմնան միջազգային չափանիշներից շատ հեռու: Մենք պետք է հայագիտությունը գրավիչ դարձնենք հատկապես օտարների համար: Պետք է հասնել նրան, որ արևելագիտությամբ զբաղվող ցանկացած եվրոպացի իր համար պատիվ համարի հայերենի իմացությունը, որպեսզի կարողանա հասու լինել առկա հարուստ գիտական, պատմական ու գրական ժառանգությանը: Սա նշանակում է, որ այս ոլորտում մենք պետք է ակտիվ հարձակողական քաղաքականություն վարենք՝ հայագիտական ամբիոնների ցանցի ձևավորում տարբեր համալսարաններում, պետական որոշակի ծրագրերի իրականացում այդ ամբիոններում և այլն: Մեր հարևան Թուրքիան, օրինակ, վաղուց այդ քաղաքականությունը վարում է պետական մակարդակով: Այս ուղղությամբ մենք հանգուցյալ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի աջակցությամբ արդեն մի քայլ կատարել ենք: Մոտ երկու տարի առաջ Եգիպտոսում՝ Կահիրեի համալսարանում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվեց հայագիտական ամբիոնը: Տեղի հայ համայնքը, ոգևորված այդ իրադարձությամբ, հետագայում ստանձնեց այդ ամբիոնի գործունեության հետ կապված հիմնական ծախսերը: Այս փաստն արդեն խոսում է այն մասին, որ պետության կողմից բարոյական աջակցությունն էլ բավական է գործը տեղից շարժելու համար: Ես արդեն ասացի, որ հայոց պատմությանն ու հայագիտությանն առնչվող մյուս գիտաճյուղերի դասավանդումն այսօր նույնիսկ օրենքով է պաշտպանված: Բայց դա ընդամենը առաջին քայլն է: Դասավանդվող հայագիտական առարկաների լավ մշակված ծրագրեր ունենալը, դասախոսների կողմից նյութի մատչելի մատուցումը, ուսա-

նողների շրջանում տվյալ առարկայի, ասենք՝ հայոց պատմության նկատմամբ սեր ու հետաքրքրություն առաջացնելը խնդիրներ են, որոնք նորմատիվ ակտերով հնարավոր չէ իրականացնել: Դրա համար անհրաժեշտ է ունենալ նոր մեթոդաբանությամբ զինված պրոֆեսորադասախոսական կազմ՝ բաղկացած նվիրյալ մարդկանցից, ովքեր ի զորու կլինեն երիտասարդ սերնդի մեջ վերարթնացնել սերը դասավանդվող առարկայախմբի նկատմամբ:

Բոլորովին էլ պարտադիր չէ, ասենք, բնագիտական ֆակուլտետներում հայոց պատմության դասավանդումը տանել զուտ չոր ու ցամաք թվերի իմացության: Ընդամենը պատմական մի գեղեցիկ դրվագի մասին խոսելով՝ դասախոսը կարող է շատ ավելի մեծ արդյունքի հասնել, քան թե ուսանողին ստիպի անգիր անել Արշակունյաց թագավորների գահակալության թվականները: Իհարկե, դա ևս պետք է իմանալ, բայց այս կարգի մանրամասնությունները ավելի շատ մասնագիտական բուհերի ու ֆակուլտետների խնդիրներն են: Եվրոպայում, օրինակ, քանի մարդ գիտի, որ Մարիամ Աստվածածնի գերեզմանը, որ քրիստոնյա աշխարհի համար մեծագույն սրբավայրերից է, պահել, պահպանել և մարդկությանն է փոխանցել Հայ եկեղեցին: Մեր եկեղեցին այսօր էլ շարունակում է իրականացնել այդ առաքելությունը: Այս կարգի ինֆորմացիայի պատշաճ ձևով ներկայացումը, ես սա արդեն ասում եմ որպես պատմաբան ու մանկավարժ, շատ ավելին կարող է տալ հայագիտությանը, քան, ասենք, զանազան լեզուներով գրված տասնյակ գրքեր ու աշխատություններ:

«Դրօշակ» - Չե՞ք կարծում, որ Ձեր ղեկավարած նախարարությունը միջոցներ և հնարավորություններ պիտի գտնի պատմությունը լուսաբանող, արտածրագրային, օժանդակ և այլ կարգի հանրամատչելի գրականություն ստեղծելու համար:

Լ. Մ. - Սա նախորդ հարցի տրամաբանական շարունակությունն է և, պետք է ասեմ, շոշափում է ամենացավոտ խնդիրներից մեկը: Լավ գրականության ու դասագրքերի պակաս մենք դեռևս շատ ունենք, և դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Խորհրդային Միության տարիներին մեզանում դասագրքերի ստեղծման պրակտիկա գրեթե չի եղել: Դասագրքերը կազմվում էին Մոսկվայում, և դրանց թարգմանություններն էին, որ դրված էին մեր երեխաների սեղանին: Հիշենք, թեկուզ, Խորհրդային Հայաստանի դպրոցներում դասավանդվող Հայոց պատմության ու Հայաստանի աշխարհագրության նիհար ու խեղճ դասագրքերը: Սակայն դասագրքերի որակի բարձրացման և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման ուղղությամբ լուրջ քայլեր արդեն ձեռնարկվում են: Մասնավորապես «Մակմիլան» հրատարակչության գործընկերակցությամբ հրատարակել ենք Հայոց պատմության և Հայաստանի աշխարհագրության քարտեզախումբը հանրակրթական դպրոցների համար: Սա փաստորեն առաջին ազգային քարտեզախումբն է, որ մեր երեխաներին հնարավորություն է տալիս քարտեզի վրա տեսնել Հայաստանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ ազատագրված տարածքներով: Նմանատիպ գրականությունը միանշանակ ընդունելի է: Մենք պետք է այսուհետ էլ շարունակենք ուժեղացնել ու ամրապնդել ուսումնաօժանդակ գրականության բազան:

Ամենամեծ բացը մենք ունենք նախադպրոցական և կրտսեր դպրոցի փուլերում: Հայտնի բան է, որ երեխան որ-

պես մարդ ձևավորվում է չորսից տասը տարեկան հասակում, և ինչ որ ցանում ես այդ տարիներին, այն էլ ծլարձակում է նրա մեջ: Վեճ կա, օրինակ, ինչպե՞ս կրտսեր դպրոցի երեխային փոխանցել ցեղասպանության մասին առաջին պատկերացումները: Այստեղ զուտ մոտեցման խնդիր կա: Իսրայելում, օրինակ, դա արվում է մանկապարտեզային տարիքում, և այդ գործընթացն ամենևին էլ չի խաթարում երեխայի հոգեկան աշխարհը: Պարզապես դու պետք է երեխային աստիճանաբար մոտեցնես գաղափարին, հմտություններ հաղորդես նրան՝ աշխարհը ընկալելու: Այստեղ է, որ մեզ անհրաժեշտ են համապատասխան ուսումնաօժանդակ նյութեր ու գրականություն, մինչդեռ մենք նույնիսկ այդպիսիք ստեղծելու ունակ մասնագետներ չունենք: Եթե մենք շարունակելու ենք գնալ յոթանասունական թվականներին ընդունված՝ նկարազարդ գրքույկների հրամցման միջոցով երեխայի մեջ ինչ-ինչ հետաքրքրություններ առաջացնելու ճանապարհով, ապա միանշանակ կձախողվենք ու հետ կմնանք, քանզի արդեն առաջին դասարանցի մանչուկը համակարգչի միջոցով կարողանում է ստանալ Դիսնեյի կամ Հոլիվուդի նախադպրոցական փաթեթներն ամբողջությամբ: Որպեսզի մրցունակ գտնվենք և կարողանանք այդ տարիքի մեր երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնել նաև մեր ազգային արժեքների նկատմամբ, նախ և առաջ պետք է ընդունենք, որ մեր երեխաների մտածողությունն ու աշխարհընկալումը զգալիորեն տարբերվում են մեր այդ նույն

հատկանիշներից: Այդ տարբերության գիտակցումն ու կրթության համակարգում ժամանակակից մեթոդների ու տեխնիկայի կիրառումն այսօր չափազանց կարևոր է որակյալ արտադրանք տալու համար: Ասեմ, որ այժմ արդեն Համաշխարհային բանկի ծրագրով փորձում ենք ստեղծել համակարգչային դասագրքեր, որոնցով ուսուցումը կտարվի խաղային մեթոդներով: Այս բնագավառի առաջնեկները կլինեն հայոց լեզվի և գրականության վիրտուալ դասագրքերը:

«Դրօշակ» - Բոլորովին վերջերս ՀՀ Ազգային ժողովը հաստատեց կառավարության առաջիկա գործունեության ծրագիրը: Որքանո՞վ են կրթության և գիտության բնագավառի խնդիրները ներգրավված այդ ծրագրում:

Լ. Մ. - Առանց երկմտելու կարող եմ ասել, որ այդ ծրագրի, դրական իմաստով, ամենահավակնոտ բաժինը վերաբերում է կրթությանն ու գիտությանը: Այդ ծրագրով մեր կառավարության առջև իբրև գերակա խնդիր է դրված Հայաստանը դարձնել տարածաշրջանային նշանակության գիտելիքահենք հասարակություն ունեցող կրթական տարածք: Սա մինչև օրս եղած ամենաբարձր ձողաչափն է, որ զուգահեռաբար դրված է նաև գիտության բնագավառի առջև: Կրթության համակարգը հատկապես, բավականին նուրբ ու զգայուն ոլորտ է, ուր կատարվող ամեն մի քայլ, թե ճիշտ և թե սխալ, իրեն զգացնել է տալիս տևական ժամանակ անց: Ուստի վտանգ կա, որ ակամա մենք կարող ենք վնաս հասցնել գալիք սերունդներին: Ահա թե ինչու այս համարձակ ծրագրերի իրագործման համար մենք պետք է առաջնորդվենք հետևյալ բանաձևով՝ չքանդել ոչինչ և փորձել եղածի վրա կառուցել այն, ինչ որ մենք երազում ենք: Այլապես մենք կարող ենք հայտնվել ավերակների մեջ, որոնց վրա որևէ բան կառուցելը կդառնա անհնարին:



ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վլադիմիր Գրիգորյան
Բենիամին Միրզոյան
Հայաստանի պետական ագրարային համալսարանի պրոֆեսորներ

Արդկային հասարակության գոյությունն ու զարգացումն անհնար է պատկերացնել առանց անհրաժեշտ քանակությամբ սննդամթերքի արտադրության: Սակայն հողը սահմանափակ ռեսուրս է, մինչդեռ աշխարհի բնակչության արագ աճը վերջին 50 տարում պարենի նկատմամբ համաշխարհային պահանջարկը բարձրացրել է 4 անգամ: Սովը և կիսաքաղց գոյատևումը բնորոշ են դարձել աշխարհի բնակչության գրեթե 2/3-ի համար: Սննդամթերքի, հատկապես ցորենի, համաշխարհային գների անընդհատ բարձրացումը լուրջ խնդիր է դրել նաև մեր հանրապետության առջև, պահանջելով կտրուկ միջոցառումներ ձեռնարկել ագրոպարենային ամբողջ համալիրի զարգացման ու արդյունավետության բարձրացման բնագավառում:

Փորձենք համառոտ ներկայացնել հանրապետության պարենային ապահովության արդի վիճակը և գյուղատնտեսության զարգացման այն ուղիները, որոնք կարող են ապահովել երկրի պարենային անվտանգությունը:

Հացի խնդիրը

Մարդու լիարժեք գործունեության համար անհրաժեշտ է բնակչության մեկ շնչի հաշվով արտադրել մեկ տոննա հացահատիկ, որից մոտ 70 %-ն օգտագործվում է որպես անասնակեր: Սակայն աշխարհի գյուղատնտեսությունը բնակչության մեկ շնչի հաշվով արտադրում է շուրջ 300 կգ հացահատիկ, որի հաշվին ապահովվում է մարդկության սննդի պահանջի 56 %-ը: Մեկ կիլոգրամ հացը պարունակում է մոտ 2500 կկալ էներգիա, այսինքն՝ այնքան, որքան անհրաժեշտ է մարդու գոյատևման համար:

«Մի կտոր հաց, այն էլ երկնքից կախված»,- այսպիսին է եղել հայ ռամիկի իրավիճակը մեր լեռնոտ ու քարքարոտ բնաշխարհում: Հայաստանի ներկայիս տարածքում 1913 թ. բնակվել են 1 մլն. մարդ, որից մոտ 90 %-ը՝ գյուղական բնակչություն: Ամբողջ ցանքատարածությունների և այգիների տարածքների (359,3 հազ. հա) մոտ 86 %-ը (308,5 հազ. հա) զբաղեցրել են հացահատիկային մշակաբույսերը: Սակայն բերքատվությունը եղել է խիստ ցածր (5,6 ց/հա) և բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվել է 174 կգ հացահատիկ (օրական 477 գրամ):

Այնուհետև հաջորդում են պատերազմի, ցեղասպանության, զանգվածային ներգաղթի, տառապանքների ու սովի տարիները և միայն ՆԷՊ-ի շրջանում հայ գյուղացին ոտքի է կանգնում, զբաղվում ակտիվ հողագործությամբ ու անասնապահությամբ: Բնակչության մեկ շնչի հաշվով 1928 թ. արդեն արտադրվել է ավելի քան 300 կգ հացահատիկ: Ստալինյան համատարած ու բռնի կոլեկտիվացումն իր հետ բերում է սով ու թշվառություն: Հայաստանում 1940 թ. բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվել է ընդամենը 173 կգ հացահատիկ: Սովը և հացի հերթերն ուղեկցել են նաև պատերազմի ու հետպատերազմյան առաջին տասնամյակում: Պարենային հարցը Խորհրդային Միությունում այդպես էլ մնաց չլուծված:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Հայաստանում հացահատիկի ցանքատարածությունները 1950 և 1990 թթ. միջև ընկած ժամանակաընթացքում կրճատվել են 2,3 անգամ, բայց բերքատվության բարձրացման հաշվին ավելացել է արտադրությունը, հասնելով մոտ 300 հազ. տոննայի: Բանն այն է, որ հացահատիկի արտադրությունը մեր հանրապետության բնակլիմայական պայմաններում արդյունավետ չէր, իսկ ոռոգվող հողատարածքներում առավել մեծ եկամտաբերություն էին ապահովում բանջարա-բոստանային մշակաբույսերը, խաղողը և տարբեր տեսակի մրգերը:

Քանի որ Խորհրդային Հայաստանի բնակչությունն աճում էր գրեթե 2 անգամ ավելի արագ տեմպերով, քան Խորհրդային Միությունում՝ ամբողջությամբ վերցրած, ապա հացի խնդիրը գնալով բարդանում էր, ամբողջովին կախման մեջ լինելով Միության գյուղատնտեսության իրավիճակից: Տարեկան ներմուծվում էր գրեթե 1 մլն. տ հացահատիկ, որի հիման վրա զարգանում էր նաև ինտենսիվ անասնաբուծությունը:

Անկախության տարիներին խզվեցին բոլոր տեսակի փոխադարձ տնտեսական կապերը, նորից մի կտոր հացի խնդիրը մնաց օդից կախված: Հողի սեփականաշնորհումը ինչ-որ չափով փրկեց գյուղացուն համատարած սովից, ստիպելով նրան իրեն պատկանող հողակտորում առաջին հերթին ցանել ցորեն ու կարտոֆիլ, պահել 1-2 մթերատու անասուն: Գյուղատնտեսությունը դարձավ բնամթերային, հիմնված ձեռքի աշխատանքի վրա:

Վիճակագրական տվյալներով, հացահատիկի ցանքատարածությունները մինչև 2005 թ. ունեցել են ավելացման միտում (1991-2005 թթ.՝ 52 %): Նույն ժամանակաընթացքում կարտոֆիլի ցանքատարածությունն ավելացել է 54 %-ով: Այսօր Հայաստանը դարձել է կարտոֆիլ արտահանող երկիր, մինչդեռ հացահատիկի ներմուծման խնդիրը չի մեղմացել, չնայած հացահատիկային մշակաբույսերը զբաղեցնում են ցանքատարածությունների ավելի քան 60 %-ը:

Նկատելի դրական տեղաշարժ չի նկատվում նաև հացահատիկի բերքատվության բարձրացման գործում, քանի որ փոքր հողակտորների վրա չեն ապահովվում ցանքաշրջանառության պայմանները, սահմանափակ են պարարտացման, մելիորացման հնարավորությունները, սերմնաբուծական տնտեսությունները քայքայվել են: Հացահատիկի բերքն ու բերքատվությունն ամբողջովին կախված են տվյալ տարվա եղանակի քմահաճույքից:

Աղյուսակ 1

Հացահատիկի արտադրության և բերքատվության տատանումները

	1995	1996	1997	1998	2004	2005	2006	2007
Արտադրություն (հազ.տ)	254.3	318.8	258.2	325.7	456.9	396.2	212.5	452.5
Բերքատվություն (g/h)	15.2	17.9	16.0	19.4	22.8	19.4	13.3	25.7

Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ

Չնայած Արարատյան ոռոգվող դաշտավայրի ցանքատարածության գրեթե 50 %-ը զբաղեցնում է հացահատիկը, հանրապետությունում, ամբողջությամբ վերցրած, քիչ թե շատ կայուն հացահատիկի բերք չի ստացվում: Այնուամենայնիվ, վերջին տարիների արդյունքներն ավելի հուսադրող են. հացահատիկի արտադրությունը 2004-2007 թթ., 1995-1998 թթ. համեմատությամբ ավելացել է 31,2, իսկ բերքատվությունը՝ 18,7 %-ով:

Եթե ընդունենք, որ հանրապետության բնակչության թվաքանակը կմնա անփոփոխ (3,2 մլն. մարդ), ապա սնունդի համար պահանջվում է արտադրել շուրջ 500 հազ. տ ցորեն: Այսպես, 2004 թ. բարենպաստ տարում ցորենի արտադրությունը կազմել է 291,6 հազ. տ, իսկ ներմուծումը 410,3 հազ. տոննա: Նույն տարում սննդի համար օգտագործվել է 508,8 հազ. տ ցորեն, կամ օրական մեկ շնչի հաշվով՝ 464 գրամ, որի կալորիականությունը կազմել է 1486 կկալ: Փաստորեն հացի հաշվին ապահովվում է սպասվող սննդամթերքների կալորիայի 55%-ը:

Որքան ավելանում են ընտանիքի եկամուտները, այնքան ավելի քիչ հաց է օգտագործվում: Բնակչության մեկ շնչի հաշվով 1996 թ. սպառվել է օրական 450 գրամ ցորենի հաց և ալյուր, իսկ 2006 թ.՝ 395 գրամ:

Հայը հացակեր ժողովուրդ է: Եվ քանի որ Հայաստանի բնակչության մի զգալի մասի գնողունակությունը դեռևս խիստ ցածր է, ապա հացամթերքի գների բարձրացումը բացասաբար է անդրադառնում աղքատության հաղթահարման հիմնախնդրի լուծման վրա: Ընդ որում, գյուղացին նման պարագայում կարող է խուսափել ծայրահեղ աղքատությունից, իսկ քաղաքացին՝ ոչ:

Պարենային ապրանքների գները և բնակչության գնողունակությունը

Ներկայումս պարենային շուկայում կարելի է գնել ցանկացած սննդամթերք: Ընդ որում, առաջարկը գերազանցում է բնակչության գնողունակ պահանջարկը, որը, սակայն, չի խանգարում հայրենական ու ներմուծվող պարենային ապրանքների գների բարձրացմանը: Դա ընդհանուր օրինաչափություն է, չնայած լինում են որոշակի տատանումներ: Ուշագրավ է նաև այն փաստը, որ պարենային ապրանքների գներն աճում են ավելի արագ տեմպերով, քան ոչ պարենային ապրանքներինը, և նույնիսկ ծառայությունների սակագները: Այսպես, վերջին 6 տարում (2002-2007 թթ.) սպառողական գները հանրապետությունում աճել են 22,4 %-ով, այդ թվում պարենային ապրանքներինը (առանց ոգելից խմիչքների և ծխախոտի)՝ 34,6, ոչ պարենային ապրանքներինը՝ 5,7, ծառայությունների սակագները՝ 13,9 %-ով:

Իրենց հերթին պարենային ապրանքների գները նույնպես անհամաչափ են բարձրանում: Նույն 6 տարում պարենային առանձին ապրանքների գների աճն ունեցել է հետևյալ պատկերը (2007 թ., 2001 թ. համեմատությամբ, 2001 թ.=100):

Հացամթերք	- 128,8
Մսամթերք	- 131,5
Կաթնամթերք	- 112,2
Ձկնամթերք	- 551,2
Կենդանական ու բուսական յուղեր	- 117,4
Ձու	- 145,3
Բանջարեղեն և կարտոֆիլ	- 155,9
Միրգ	- 207,2
Շաքարավազ	- 103,0
Սուրճ, թեյ, կակաո	- 108,6
Հրուշակեղեն	- 111,0
Ոչ ոգելից խմիչք	- 120,0
Ոգելից խմիչք և ծխախոտ	- 95,2

Վիճակագրական այդ տվյալները թույլ են տալիս նկատել հետևյալ օրինաչափությունները:

1. Պարենային ապրանքների գների անհամաչափ բարձրացումը չի պայմանավորված դրանց արտադրության ու ներմուծման գործոններով: Ավելին, ընդհանուր առմամբ, հայրենական արտադրության պարենային ապրանքների գները բարձրացել են ավելի արագ տեմպերով, քան ներմուծվող ապրանքներինը: Տիպիկ օրինակ կարող է ծառայել ձուն, որի պահանջարկը լիովին ապահովվում է թռչնաբուծական խոշոր ձեռնարկությունների արտադրության հաշվին: Նույնը վերաբերում է բանջարեղենի, կարտոֆիլի, մրգի գների կտրուկ բարձրացմանը, որոնց արտադրությունը վերջին տարիներին զգալիորեն ավելացել է:

2. Գյուղատնտեսությունում անընդհատ բարձրանում են արտադրական ծախքերը, որոնք ստիպում են գյուղացուն համապատասխանորեն ավելացնել արտադրանքի գները: Իր հերթին՝ շուկայում իշխում են միջնորդները, որոնք իրենց գներն են թելադրում թե՛ գյուղացուն (ցածր) և թե՛ քաղաքացուն (բարձր): Սննդի վերամշակման ձեռնարկությունները նույնպես գյուղացու արտադրանքը գնում են 2-3 անգամ ցածր գներով, քան իրենք են վաճառում խանութներին (օրինակ, անարատ կաթը գնվում է մեկ լիտրը 80-120 դրամով, բայց փաթեթավորված վիճակում վաճառվում 300-350 դրամով): Վերջին հաշվով, արտադրողին բաժին է ընկնում իր իսկ կողմից արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացումից ստացված համախառն եկամտի միայն 20-25 % -ը:

3. Սննդամթերքի նկատմամբ պահանջարկի ավելացման և գների աճի վրա անդրադառնում է նաև բնակչության գնողունակության բարձրացումը: Բավական է նշել, որ նույն 6 տարում (2002-07թթ.) հանրապետության բնակչության դրամական եկամուտներն ավելացել են 2,5, իսկ միջին ամսական անվանական աշխատավարձը՝ ավելի քան 3,1 անգամ: Դա իր հերթին նպաստել է սննդամթերքների ծախսերի կառուցվածքի դրական փոփոխությանը: Այսպես, տնային տնտեսությունների սննդամթերքների (նե-

ռառյալ ալկոհոլային խմիչքները և ծխախոտը) ծախսերի կառուցվածքում հացի և հացամթերքների բաժինը 1999 թ. կազմել է 32,2, իսկ 2006թ.՝ 21%, մինչդեռ մսեղենի, կաթնամթերքի և ձվի բաժինը 22,9-ից բարձրացել է մինչև 31,7%:

Ինֆլյացիան, անկասկած, տհաճ, բայց անխուսափելի երևույթ է: Հատկապես ցավագին է ընդունվում պարենային առաջին անհրաժեշտության ապրանքների գների բարձրացումը, դառնալով նաև քաղաքական շահարկումների առարկա: Փորձենք վիճակագրական տարեգրքերում բերված տվյալների հիման վրա ցույց տալ, թե միջին ամսական աշխատավարձով ինչքան սննդամթերք կարելի էր գնել 1996, 2000 և 2007 թվականներին:

	1996	2000	2007
Միջին ամսական աշխատավարձ(դրամ)	9469	22706	76922
Միջին ամսական աշխատավարձով կարելի է գնել (կգ)			
Հաց ցորենի ալյուրից բ/տ	55.7	88.3	282
Տավարի միս	9.4	22.5	49.6
Կենդանական յուղ	6.5	16.1	43.5
Շաքարավազ	35.5	98.6	288.1
Կարտոֆիլ	71.8	212.8	327.3
Պանիր (չանախ)	9.1	18.4	54.8
Բրինձ	49.4	74.0	212.5
Խնձոր	42.8	107.2	167.6
Ձու (տասնյակ)	20.0	58.1	133.1

Ինչպես տեսնում ենք, միջին ամսական աշխատավարձով 2007 թ. կարելի էր գնել 5-6 անգամ ավելի առաջին անհրաժեշտության պարենային ապրանքներ, քան 11 տարի առաջ: Ընդ որում, եթե դիտարկենք ոչ պարենային առաջին անհրաժեշտության ապրանքները, ապա դժվար չէ նկատել, որ բնակչության լայն խավերի գնողունակությունն ավելի շատ է բարձրացել: Սակայն, ամբողջությամբ վերցրած, հանրապետության բնակչության գնողունակությունը, հետևապես նաև սպառումը, դեռևս չի հասել նախկին մակարդակին ու հեռու է բավարար լինելուց: Դրա հիմնական պատճառը ոչ թե ինֆլյացիան է, այլ այն փաստը, որը 1991-1996 թթ. բնակչության լայն խավերի գնողունակությունն իջել էր ավելի քան 10 անգամ: Այսպես, 1990 թ. բանվոր-ծառայողների միջին ամսական աշխատավարձով (241 ռուբ.) հնարավոր էր գնել առնվազն 500 կգ հաց: Իսկ եթե հաշվի առնենք նաև սպառման հանրային ֆոնդերից ձրի և արտոնյալ հավելավճարները, ապա բնակչության գնողունակությունն ավելանում էր ևս 1/3-ով: Պարզապես այն ժամանակ գնողունակ պահանջարկն անհամեմատ գերազանցում էր պարենային ապրանքների առաջարկը:

Պարենային ինքնաբավության աստիճանը և արտաքին առևտուրը

Յուրաքանչյուր երկրի պարենային ապահովության գնահատման ընթացքում կարևորվում է բնակչության կողմից սպառվող սննդի կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեցող ապրանքների ինքնաբավության աստիճանը: Որքան տվյալ երկիրն ավելի լիարժեք է բավարարում բնակչության պահանջարկը սեփական արտադրության հաշվին և արտահանում տվյալ սննդամթերքը, այնքան բարձր է ինքնաբավության աստիճանը:

Այսպես, 2007 թ. արտադրվել է 33375 տոննա տավարի միս: Միաժամանակ ներմուծվել է 6063,6 տ և արտահանվել 854,4 տ տավարի միս: Ընդամենը ռեսուրսները

կազմել են 38584,2 տ (33375,0+6063,6-854,4): Հետևապես, տավարի մսի ինքնաբավության աստիճանը կազմել է. 33375,0 / 38584,2 * 100 = 86,5%: Մինչդեռ հավի մսի ներմուծումը գերազանցել է արտադրությունը 4,9 անգամ և ինքնաբավության աստիճանը կազմել մոտ 17%: Ամբողջությամբ վերցրած տավարի, խոզի, հավի մսի ինքնաբավության աստիճանը 2007 թ. կազմել է 56,4%, ցորենինը՝ 37,6, կարագինը՝ 22,2, պանրինը՝ 97,9, ձվինը՝ 100, ծխախոտինը՝ 53,5%: Մի շարք պարենային ապրանքներ (ձեթ, շաքարավազ, սուրճ, թեյ, բրինձ, ցիտրուսային մրգեր և այլն) գրեթե ամբողջությամբ ներմուծվում են:

Ակնհայտ է, որ Հայաստանի բնակլիմայական պայմանները թույլ չեն տալիս լիարժեք բավարարել բնակչության պահանջները բոլոր տեսակի պարենային ապրանքներով: Ուստի գյուղատնտեսությունը պետք է մասնագիտանա ու զարգանա այնպիսի ուղղություններով, որոնք արտաքին առևտրի բնագավառում ապահովում են հարաբերական առավելություններ:

Այսպես, 2007 թ. կոնյակի արտադրությունը հասել է 14,1 մլն. լիտրի, որից 13,1 մլն. լիտրն արտահանվել է, բերելով հանրապետությանը 88,3 մլրդ. դրամի հասույթ: Համեմատության համար նշենք, որ նույն տարում 421,2 հազ. տ ցորեն ներմուծելու համար վճարվել է 65,6 մլրդ. դրամ: Եթե կոնյակի արտադրությունը գերազանցում է նախկինում ձեռք բերված ամենաբարձր մակարդակը, ապա խաղողի գինու արտադրությունը 2006 թ. կազմել է 1985 թ. 57,6 %-ը, պահածոներինը՝ 15,8, հրուշակեղենինը՝ 18,3, երշիկեղենինը՝ 58,4, պանրինը՝ 55,8, սիգարետներինը՝ 23,6 %:

Վիճակագրական այդ տվյալները ցույց են տալիս, որ հանրապետությունը լայն հնարավորություններ ունի մի շարք սննդամթերքների արտադրությունն ընդլայնելու և դրանց արտահանումն ավելացնելու համար: Հետևյալ գծապատկերից երևում է, որ պարենային ապրանքների արտաքին առևտրի հաշվեկշիռը շարունակում է մնալ խիստ բացասական:

Ագրոպարենային ապրանքների արտահանման և ներմուծման դինամիկան
(մլն. ԱՄՆ դոլար)



Գծապատկեր 1 Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ-ի տեղեկագրերը

Տվյալ գծապատկերն արտացոլում է ընդհանուր օրինաչափությունը, բայց ոչ պարենային ապրանքների ներմուծման ու արտահանման իրական ծավալների փոփոխությունը, քանի որ դոլարի փոխարժեքը (դրամի նկատմամբ) մինչև 2003 թ. ունեցել է բարձրացման, այնուհետև կտրուկ իջեցման միտում: Սակայն ակնհայտ է այն փաստը, որ ագրոպարենային ապրանքների ներմուծման ու արտահանման տարբերությունը 1998 թ. կազմել է 13,3:1, 2002 թ.՝ 2,5:1, իսկ 2007 թ.՝ 3,1:1:

Այս տվյալներից հետևում է, որ հանրապետության գյուղատնտեսությունը և սննդի արդյունաբերությունը, չնայած վերջին տարիներին զարգացման որոշակի միտում են ցուցաբերում, այնուամենայնիվ, չեն բավարարում բնակչության աճող գնողունակ պահանջարկը:

Պարենի պահանջը և մատչելիությունը

Պարենային ապահովությունն ընտանիքի մակարդակով պահանջում է բացահայտել, թե ովքեր, որ տնային տնտեսությունները և բնակչության որ խմբերը չեն ստանում ռացիոնալ նորմաներով սահմանված սնունդ: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կառուցվածքի, դրանց ընդհանուր էներգետիկան օրական կազմում է 2412,1 կկալ, որի արժեքը 2007 թ. չորրորդ եռամսյակի ընթացիկ միջին գներով 23143,2 դրամ է:

Եթե մի պահ ընդունենք, որ հանրապետության բնակչությունը միջին հաշվով սնվում է ռացիոնալ նորմայով, ապա 2007 թ. դրությամբ կսպառվեր ոչ թե 571 հազ. տ, այլ 415 հազ. տ հացամթերք, իսկ մեկ շնչի հաշվով տարեկան այդ նպատակով կծախսվեր ոչ թե 66,8 հազ., այլ 49,8 հազ. դրամ: Դրա փոխարեն զգալիորեն կավելանան կենդանական ծագում ունեցող սննդամթերք ձեռք բերելու ծախսումները:

Ռացիոնալ նորմայով սնվելու պարագայում հանրապետության բնակչության (3,2 մլն.) պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է տարեկան արտադրել կամ ներմուծել հետևյալ քանակությամբ սննդամթերք (հազ. տ).

Հաց	292.2
Պանիր	29.1
Ալյուր	23.4
Կարտոֆիլ	292.2
Մակարոնեղեն	17.6
Բանջարեղեն	350.4
Ձավարեղեն (բրինձ)	58.6
Միրգ	233.6
Ընդեղեն (լոբեղեն)	23.4
Շաքար	58.6
Մսամթերք (տավարի միս)	116.8
Ձու (մլն. հատ)	584.0
Կաթ (հազ. լիտր)	233.6
Բուսական յուղ	23.4
Կաթնաշոռ	12.0
Մարգարին	11.8
Կենդանական յուղ	23.4
Ձուկ	35.2

Այս տվյալներից կարելի է անել մի շարք հետևություններ:

1. Պարենային ինքնաբավության աստիճանը և արտաքին առևտուրը ձևավորվում են բնակչության գնողունակ պահանջարկի հիման վրա: Մինչդեռ բնակչության պահանջարկը ռացիոնալ նորմաներով բավարարելու դեպքում հանրապետության կախվածությունն արտաքին շուկայից էլ ավելի կուժեղանա, եթե համապատասխանորեն չավելանա հանրապետության գյուղատնտեսական արտադրանքը:

2. Պարենի առկայությունը, անկախ նրանից, թե այն ստացվել է արտադրության, պահուստների փոփոխության, արտահանման, ներմուծման, մարդասիրական օգնության միջոցով, դեռևս չի երաշխավորում հասարակության բոլոր անդամների պարենային անվտանգությունը: Գոյություն ունի պարենային (ծայրահեղ) աղքատության գիծ, որի դրամական արժեքը մեկ չափահաս անձի հաշվով 2006 թ. ամսական կազմել է 14,3 հազ., իսկ 2007 թ. աշնանը՝ 19,9 հազ. դրամ, մինչդեռ 522,7 հազ. կենսաթոշակառուների ամսական կենսաթոշակի միջին չափը 2006 թ. կազմել է 10912, իսկ 2007 թ.՝ 12746 դրամ: Չնայած վերջին տարիներին աղքատությունը Հայաստանում կրճատվել է ավելի քան 2 անգամ, բնակչության 26,5 %-ը կամ 850 հազ. մարդ դեռ աղքատ են, իսկ նրանցից մոտ 130 հազարը՝ ծայրահեղ աղքատ (2006 թ. դրությամբ):

3. Եթե հաշվարկների համար հիմք ընդունենք ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդի սպառման նորման, ապա պարենային զամբյուղի արժեքը կբարձրանա 29,5 %-ով և ծայրահեղ աղքատության մեջ գտնվող մարդկանց թվաքանակը կավելանա առնվազն 1/3-ով: Մյուս կողմից, իրական աշխատավարձի ու թոշակների բարձրացումը մատչելի է դարձնում 2412,1 կկալ պարունակող սննդամթերքի գնումը և սպառումը: Խնդիրը կայանում է նրանում, թե տվյալ անձը կամ ընտանիքն իր եկամտի որ մասը կծախսի սննդամթերքի գնման համար և ինչ ռեսուրսների հաշվին պետությունը կապահովի բնակչության աճող գնողունակ պահանջարկը:

Գյուղատնտեսական արտադրության ներուժը

Արդյո՞ք, Հայաստանի սուղ հողային ռեսուրսները հնարավորություն են ընձեռում լիարժեք կերակրել 3 մլն.

մարդ, թե ոչ: Եթե դիտարկենք վիճակագրական տվյալները, ապա հողօգտագործման արդյունավետությունը նույնիսկ գերազանցում է 1986 թ. գյուղատնտեսության զարգացման ամենից բարձր մակարդակը: Սակայն բնեղեն ցուցանիշների համադրումը ցույց է տալիս, որ գյուղատնտեսական արտադրության նախկինում ձեռք բերած ներուժը դեռևս չի վերականգնվել:

Հաշվարկները ցույց են տալիս, որ անգամ Արարատյան հարթավայրի պոտենցիալ հնարավորություններն օգտագործվում են 20-25 %-ով: Պարզապես մանր գյուղացիական տնտեսությունները չեն կարող լինել արդյունավետ ու մրցունակ և ապահովել երկրի պարենային անվտանգությունը: Համեմատության համար բերենք հետևյալ վիճակագրական տվյալները: Հանրապետությունում 2007 թ. դրությամբ գործում են 83 առևտրային կազմակերպություններ, որոնցում աշխատում են 2226 մարդ: Յուրաքանչյուր աշխատողի հաշվով թողարկվել է 8387 հազ. դրամ գյուղատնտեսական արտադրանք, մինչդեռ բնակչության տնտեսությունների ամեն մի աշխատողին միջին հաշվով ընկնում է 1230 հազ. դրամի արտադրանք:

Այսօր մի քանի թռչնաբուծական խոշոր ձեռնարկություններ փաստորեն լուծել են ձվի գնողունակ պահանջարկի ապահովման խնդիրը: Սակայն գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ առևտրային կազմակերպությունների տեսակարար կշիռը շարունակում է մնալ խիստ ցածր, կազմելով հազիվ 3 %: Հետևապես պարենային հարցի լուծման մայրուղին մանր գյուղացիական տնտեսությունների խոշորացումն ու կոոպերացումն է, որը սակայն չպետք է հանգեցնի գյուղի քայքայմանը և ֆեոդալական հարաբերությունների վերականգնմանը:

Ի դեպ՝ մեր վերլուծությունը լիովին հաստատում է ՀՅ Դաշնակցության նախընտրական ծրագրի հիմնադրույթների հիմնավորվածությունը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է «Արտահանման խրախուսման ազգային ռազմավարական ծրագրի» մշակմանը և իրականացմանը, որի գլխավոր նպատակներն են.

աստիճանաբար նվազեցնել երկրի կախվածությունը հացահատիկի, անասնակերի, մսամթերքի և կաթնամթերքի արտադրության համար անհրաժեշտ հումքի ներմուծումից,

խրախուսել արտահանման այն ոլորտները, որոնք ունեն հարաբերական առավելություններ, ընդլայնելով գյուղատնտեսական մթերքների իրացման հնարավորությունները, զարգացնելով գյուղական վայրերում գյուղմթերքների վերամշակման փոքր ու միջին ձեռնարկատիրական գործունեությունը,

ընդլայնել գյուղացիական տնտեսությունների ֆինանսավորման ու վարկավորման ծավալները, խրախուսելով մանր գյուղացիական տնտեսությունների միջև կոոպերացիայի կապերի ընդլայնումը, ինչպես նաև համատեղ տընտեսավարման եղանակների կիրառումը:

Կասկածից վեր է, որ այսօր առանց խոշոր կապիտալ ներդրումների հնարավոր չէ վերականգնել ու բարելավել գյուղատնտեսական ենթակառուցվածքները՝ ոռոգման համակարգը, միջհամայնքային ճանապարհները, իրականացնել լայնածավալ մելիորատիվ աշխատանքներ, գյուղատնտեսական աշխատանքը զինել նոր տեխնիկայով, բարձրացնել մշակաբույսերի բերքատվությունը և անասունների մթերատվությունը:

Անկասկած, գյուղատնտեսության ոլորտում վերջին տարիներին նկատվում են որոշակի դրական միտումներ, բայց դրանք ավելի շատ պայմանավորված են բնական, քան տնտեսական գործոններով: Առանձնապես հետ է մնում անասնապահությունը, մինչդեռ կենդանական ծագում ունեցող մթերքների նկատմամբ պահանջարկը գնալով ավելանում է:

Այսպես, գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ անասնապահության տեսակարար կշիռը 1986-1988 թթ. կազմել է 51,7, իսկ 2005-2007 թթ.՝ 36,2 %: Նման իրավիճակի պատճառն այն է, որ սեփականաշնորհման ընթացքում ոչնչացվեցին անասնապահական խոշոր համալիրները, շրջանառությունից դուրս մղվեցին կերային մշակաբույսերը: Ներկայումս ձևավորվում են անասնապահական խոշոր ֆերմերային տնտեսություններ, բայց նրանք չունեն համապատասխան կերային ու նյութատեխնիկական բազա և պետության ակտիվ տնտեսական աջակցության կարիք են զգում:

Գյուղատնտեսության և ամբողջ ագրոպարենային համակարգի զարգացման հիմնախնդրով զբաղվում են գիտահետազոտական ինստիտուտները և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը: Ներկայումս արաջնահերթ խնդիր է համարվում հայրենական արտադրության հաշվին ապահովել ցորենի պահանջարկը: Տվյալ հոդվածում մենք փորձեցինք վերլուծել հանրապետության պարենա-

յին անվտանգության իրավիճակը և կանխանշել այն ուղիները, որոնք հնարավորություն կտան ագրոպարենային ապրանքների արտաքին առևտրի հաշվեկշիռը դարձնել դրական, միաժամանակ բավարարելով բնակչության հարաճուն պահանջմունքը սննդամթերքի նկատմամբ:

«ՀՀ պարենային անվտանգության հիմնախնդիրները» խորագիրը կրող հոդվածի մասին

Հայաստանի պետական ագրարային համալսարանի պրոֆեսորներ Վլ. Գրիգորյանի եւ Բ. Միրզոյանի հոդվածը նվիրված է երկրի ազգային անվտանգության հիմնական եւ կարեւորագույն բաղադրիչին՝ Հայաստանի պարենային անվտանգության հիմնախնդիրներին:

Հոդվածի առանձնահատկությունը այն է, որ հեղինակները անդրադարձել են պարենային անվտանգության վրա ազդող ներկայիս գործոնների գնահատմանը եւ վերլուծությանը: Վերջիններիս նախորդել է, որոշակի պատմական ժամանակահատվածում (1913 թ.-ից), պարենապահովման իրավիճակին անդրադարձը:

Հեղինակները վերլուծելով վերջին տարիներին պարենային ապրանքների գների եւ բնակչության գնողունակության փոփոխության միտումները, բացահայտել են որոշակի պատճառներ, որոնք պայմանավորել են պարենային ապրանքների գների բարձրացումը:

Հոդվածի ուշագրավ մասերից է պարենամթերքի ինքնաբավության աստիճանի եւ արտաքին առեւտրի վերաբերյալ վերլուծությունը: Այստեղ հեղինակների կարեւոր հետեւությունն այն է, որ Հայաստանի գյուղատնտեսությունը պետք է մասնագիտանա ու զարգանա այնպիսի ուղղություններով, որոնք արտաքին առեւտրի բնագավառում ապահովում են հարաբերական առավելություններ, եւ հանրապետությունը լայն հնարավորություններ ունի մի շարք սննդամթերքների արտադրությունն ընդլայնելու եւ դրանց արտահանումն ավելացնելու ուղղությամբ:

Արժեքավոր են հեղինակների հաշվարկներն ուղղված ռացիոնալ նորմաներով սնվելու դեպքում պահանջվող սննդամթերքների ծավալների գնահատմանը եւ վերջինից բխող հետեւությունները:

Հոդվածի կարեւոր արդյունքն հետեւյալն է. հեղինակները գտնում են, որ անհրաժեշտ է հանրապետության գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի օգտագործման բարելավման միջոցով նվազեցնել երկրի կախվածությունը հացահատիկի, անասնակերի, մսամթերքի եւ կաթնամթերքի արտադրության համար հումքի ներմուծումից, խրախուսել հարաբերական առավելություններ ունեցող ոլորտները, ագրարային փոքր ու միջին ձեռնարկատիրությունը, կոոպերացված գործունեությունը եւ այլն:

Պետք է նշել, որ վերջին ամիսներին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը առավել մեծ ուշադրություն է դարձնում առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացման հիմնախնդիրների ծրագրային մոտեցմանը, հետեւաբար հոդվածի որոշ դրույթներ կարող են օգտակար լինել նախարարության կողմից նախաձեռնված՝ ՀՀ գյուղատնտեսության զարգացման եւ հիմնական պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացման 2008-2012 թթ. ազգային ծրագրի նախագծի մշակման գործընթացում:

Հրաչյա Օպանեցյան

ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի Գյուղատնտեսության եւ գյուղի սոցիալական զարգացման ծրագրավորման վարչության պետ, տնտեսագիտության դոկտոր

ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆ ՀԱՐՑՈՒՄ

Սուրեն Պարսյան
ՀՊՏՀ ուսանող

Շուկայական հարաբերություններին անցման գործընթացում Հայաստանի Հանրապետության տնտեսությունը բախվեց որակապես նոր խնդիրների, որոնցից կարևորագույնների թվում առանձնանում է արդյունավետ հարկային քաղաքականության իրականացումը: Վերջինս, բացի ֆիսկալ գործառույթից, կոչված է նպաստելու արտադրական ներուժի լիարժեք օգտագործմանը և գերակա ոլորտների զարգացման խթանմանը:

Այժմ Հայաստանի Հանրապետությունում գործող հարկային համակարգը տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն է տալիս գործել հետևյալ հարկային ռեժիմներում.

ա) ընդհանուր կարգով հարկման ռեժիմ,

բ) պարզեցված հարկով հարկման ռեժիմ,

գ) հաստատագրված վճարով հարկման ռեժիմ:

«Պարզեցված հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ներդրվեց 2000 թ. հուլիսի 1-ից: Այդ օրինագծի նախնական անվանումն էր՝ «Փոքր ձեռնարկատիրության պարզեցված հարկի մասին», այսինքն ի սկզբանե այդ հարկատեսակի ներդրման նպատակը փոքր ձեռնարկատիրության համար բարենպաստ հարկային պայմանների ստեղծումն էր: Այն համահունչ էր նաև 2000 թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված «Փոքր և միջին ձեռնարկատիրության մասին» ՀՀ օրենքին:

Եթե ընդհանուր կարգով հարկման ռեժիմում հարկ վճարողները գործ են ունենում ավելացված արժեքի (ԱԱՀ), շահութահարկի (եկամտահարկի) հետ, ապա պարզեցված հարկման ռեժիմի դեպքում դրանց փոխարինում է մեկ հարկատեսակ՝ պարզեցված հարկը:

Արդյունքում՝ հարկ վճարողի համար հարկերի հաշվարկումը դառնում է շատ ավելի պարզ, նվազ ժամանակատար, պակաս աշխատատար:

Պարզեցված հարկ վճարողներն ընթացիկ եռամսյակի համար հարկը հաշվարկում են իրացման շրջանառության նկատմամբ՝ հետևյալ դրույքաչափերով.

խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության մասով՝ 3,5 %.

վարձակալության մասով՝ 10 %.

նոտարական գործունեության մասով՝ 20 %.

այլ գործունեության մասով՝ 5 %:

Պարզեցված հարկի հաշվարկում հաշվի չեն առնվում հարկ վճարողի կողմից կատարված ծախսերը:

2008 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտան «Պարզեցված հարկի մասին» օրենքի մի շարք փոփոխություններ, որոնց արդյունքում պարզեցված հարկ վճարողների մի մասը դադարում է հանդիսանալ պարզեցված հարկ վճարող և տեղափոխվում է ընդհանուր հարկման դաշտ: Այս փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկման ռեժիմից դուրս մնացին մեր տնտեսության համար այնպիսի գերակա ոլորտներ, ինչպիսիք են արտադրությունը և տուրիզմը:

Պարզեցված հարկման ռեժիմում մնացին միայն առևտրային այն կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք միայն մեկ վայրում են իրականացնում նշված գործունեության տեսակները.

1. Մանրածախ վաճառք,
2. Նոտար,
3. Կոշիկի նորոգում,

4. Բնական և արհեստական կաշվից ճամփորդական և գալանտերեային ապրանքատեսակների նորոգում,

5. Կենցաղային էլեկտրասարքերի նորոգում,

6. Ժամացույցների նորոգում,

7. Հագուստի նորոգում,

8. Մորթե և կաշվե հագուստի, գլխարկների նորոգում,

9. Գորգերի և գորգագործական արտադրատեսակների նորոգում,

10. Հեծանիվների նորոգում,

11. Հովանոցների, վառիչների, լուսավորման սարքավորումների, զբոսաշրջության, սպորտային գույքի և հանդեր ծանքի նորոգում, գազայրիչների լիցքավորում, կտրող գործիքների, դանակային արտադրատեսակների սրում,

12. Թաղումների կազմակերպում և դրա հետ կապված ծառայություններ,

13. Տնային տնտեսությունների վարում սպասարկու անձնակազմի կողմից,

14. Ինտերնետ ակումբների միջոցով բնակչությանը մատուցվող ինտերնետային ծառայություններ,

15. Այլ կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի վարձույթ,

16. Պատրաստի համակարգչային ծրագրային ապահովման սպասարկում,

17. Գրասենյակային մեքենաների և հաշվողական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում,

18. Գործավարական և թարգմանչական ծառայություններ,

19. Բացառապես գյուղական բնակավայրերում մրգերի և բանջարեղենի վերամշակում, կաթնամթերքի արտադրություն (բացառությամբ պաղպաղակի),

20. Արվեստի բնագավառի, թատերական և համերգային դահլիճների գործունեություն, տիկնիկային թատրոնների գործունեություն:

Օրինակ, եթե մեկ կրպակում՝ միևնույն վայրում, իրականացվում է կոշիկի և կաշվե հագուստի նորոգում, որոնք երկուսն էլ ընդգրկված են նույն կազմակերպության մեջ, առևտրային ձեռնարկությունները կամ անհատ ձեռներեցները կարող են հանդիսանալ պարզեցված հարկ վճարող: Հաջորդ փոփոխությամբ՝ պարզեցված հարկ վճարողը չի կարող միաժամանակ հանդիսանալ հարկման ընդհանուր կարգով կամ հաստատագրված վճարներով հարկվող: Այսինքն, պարզեցված հարկ վճարողն աշխատում է միայն և միայն պարզեցված հարկման ռեժիմում:

2008 թ. հունվարի 1-ից պարզեցված հարկման դաշտից դուրս են գալիս նաև բոլոր այն առևտրային կազմակերպությունները, որոնք ունեն մեկ կամ մի քանի ներկայացուցչություն կամ մասնաճյուղեր:

Հաջորդ փոփոխությամբ պարզեցված հարկ վճարողները դադարում են հանդիսանալ այդպիսին, եթե տարվա որևէ պահին իրականացնում են ներմուծում՝ «ներմուծման ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով:

Օրենքի փոփոխության պաշտոնական հիմնավորումները

1. Ինչպես հայտնի է, պարզեցված հարկման ռեժիմը ներդրվել էր փոքր և միջին ձեռնարկատիրության համար պարզ և բարենպաստ հարկային դաշտ ստեղծելու նպատակով: Սակայն, ինչպես փորձը ցույց տվեց, այդ ռեժիմից սկսեցին օգտվել ավելի խոշոր հարկ վճարողներ՝ արհեստականորեն նվազեցնելով իրենց վճարած հարկերը:

2. Փոփոխությունների անհրաժեշտության մասին բարձրաձայնել են նաև մի շարք միջազգային կազմակերպություններ:

Փոփոխությունների հետևանքները

Ինչպես բազմաթիվ օրենքներ, այնպես էլ Պարզեցված հարկի մասին օրենքի փոփոխությունները իրականացվեցին առանց խորը և մանրակրկիտ վերլուծությունների, ինչը հնարավորություն կտար բացահայտելու և գնահատելու այս փոփոխությունների հետևանքները: Իմ հետազոտության ընթացքում փորձեցի պարզել համապատասխան իրավասու մարմիններից, թե գոյություն ունի՞, արդյոք, որևէ վերլուծություն. պատասխանը բացասական էր: Հետաքրքիրն այն իրողությունն է, որ չկարողացան տրամադրել մոտավոր տվյալներ պարզեցված հարկման ռեժիմում աշխատող տնտեսվարող սուբյեկտների թվի, ինչպես նաև փոփոխությունների հետևանքով ակնկալվող մուտքերի չափի վերաբերյալ:

«Պարզեցված հարկի մասին» օրենքի փոփոխությունների դրդապատճառը խոսում է այն մասին, որ ՀՀ կառավարությունը՝ ի դեմս Հարկային ծառայության, անկարող է բացահայտել և ընդհանուր հարկման դաշտ բերել խոշոր այն տնտեսվարող սուբյեկտներին, որոնք չարամտորեն թաքցնում են իրենց իրական շրջանառությունը պարզեցված հարկման ռեժիմում մնալու համար: Սակայն այս փոփոխության արդյունքում տուժում են բազմաթիվ ՓՄՁ-ներ: Առաջացող լուրջ դժվարությունները հետևյալն են.

1. Հարկային բեռի ծանրաբեռնվածություն

Եթե նախկինում ՓՄՁ սուբյեկտները վճարում էին իրացման շրջանառության 3,5, 5, 10 կամ 20 տոկոսը (կապված գործունեության տեսակից), ապա ընդհանուր հարկման դաշտ գալով՝ նրանք բացի ԱԱՀ-ից վճարելու են նաև եկամտահարկ կամ շահութահարկ 20 տոկոսի չափով:



ՓՄՁ սուբյեկտների բնորոշ գծերից մեկն այն է, որ նրանք իրենց գործունեության ընթացքում կատարած բոլոր ծախսերը չեն կարողանում հիմնավորել, քանի որ մեծ թվով ապրանքներ և ծառայություններ ձեռք են բերում անլեգալ շուկաներից կամ տնային տնտեսություններից, որոնք գրանցված չեն որպես տնտեսվարող սուբյեկտ և հետևաբար չեն կարող ՓՄՁ սուբյեկտին տալ ծախսը հիմնավորող փաստաթուղթ (չեկ կամ հաշիվ-ապրանքագիր), որի հետևանքով ստիպված են լինում թաքցնել իրական շրջանառությունը:

2. Հաշվապահության բարդացում

Ընդհանուր հարկման դաշտ անցնելով՝ ՓՄՁ սուբյեկտների կողմից վարվող հաշվապահությունը բարդանում է, ինչը լրացուցիչ ծախսեր է պահանջում հաշվապահ վարձելու համար:

Սակայն, որպեսզի այս անցումը հնարավորինս փափուկ և անցնցում լինի, նշեմ նաև, որ օրենքում ներառվել է դրույթ, որը նման հարկ վճարողներին թույլ է տալիս ֆինանսական հաջորդ երկու տարիների ընթացքում վարել **պարզեցված հարկային հաշվառում** (այդ թվում՝ ապրանքանյութական արժեքների գրանցումների մասով):

Իմ կարծիքով՝ ճիշտ մոտեցումը կլիներ այն, որ տնտեսվարող սուբյեկտին հնարավորություն տրվեր ընտրելու, թե որ հարկային ռեժիմում է նախընտրում աշխատել՝ ընդհանո՞ւր, թե՞ պարզեցված: Այս սկզբունքի կիրառումը այլընտրանքի հնարավորություն կտար և կմեղմեր տնտեսվարող սուբյեկտների բողոքը: Հաշվի առնելով, որ պարզեցված հարկման ռեժիմը ավելի գրավիչ է, քան ընդհանուրը, նպատակահարմար է բարձրացնել պարզեցված հարկի դրույքաչափերը, ինչը հնարավորություն կտար ավելացնել հարկային մուտքերը:

Մեր տնտեսությունը կայացման փուլում է, և այս ընթացքում անհրաժեշտ է վարել ճկուն հարկային քաղաքականություն, քանզի անմտածված և կտրուկ քայլերի հետևանքով մեր երկրի տնտեսությունը, որ վերջին շրջանում զարթոնք է ապրում, կարող է կանգնել տնտեսական լուրջ ճգնաժամի առջև:

Մասնագետի մեկնաբանություն

Այս տարի պարզեցված հարկի հարցը դարձավ բազմաթիվ, այդ թվում՝ քաղաքական շահարկումների առարկա: Փորձենք հարցին անդրադառնալ օբյեկտիվորեն, ներկայացնելով հիմնախնդրի իրական՝ «ստվերային» կողմը:

Մեր երկրում փոքր բիզնեսի տեսանկյունից «տիպային» համարվող մեկ խանութի օրինակով այս երկու հարկատեսակներով հարկելու տարբերակների մոդելավորումը վկայում է, որ ավելացված արժեքի հարկով աշխատելու դեպքում տնտեսվարողը վճարելու է բյուջե ավելի քիչ գումար, քան պարզեցված հարկի դեպքում: Հետևաբար առաջանում է հարց. «Ինչո՞ւ են տնտեսվարողները ձգտում մնալ պարզեցված հարկի դաշտում»:

Պարզեցված հարկի դաշտում գործող գործարարների բացարձակ մեծամասնությունը իրականում ունի ավելի մեծ շրջանառություն, քան օրենքով սահմանված տվյալ հարկի համար թույլատրելի շեմն է՝ 50 մլն. դրամ: Հարկատուն այս դեպքում վճարում է իր հարկի չափը, իսկ հարկային տեսուչների այցելությունների դեպքում պատրաստակամորեն տուգանվում 75, իսկ այնուհետև՝ 150 հազար դրամի չափով՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների (ՀԴՄ) կիրառման կանոնները խախտելու համար: Եվ որքան ուզում ես բարձ-

բացրու պարզեցված հարկի դրույքաչափը, միևնույն է, տնտեսվարողը չի հրաժարվի այդ հարկատեսակից, քանի որ ինքը չի պատրաստվում ցույց տալ ամբողջ շրջանառությունը:

Այդ տնտեսվարողների իրական պրոբլեմը ոչ թե ավելացված արժեքի հարկն է, այլ այն, որ տվյալ հարկատեսակով աշխատելու դեպքում նրանք չեն կարողանում ձեռք բերել ԱԱՀ-ի հաշվանցման համար այդքան անհրաժեշտ հաշիվ-ապրանքագիրը: Ավելի ճիշտ, նրանք վաճառողից ստանում են նման հաշիվ, սակայն այնտեղ նշված է ոչ թե իրական գինը, այլ իրականից ցածր այն գումարը, որը ցանկանում է մատակարարը: Արդյունքում՝ տնտեսվարողը չկարողանալով հաշվառել և հաշվանցել իր կողմից փաստացի վճարված գումարները, *ստիպված* է լինում ունենալ ստվերային շրջանառություն: Հենց այստեղ է այն մեծ տարբերությունը, որ առկա է տեսականորեն և փաստացի հաշվարկվող ԱԱՀ-ի միջև:

Կառավարությունը իհարկե ճիշտ է, երբ ասում է, որ պարզեցված հարկը դարձել է ստվերի օջախ, բայց մինչև վերջ անկեղծ չէ, քանի որ չի ասում ինչու: Եվ երբ տնտեսվարողները ասում են, որ իրենք օրինապահ հարկատուներ են և ուղղակի ԱԱՀ-ի դեպքում ստիպված են լինելու ավելի շատ հարկ մուծել, նույնպես անկեղծ չեն:

Հիմնախնդիրը ունի մի քանի լուծում.

1. Վերադարձնել օրենքին նախկին տեսքը: Դա նշանակում է՝ պետությունը պատրանք է ստեղծելու, որ մտածում է փոքր և միջին բիզնեսի մասին, պարզեցվածով աշխատողները ցույց կտան միայն շրջանառության «ընդունելի» հատվածը, հարկայինը կշարունակի «ՀԴՄ խփել» (տուգանել), խոշոր ներկրողները կամ արտադրողները՝ ներկայացնել այնպիսի հաշիվներ, որոնք կբողարկեն իրենց իրական շրջանառությունը:

2. Պետական շրջանակներում ներկայումս քննարկվում է ԱԱՀ վճարող դառնալու համար որոշակի շեմ սահմանելու հարցը: Այսինքն՝ ԱԱՀ վճարեն միայն նրանք, ում շրջանառությունը գերազանցում է որոշակի չափը: Սակայն պրոբլեմը կմնա չլուծված: ՓՄՁ-ն չի վճարի ԱԱՀ և այդ շեմին մոտենալու դեպքում սկսելու է թաքցնել շրջանառությունը: Իսկ նրանք, ովքեր փաստացի գներից ցածր գներ են նշում ապրանքագրում, շարունակելու են իրենց գործը:

3. Մի մոտեցում մեզ ներկայացրել են մի խումբ գործարարներ, որոնք նախկինում աշխատում էին պարզեցվածով, իսկ այսօր՝ ընդհանուր կարգով: Նրանք առաջարկում են պարբերաբար՝ ամիսը մեկ անգամ, հրապարակել ապրանքների գների տեղեկագիր: Այս դեպքում ոչ թե կեղծ թվերով տրված հաշիվ-ապրանքագիրը, այլ տեղեկագրում նշված գինը (որոշ թույլատրելի միջանցքով) հիմք կհանդիսանա ԱԱՀ-ի հաշվանցողների համար: Ավելի էժան գներով վաճառք իրականացնողը կարող է դա անել հարկային մարմիններին տեղեկացնելով, և հետագայում ճշգրտում մտցնելով տեղեկագրում: Այս մեխանիզմի կիրառման դեպքում օրինապահ ԱԱՀ վճարողները գնդակը տեղափոխում են անօրինականների դաշտ: Եվ պետությունը իր հարկերի կորուստները ստիպված է լինելու որոնել կեղծ հաշիվ-ապրանքագրեր տվող տնտեսվարողների մոտ: Նման տարբերակի կիրառման հիմնական դժվարությունը համապատասխան տեղեկագրի պարբերաբար թողարկումն ու թարմացումն է:

4. Վերջապես՝ հիմնական լուծումը կայանում է նրանում, որ պետական մարմինները պարզապես հետևողական լինեն ստվերի դեմ իրենց պայքարում և անհանդուրժող լինեն ոչ իրական գներով հաշիվներ գրող տնտեսվարողների նկատմամբ: Բոլորի, և հատկապես՝ խոշոր ներկրողների և մենաշնորհների նկատմամբ:

Արա Նռանյան
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր

ՓՆՏՐՏՈՒՔ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Որոշ դատողություններ հավաքական հիշողության, կարծրատիպերի և փոխիմաստության շուրջ

Սյուզան Խարդալյան

Սկիզբը՝ նախորդ համարում:

Այս կեցվածքի անհեթեթությունը, թե իբր հիշողությունը հավաքական է, լավ երևում է, դիտարկելով անձնական սոսկալի տառապանք կրած մարդկանց հակազդեցությունը: Նրանք սովորաբար ձգտում են վանել անտանելի դեպքի մասին հիշողությունը, կամ էլ պահում են իրենց մեջ՝ չկիսվելով նույնիսկ մերձավորագույն հարազատների հետ: Եղեռնի վերապրողները հիմնականում երկար տարիներ լռության են մատնել իրենց ապրումները՝ խնայելով հատկապես իրենց երեխաներին այդ զազրելի պատմություններից: Ահա թե ինչ է պատահել հայ վերապրողների առաջին սերնդի համարյա բոլոր ներկայացուցիչների հետ: Ոմանք կարող են հակաճառել, թե այս պահվածքը բացահայտ կամ քողարկված սոցիալական ճնշման արդյունք է: Մարդիկ սովորաբար չեն սիրում, երբ դժոխքով անցածներն իրենց էլ են ներքաշում այնտեղ, և վերապրողներին հայտնի է այս իրողությունը. նրանք էլ, իրենց հերթին, ոգևորված չեն վերապրելու ստորացումն ու նվաստացումը և, ուրեմն, լռում են: Բայց սա չի նշանակում, թե նրանք չեն պահպանում իրենց ներսում վառվող կամ, ավելի շուտ, մխացող հիշողությունները՝ սպասելով ժայթքելու ավելի նպաստավոր հնարավորության: Թուրքիայում ևս ականատես ենք լինում հիշողության փնտրտուքի նմանատիպ երևույթների: Սրանցից ոմանք ուղղակի կապ ունեն այն ֆենոմենի հետ, որին միջավայրը կոչում է թաքուն (crypto) հայ:

Այսպիսով երևույթը մեզ ուղղորդում է դեպի կարծրատիպերի հարցադրում:

Կարծրատիպերը կարծես թե մեր իմացական մեխանիզմի պարտադիր մասն են, ռացիոնալ օրինակները, ինչի մեջ կաղապարվում են մեր տպավորությունները: Նրանք շինված չեն մեր տպավորություններից ազդվելու համար. ընդհակառակը, նրանք պատրաստված են պաշտպանելու մեզ արտաքին աշխարհի հարվածներից, ապահովագրելու, որ մեր կանոնավորված ներաշխարհը չփշրվի արտաքին աշխարհի յուրաքանչյուր նոր հաղորդագրությունից: Կարծրատիպերը գործերի վիճակի մի տեսակ պատկերներ կամ նկարագրություններ են, որոնք մեզ համար նշանակություն ունեն և խոստանում են վերահսկելիության որոշակի ձև ստանալ: Կարծրատիպերը ընդհանրացումների մի տեսակ են. բայց կարծրատիպի և ընդհանրացման միջև եղած հիմնական տարբերությունն այն է, որ եթե ընդհանրացումները կարող են ազդվել անկանխատեսելի դեպքերից, ապա կարծրատիպերը մնում են անհաղորդ:

Կարծրատիպերի մի հատուկ խումբ կա, որ կապված է սոցիալական պայմանների կամ գործերի սոցիալական վիճակների հետ: Նրանց հիմնական դերը՝ սոցիալական շրջանակը և սոցիալական սահմանները թեթևացնելն ու ապահովելն է: Այսպիսի կարծրատիպերի աչքի ընկնող օրինակ է վարվելակարգը. այլ բան են առասպելները (myths): Սոցիալական կարծրատիպերը տարբերվում են

մյուսներից միայն առարկայորեն և կիրառվում սոցիալական պայմաններում. այսինքն՝ դրանք այն ձևերն են, որ մենք կարծում կամ զգում ենք, թե լավագույնս են հարմարվում սոցիալական միջավայրում: Հոգեբանորեն, սոցիալական կարծրատիպերը, կամ «հավաքական հիշողությունը» կարող են ապրել հակադիր անձնական համոզմունքների կամ հիշողությունների հետ կողք-կողքի՝ առանց նվազագույն անհարմարություն պատճառելու:

Սրանք երկու առանձին տիրույթներ (domain) են, և յուրաքանչյուրը պահանջում է առանձին մոտեցում: Ցանկացած մեկը կարող է արտասանել սոցիալական կամ «հավաքական» շաբլոն դարձվածքը (cliches)՝ առանց թաքցնելու իր անձնական համոզմունքները և հրաժարվելու դրանցից:

Շրջանակը ամբողջացավ. ես սկսեցի Հոլբվախսով, անհատի հոգեբանությունից, և վերադարձանք այդ նույն հոգեբանությանը կամ, ավելի ճիշտ, անհատի մտքին: Հավաքական հիշողությունը փաստորեն հորինված, հարմարեցված տարբերակն է նույն այն անձնական հիշողության, այսինքն՝ թե ինչ է խորհում անհատական միտքը՝ ճիշտ թե սխալ, բայց համապատասխան սոցիալական միջավայրին: Այսօրվա Թուրքիայի էթնիկ փոքրամասնությունների մեջ անձնական հիշողություններն ու կարծրատիպերը ապրել են կողք-կողքի: Մտադրություն է եղել հարթելու վեճը, որպեսզի վստահություն լինի, թե քրդերի, ալևիների, մուսուլմանացած հայերի կարգավորված աշխարհը չի փլչի:

Այստեղ խորհրդավորություն չկա. հավաքական հիշողության և անձնական հիշողության մեխանիզմը նույնն է և տեղավորված է նույն անհատական մտքում:

Արդյունքում՝ հավաքական հիշողության մեխանիզմը փոխանցվում է սերնդե-սերունդ:

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ Է ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԱՅՍ ՓՆՏՐՏՈՒՔԸ

Մենք ականատեսն ենք ամբողջ աշխարհով մեկ տարածված հիշողության վերելքի: Վերջին քսան-քսանհինգ տարիների ընթացքում յուրաքանչյուր երկիր, յուրաքանչյուր սոցիալական, էթնիկական կամ ընտանեկան խումբ ենթարկվել է անցյալի ավանդական հարաբերությունների խոր փոփոխության:

Այս փոփոխությունը կրել է տարբեր ձևեր. պատմության պաշտոնական վարկածների քննադատություն և պատմության, նախկինում խեղված, շրջանների վերանայում. «արմատների» և ծագումնաբանական հետազոտությունների աճող հետաքրքրություն. տարբեր տեսակի հիշատակելի իրադարձություններ և թանգարանները, արխիվները հասարակական քննարկման համար բաց պահելու նորոգված զգայունություն, կապվածություն՝ «ժառանգություն» կամ «հայրենակալվածք» (patrimoine) կոչվող երևույթներին: Որքան էլ սրանք կապակցված են, այս ընդհանուր ուղղությունները (trend) միասին առաջացնում են հիշատակի կարևորության մի տեսակ մակընթացության ալիք, ինչն անցնում է ողջ աշխարհով, ամենուրեք սերտ կապեր հաստատելով անցյալի հանդեպ հարգանքի - լինի դա իրական, թե երևակայական - և պատկանելիության զգացման, հավաքական գիտակցության և անհատական ինքնագիտակցության, հիշողության և ինքնության միջև:

Հիշողության այս փնտրտուքը, ինձ թվում է, խաչվում է մեր ժամանակներում հանդիպող երկու հիմնական ֆենոմենների հետ. մեկը՝ աշխարհիկ (temporal), մյուսը՝ սոցիալական: Ահա այս երկու ֆենոմեններն են, որ ես կուզենայի ընդգծել և ներկայացնել քննարկման: Առաջինը վերաբերում է նրան, ինչը սովորաբար համարում են «պատմության արագացում»:

Այս դիտարկումը, որ նախապես առաջ է քաշել Դանիել Հալևին, հիմնականում նշանակում է, որ ժամանակակից աշխարհի ամենից ավելի շարունակական կամ մշտական առանձնահատկությունը այլևս ոչ թե շարունակականությունը կամ հարատևությունն է, այլ փոփոխությունը: Եվ՝ արագորեն աճող փոփոխությունը, այսինքն ամեն ինչի արագացված գահավիժումը շատ ավելի արագորեն նահանջող անցյալի մեջ:

Այս փոփոխության չափը ճանաչելու ձևերից մեկը այն ձևին նայելն է, ինչի մեջ կազմավորվում է հիշողությունը: Այս փոփոխությունը վճռական կարևորություն ունի, քանի որ խախտել է պատմական ժամանակի միաբանությունը, հիանալի այն շիտակ ուղղվածությունը, որն ավանդորեն ներկան ու ապագան միասին կապում է անցյալին:

Արդյունքում, այս ուղղվածության միջոցով որևէ հասարակություն, ազգություն, խումբ կամ ընտանիք քննում է իր ապագան. այդ միաբանությունը ավանդորեն որոշում էր, թե հասարակությունը ինչ պիտի հիշի անցյալից՝ ապագային պատրաստ լինելու համար. և սա էլ, իր հերթին,

իմաստ է հաղորդում ներկային, ինչը, պարզապես, կապակցող օղակ է այդ երկուսի միջև:

Ընդհանուր առմամբ, ապագան կարելի է մեկնել այդ երեք ձևերից մեկով, հենց որն էլ որոշում է մարդկանց ունեցած անցյալի պատկերացումը: Այդ ապագան կամ պետք է տեսնել որպես անցյալի վերականգնում (restoration), կամ առաջընթացի, կամ էլ հեղափոխության մի ձև: Այսօր մենք հրաժարվել ենք անցյալի մեկնաբանության այս երեք ձևերից էլ և նախկինի պես այլևս չենք կարողանում «ձևավորել» պատմությունը: Այսօր մենք ծայր աստիճան անորոշության մեջ ենք, չգիտենք, թե ի՞նչ ձևի մեջ պիտի լինի ապագան:

Եվ այս անորոշության պատճառով, ներկան մեզ դնում է հիշելու պարտավորության տակ: Մենք չգիտենք, թե մեր հաջորդներն իրենց կյանքը հասկանալու համար ինչ կուզենան իմանալ մեր մասին: Եվ ապագան կանխատեսելու այս անկարողությունը մեզ դնում է կուտակելու պարտավորության տակ, ինչպես որ միշտ եղել է, բարեպաշտ և մի տեսակ խառնաշփոթ ձևով վերականգնելով ցանկացած տեսանելի հետք կամ էական նշան, որն ի վերջո կարող է վկայել, թե ինչ ենք մենք կամ ինչ կարող էինք լինել: Այլ խոսքով, սա պատմության ցանկացած տեսակի նպատակաբանության (teleology) ավարտն է. ավարտը մի պատմության, որի վերջը հայտնի է՝ ներկայի վրա է մնում այս անհրաժեշտ «հիշելու պարտականությունը»: Այս պարտականությունը, որոշ իմաստով, ավելի շատ մեխանիկական, նյութական և ժառանգական է, քան բարոյական, և կապված է ոչ թե «պարտքի», այլ «կորստի» գաղափարի հետ:

Այս փոփոխության մյուս հետևանքը, որ ես նկարագրել եմ որպես «պատմության արագացում», մեզ անցյալից հեռացնելն է. մենք կտրվում ենք անցյալից:

Մենք այլևս չենք կրում այդ անցյալը, մենք ուղղակի հաղորդակցվում ենք նրա հետ մասունքների, ավերակների, նշանների միջոցով, որոնք մեզ համար խորհրդավոր են դարձել, և որոնք կօգնեն խնդրին, քանի որ կրում են մեր «ինքնության» բանալին, այսինքն թե ով ենք մենք: Մենք կտրված ենք հողից, լեզվից, բնությունից, հնչյուններից և վայրերից, որոնք ժամանակին եղել են մեր ինքնության բանալիները: Սա ճշմարիտ է նույնիսկ Հայաստանում՝ ուրբանիզացիայի և վերջին աճող արտագաղթի պատճառով:

Մենք այլևս լավ հարաբերությունների մեջ չենք անցյալի հետ:

Մենք կարող ենք վերականգնել անցյալը միայն արխիվային փաստաթղթերի մանրամասն հիմնավորումներով. այլ կերպ ասած՝ այն, ինչ մենք այսօր կոչում ենք «հիշողություն» - հիշողության մի ձև, որն ինքնին վերականգնումն է - պարզապես այն է, ինչ անցյալում կոչվում էր «պատմություն»: Այստեղ մենք գործ ունենք բառերի նշանակության արմատական փոփոխության հետ, ինչը բնորոշ է ժամանակաշրջանի ոգուն:

Հիշողությունն այնքան լայն և ընդգրկուն նշանակություն է ձեռք բերել, որ միտում ունի օգտագործվելու մաքուր ու պարզ՝ որպես պատմության փոխարինող և պատմության ուսումնասիրումը դնելու հիշողության ծառայության տակ:

«Պատմության արագացում»-ն, ուրեմն, ունի երկու կարգի ազդեցություն հիշողության վրա. մի կողմից, նպաստում է անցյալի պահեստավորմանը, կորստի հանդեպ պարտավորության և հիշողության կարևորության, ինչպես նաև հաստատությունների արգասաբերության հանդեպ պատասխանատվության զգացմանը. թվայնացված գույքագրվում են թանգարանների, արխիվների, գրադարանների, տվյալների բանկերի հավաքածուները, ճշտվում ժամանակագրությունը: Մյուս կողմից էլ՝ անկանխատեսելի ապագայի և մշուշապատ անցյալի միջև՝ ինքնուրույն տեղ է հատկացվում ներկային: Բայց այնպիսի մի ներկայի, որն արդեն պատմական է և լի սեփական բնութագրի ու ճշմարտության գիտակցությամբ:

Պատմական և ժամանակակից շարունակականության այս պոռթկումն է, որ, իմ կարծիքով, հիշողությունն այսօր դարձնում է այդքան հրատապ. անցյալն այլևս ապագայի երաշխավորը չէ, և հիմնականում այդ պատճառով է, որ հիշողությունն այդքան ակտիվ դեր է կատարում հասարակության մեջ և հայտնաբերվել է շարունակականություն ունենալու խոստումով: Առաջներում, անցյալն ու ապագան անկախ էին, ներկան էլ կամուրջ էր նրանց միջև: Այսօր ներկան ու հիշողությունն են, որ անկախ են:

Մեր հասարակություններում հիշողության այս համարյա համաճարակային փնտրտուքի երկրորդ պատճառը սոցիալական բնույթ ունի և կապված է, այսպես կոչված, պատմության «ժողովրդավարացման» հետ: Սա այսօրվա աշխարհի ժողովուրդների, էթնիկ խմբերի, և նույնիսկ անհատների որոշ դասերի միջև հավասարության-ազատականացման որոշակի ուղղվածության ձև է ընդու-

նում. կարճ ասած, չափազանց կարճ ժամանակահատվածում հիշողության այդ բոլոր ձևերի ի հայտ գալը սահմանափակվում է փոքր ազգերով և փոքրամասնություններով, որոնց համար անցյալի վերականգնումը իրենց ինքնության հաստատման մի մասն է:

Եկեք դիտարկենք, թե ինչ է եղել: Վերը նշված այս տեսակ փոքրամասնական հիշողությունները հիմնականում ապագաղութացման դրսևորումներ են.

- միջազգային ապագաղութացում, որը թույլ է տվել նախկինում գաղութային ճնշման տակ լճացած հասարակություններին պատմական գիտակցության և հիշողությունների վերականգնման (կամ հորինման) հնարավորություն ձեռք բերել. Հայաստանը ձեռք է բերել սեփական պատմությունն ու հիշողությունը:

- տեղական ապագաղութացում, որն ավանդական արևմտյան հասարակությունների ներսում, սեքսուալ, սոցիալական, կրոնական և գավառական փոքրամասնությունների առանձնահատկությունը հանրության կողմից ընդունելու մի ձև է. նախկինում մերժվում էին նրանց իրավունքները, միաժամանակ՝ ընդգծելով ապաինտեգրացման սպառնալիքի տակ գտնվող իրենց տարբերությունը:

- Վերջապես, գաղափարական ապագաղութացում, որը ապագաղութացման երրորդ տեսակն է, որ արդյունք էր 20-րդ դարի տոտալիտար ռեժիմների փլուզման, լինի դա կոմունիստական, նացիստական, թե պարզապես բռնապետական: Գործընթացը օգնեց միավորվել այս ազատագրված ժողովուրդներին, որոնց ավանդական, երկարատև հիշողությունները բռնագրավվել, ավերվել կամ մանիպուլյացիայի էին ենթարկվել այդ ռեժիմների կողմից. օրինակ, Ռուսաստանը և Եվրոպայի շատ երկրներ՝ Բալկանները, Լատինական Ամերիկան և Աֆրիկան, ներառյալ Թուրքիան (որոշ չափով):

Փոքրամասնությունների հիշողությունների այս տեսակ պոռթկումը հիմնավորապես վերափոխել է պատմության և հիշողության պատկառելի կարգավիճակը, կամ, ավելի ճշգրիտ լինելու համար, մեծացրել է մինչ այժմ հազվադեպ օգտագործված «հավաքական հիշողության» իմաստը:

Ի տարբերություն պատմության, որը միշտ եղել է հասարակության հեղինակությունների, գիտնականների, մասնագիտացված յուրահատուկ խմբերի ձեռքում, հիշողությունը ձեռք է բերել բոլորովին նոր արտոնություններ և ժողովրդական բողոքի շարժման վարկ: Հիշողությունը սկսում է նմանվել տարագիր կուսակցության վրեժի, վերածում է Պատմության իրավունքից մերժվածների պատմության: Մինչև այժմ, եթե այն չուներ էլ հաստատուն կեցվածք, ապա գոնե չեզոքություն էր պահպանում: Ինչն է նոր, որ արդյունքն է անցյալ դարի սոսկալի տառապանքների, կյանքում սպասողականության աճի և վերապրողների շարունակական ներկայության. «ճշմարտանման» ճշմարտության պահանջն է, որն ավելի տիրական է, քան հենց պատմության պահանջը: Սեփական փորձառության և անհատական հիշողության ճշմարտությունը դրսևորելու պահանջն է դա:

Պատմությունը, թեև միշտ հիմնվել է հիշողության վրա և ձգտել գիտական կարգավիճակի, սովորաբար կերտվել է ի հակադրություն հիշողության:

Պատմությունը հավաքականության ոլորտն է. մինչդեռ հիշողությունը անհատական է: Պատմությունը մեկն է. հիշողությունը, որոշակիորեն, բազմաթիվ (թեև բնույթով անհատական է):

Այն միտքը, թե հիշողությունը կարող է հավաքական լինել, ազատագրված և սուրբ, շրջում է եզրույթի իմաստը: Ընդունված է, որ անհատներն ունեն հիշողություն, իսկ հավաքականությունները՝ պատմություն:

Այն միտքը, թե հավաքականությունները նույնպես հիշողություն ունեն, իր մեջ պարունակում է անհատների կարգավիճակի հեռուն գնացող ձևափոխություն: Հենց այստեղ էլ ընկած է այն մյուս խորհրդավոր տեղափոխության գաղտնիքը, ինչը որ կատարվեց. ինքնության՝ մեր պատկերացմամբ, տեղափոխությունը, առանց որի անհնար է հասկանալ հիշողության փնտրտուքը:

Ինքնության կոնցեպցիան կրել է իմաստային նմանատիպ փոփոխություն նույն ժամանակամիջոցում, ինչ հիշողությունը: Անհատական և առարկայական հասկացողություն լինելուց այն վերածվել է հավաքական, գրեթե ձևական օբյեկտիվ հասկացողության:

Ավանդաբար, ինքնությունը բնութագրում է այն ամենը, ինչ հատկանշական է որևէ անհատի համար. մեր մատնահետքերը մեր «ինքնության» արտահայտությունն են, մենք ունենք «ինքնության» քարտեր և ID թղթեր: Ինքնություն արտահայտությունը այժմ դարձել է խմբային կատեգորիա, մեզ տարբերելու մի ձև: «Կին չեն ծնվում,- նշել է Սիմոնա դը Բովուարը,- կին դառնում են»: Ինքնությունը,

հիշողության նման, պարտականության մի ձև է: Ինձ խնդրել են դառնալ այն, ինչ կամ. շվեդ, հայ, ռեժիսոր կամ արաբ, մուսուլման: Պարտավորության այս մակարդակում է, որ կազմավորվում է բանալու օղակը հիշողության և սոցիալական ինքնության միջև: Դիտելով այս լույսի տակ, նրանք երկուսն էլ կառավարվում են նույն մեխանիզմով: Այս երկու տերմինները դարձել են ամեն ինչ, բացի հոմանիշներից, և նրանց ձուլման փաստը ակնկալում է փոփոխություն՝ պատմության և հասարակության փոխազդեցության ճանապարհին: Ոչ ոքի տրված չէ պատմության մենիշխանությունը:

Այս կոնտեքստում ժամանակակից Թուրքիան այսօր զգացմունքային և քաղաքական ճիգ ու ջանքով արդեն մեկ դար պահպանում է գլխավոր, վճռորոշ կապը իր պատմության և իր անցյալի միջև: Թուրքիան անցել է խոր փոփոխությունների միջով: Աթաթուրքի հանրապետության հաստատումով այս կապը ձեռք բերեց յուրահատուկ կենտրոնացում, քանի որ պատմությունը դարձել է սոցիալական և քաղաքական սահմանի կապը: Դպրոցների, գիտական ձեռնարկների, երեխաների համար գրքերի միջոցով ստեղծվել է ազգային հավաքականության մեծ պատմագրություն: Այդ պատմագրությունը, որ առաջարկվում է բոլորին, փորձում է հարթել ցանկացած առանձնահատկություն, լինի դա գավառական, ընտանեկան, լեզվական, կրոնական, սոցիալական կամ սեռային, ինչը որ պատրաստ չէ հարմարվելու ազգային մեծ պատմությանը:

Մի կողմից, կար էպիկական շնչով հզոր ասքը՝ իր վերելքներով ու վայրէջքներով, իր երևելի պահերով ու ծանր փորձություններով, անհատների, տեսարանների, սահմանագծերի, ինտրիգների, թվականների, լավ ու վատ մարդկանց իր ուժասպառ անող երկացանկով, մի կլանող ընտանեկան սագա՝ սկսած հանրապետության հաղթարշավից, անցնելով Խաչակրաց արշավանքները, երբ քրիստոնյաները ցանկանում էին ջնջել կայսրությունը, Առաջին համաշխարհային պատերազմը, Աթաթուրքի հեղափոխության աշխարհիկ բնույթը, դատավարությունները, այս ամբողջի ժառանգությունը:

Մյուս կողմից, կար յուրատեսակ ազգակցություն և կային առանձին հավատարիմներ. քրդեր, ալևիներ, հայեր, տարրեր, որոնք ապրեցին այդ դարաշրջանում:

Հայերի պարագայում, առաջին անգամ մենք հնարավորություն ունեցանք ազատագրելու և անհատականացնելու մեր պատմությունը: Առաջին անգամ մենք նույնպես հնարավորություն ունեցանք ձևավորելու մեր ազգի հատվածների հիշողությունը, որ ցրված էր ոչ միայն ամբողջ Կովկասում, այլև ամբողջ աշխարհում: Մուսուլման հայեր, համշեններ, Արցախ, Ջավախք, խորտակված (կորուսյալ) հայրենիք, անդրազգային սփյուռք՝ Ռուսաստանում, ԱՄՆ-ում, ԵՄ-ում, նվազող միջինարևելյան համայնքներ: Մենք հիմա կլանված ենք աշխատանքով՝ այս բոլոր խմբերը ի մի բերելու, և փորձում ենք գտնել մի անխախտ ինքնություն: Պատմությունը, հիշողությունը, ինքնությունը մի մարմին են դառնում: Եվ ամենակարևորը մտքում պահելու համար ենք մենք ստիպված միավորում մեր ինքնությունը: Բայց նմանատիպ գործընթաց արդեն կատարվում է նաև մեր անմիջական հարևանությամբ (Թուրքիա, Ադրբեջան, Վրաստան):

Արդյունքում, մի կողմից կա հավաքական ազգային պատմություն, մյուս կողմից՝ մասնավոր հիշողություններ: Պատմությունը սրբազան է (օրինակ՝ թրքությունը վիրավորելու օրենքը), որովհետև դա այն դարաշրջանի մասն է, որն արժանի է ինչ-որ մեկի կյանքի զոհաբերմանը. բայց այնպիսի մեկի, որը գործել է որպես սոցիալական ինտեգրման, համախմբվածության և աջակցության շարժիչ ուժ: Հետո, կային մասնավոր խմբերի հիշողություններ (կամ հուշեր), ավելի շուտ՝ փոքրամասնությունների. բանվորներ, քրդեր, հայեր, ալևիներ, կանայք: Այս բաժանման վրա է կառուցվել և զարգացել թուրքական ինքնությունը դարեր շարունակ, և հենց այս կաղապարն է, որ ջարդվել կամ ջարդվում է: Եվ ջարդվում է կրկնակի շարժման տակ. առասպելի ներքին պայթյունի, որ ուներ ազգային ծրագիրը, և ազատագրման, որ շարունակում է ազատագրել փոքրամասնություններին:

Այս կրկնակի շարժումը պոռթկաց 1970-ականներին, երբ Արևմուտքը փորձարկեց հիմնական ձևափոխությունը: Ինքնիշխան, բռնացող և համարյա կպչուն «ազգային հիշողության» երևան գալը ուղղակի կապ ունի եսի պատմական գիտակցության սոցիալականի վերափոխումից: Ազգային ինքնությունը փոխարինվեց սոցիալական ինքնությամբ: Թուրքիայի մեծության և ճակատագրի հանդեպ եղած ավանդական հավատը հարձակման ենթարկվեց ներսից. օսմանյան, գաղութային և համաշխարհային պատերազմները (1914-1918, 1939-1945) և քրդական հարցը տանում են ոչ միայն իշխանության իրական նվազման,

այլև հիմնավոր, նենգ կասկածի՝ դասական ազգային մոդելի հիմնավորվածության և անսխալականության հանդեպ:

Արդյունքը եղավ ազգային գիտակցության մերժման դրվագների փնտրտուքը (երիտթուրքերի ահաբեկումից մինչև 70 և 80-ականների ռազմական տագնապը):

Արդյունքը կարող է լինել նաև այն բոլոր հաստատությունների ճգնաժամը՝ կրոնական, միությունների, քաղաքական կուսակցությունների, ընտանիքների, որոնց առաքելությունը դրանց ազգային ձև տալն էր. սա կարող է աստիճանաբար տանել աճող անորոշության՝ քաղաքական, իսլամական ուժերի, մոդեռնիզացիայի և ԵՄ անդամակցության միջև հավասարակշռության հասնելու անկարողության: Այս ժամանակաընթացքում Թուրքիայում տեղի է ունենում ներքին հզոր ապագաղութացման շարժում և խմբային ինքնությունների ազատագրում. ինտեգրացում փնտրող յուրաքանչյուր փոքրամասնություն ցանկանում է ունենալ իր սեփական պատմությունը, իր «հիշողությունը»: Յուրաքանչյուրը ցանկանում է «նախասահմանել իր սեփական հիշողությունը» և պահանջում է, որ տվյալ ազգը ճանաչի իր պատմությունը: Հայկական հարցը դրա փայլուն օրինակն է: Հազիվ թե որևէ մեկը խոսեր հայկական հիշողության մասին երեսուն տարի առաջ, կամ համարձակվեր իր հոր հիշողությամբ պայմանավորել բնաջնջման պետական քաղաքականությունը: Այսօր գոյություն ունի հակառակ վիճակը: «Հայ համայնքը» - մի բառակապակցություն, որ այն ժամանակ չէին օգտագործում - զգուշորեն պահանջում է իր հիշողության ճանաչումը:

Այն, ինչ այժմ կոչվում է «ազգային հիշողություն», ոչ այլ ինչ է, քան պատմական հիշողության վերափոխումը, ինչը զավթվում, ավերվում և հեղեղվում է տասնամյակներ շարունակ պահպանվող խմբային հիշողությունների կողմից: Այստեղ, իհարկե, չափազանց կարևոր է մանրակրկիտորեն ուսումնասիրել, թե այս նոր հիշողությունը ինչպես է կազմակերպվում:

Որպես եզրափակում, ընդգծենք, թե որոնք են այս վերջին հիշողության փնտրտուքի անմիջական ազդեցությունները: Կան երկու գլխավոր ազդեցություններ:

Առաջինը պարունակում է քաղաքական, առևտրային և տուրիստական նպատակների անցյալի գործածության դրամատիկական աճը: Սրա մեկ օրինակը հիշատակի իրադարձությունների թվի կտրուկ աճն է համարյա բոլոր երկրներում: Ֆրանսիան լավ օրինակ է. վերջին տասնամյակում, 1989-2000 թթ., երկիրը ամենաբարձր ցուցանիշն է ունեցել հիշատակումների համար: Իր բարձրակետին հասած ֆենոմենը ստացել էր լրիվ պատմական, քաղաքական, ազգային, կրոնական, գաղափարական և խորհրդանշական նշանակություն:

Բոլոր պատճառները կան հաստատելու հիշատակման արարողությունների արգասաբերությունը, բայց դրանք բոլորը ցուցադրում են, որ անցյալը մեկ եզակի իմաստ ունի, և որ սեփական պատմության իմացությամբ լեցուն ներկան անհրաժեշտաբար անցյալի մի քանի հնարավոր վարկածներ է առաջադրում:

Հիշողության ձևավորման ճանապարհին այս փոփոխության թողած երկրորդ ազդեցությունը եղել է պատմաբանին անցյալի մեկնաբանմամբ ավանդական հաճելի մենաշնորհից զրկելը: Մի աշխարհում, որտեղ դու ունես հավաքական պատմություն և անհատական հիշողություններ, պատմաբանը բացառիկ նախապատվություն ունի վերահսկելու անցյալը:

Այս առավելությունը (նախապատվությունը) մեծապես ամրապնդվեց վերջին հարյուր տարիներին, որի պատճառով էլ երբեմն կոչվում է «գիտական» պատմություն: Պատմաբանի պարտականությունն է միայն փաստերը վերականգնել, ապացույցներ, վկայություններ բերել և ներկայացնել ճշմարտությունը: Դա նրա մասնագիտական վարկանիշն է: Այսօր պատմաբանը մենակ չի վերակերտում անցյալը: Այդ դերը նա կիսում է դատավորի, ականատեսի, մամուլի, օրենսդիրի և շատ-ուրիշ քաղաքացիների հետ:

Սակայն կա մի իրական խնդիր, որ կապված է հիշողությանը առնչվող սրբազան աուրայի հետ. խնդիրն իմանալն է, թե ինչպես, ինչու և որ պահին ազատագրության և ազատության վրա հիմնված դրական սկզբունքը հակադարձվում և դառնում է երկխոսությունները դադարեցնելու (լռեցման) մի ձև, մերժման մի հող և պատերազմի մի գործիք:

Հիշողության կոչելը, ցանկացած դեպքում, արդարության կոչ է: Այնուամենայնիվ, հուսանք, որ այն չի վերածվի սպանության կոչի:

ՎԱՉԵ ԲՐՈՒՏՅԱՆ

Մարտ 5, 1946-ին, Մեծն Բրիտանիոյ վարչապետ Ուինսթըն Չըրչիլ կը գտնվեր Ամերիկա, Միսուրի նահանգի Ուեսթմինսթըր քոլեճեն ստանալու համար իր պատվո դոկտորան: Այս պաշտոնական առիթով իր արտասանած ճառին մեջ էր, որ անցյալ դարու երկրորդ կեսը հատկանշած Արեւելք-Արեւմուտք պայքարը բնութագրող ամենեն դիպուկ բանաձեւումը ներկայացուց Չըրչիլ, ըսելով. «Պալթյան Սթեթին քաղաքեն մինչեւ Ադրիականի Թրիեսթե քաղաքը, երկաթյա վարագույր մը կիսած է Եվրոպան: Այդ գիծեն անդին կիյնան Կեդրոնական եւ Արեւելյան Եվրոպայի հին պետություններու մայրաքաղաքները»:

Նացի Գերմանիոյ եւ Ճափոնի պարտութենեն ետք, ճիշտ է, լռած էին թնդանոթները, սակայն համաշխարհային թատերաբեմին վրա, հառաջ եկած էր ուժերու նոր դասավորում մը, ստեղծված էր երկբեւեռ աշխարհ մը, որու քաղաքական կողմնացույցներու սլաքները ցույց կուտային երկու մայրաքաղաքներ՝ Մոսկվա եւ Ուաշինկթըն, իրենց մանր-մունր կամ միջին կշիռքի դաշնակիցներով:

Եղան անշուշտ այս նոր տեսակի պատերազմեն խույս տալ փորձողներ, Նեհրուի եւ Նասերի գլխավորությամբ, սակայն անոնց ստեղծած Ոչ հանձնառուներու շարժումը շուտով վերածվեցավ անվանական եւ ոչ թե քաղաքական լուրջ կշիռ ներկայացնող երեւույթի: Անոնք եւս, մեծ մասամբ, անխուսափելիորեն ինկան այս կամ այն բեւեռի քաշողական-մագնիսական ծիրեն ներս՝ աննշան թպրտուքներով: Աշխարհի նոր քարտեզ մը գծված էր, որ գլխավորաբար երկու գույներե կը բաղկանար: Բոլոր պետություններն ալ (ճիշտ ինչպես երբ զանգեն ետք յուրաքանչյուր աշակերտ կը շարվի ի՛ր դասարանի շարքին մեջ) այլեւս կը գտնվեին Երկաթե վարագույրի պարտադրած քաղաքական սահմանագիծերու կա՛մ այս կողմը, կա՛մ այն կողմը, հարգելի բացառություններով:

Ամբողջ արաբ-իսրայելյան տագնապը, 1948-են ասդին, առավել՝ հետգաղութատիրական Ափրիկեի մեջ տեղի ունեցող պետական հարվածներն ու քաղաքական անկայունությունը (ներառյալ Մոհամմատ Նակիպի, Փաթրիս Լումումպայի, Մոյիզ Չոմպեի կամ Քատտաֆիի երեւույթները, օրինակի համար), ինչպես նաեւ Լատին Ամերիկայի՝ առհասարակ արյունալի հեղաշրջումներն ու հակահեղաշրջումները եւ անոնց ընկերացող ընկերային-տնտեսական ծանր տագնապները (հատկապես Արժանթինի, Պրազիլի, Քոլոմպիայի եւ Վենեզուելլայի մեջ) ճիշտ ըմբռնելու համար, վերջին հաշվով, պետք է դիտել Պաղ պատերազմի ստեղծած իրականության լույսին տակ:

Մեկ բռնատերը մյուսով փոխարինելու, կամ դուրսեն դրդված ու ֆինանսավորված հեղաշրջումներով իրենց համար նպաստավոր վարչակարգեր հաստատելու Մոսկվայի կամ Ուաշինկթընի քաղաքականությունը «ընդունված կարգ» էր Պաղ պատերազմի ընթացքին: Մոսատեղի տապալումը, Պապրաք Քարմալի մը հայտնվիլը Աֆղանիստանի մեջ, կամ Սալվատոր Ալիենտեի դեմ հեղաշրջումը ասոր օրինակներեն են:

Դարձյալ, Պաղ պատերազմի, այսինքն «փոքրավորներու արյունով» մղվող մեծերու պատերազմի լույսին տակ պետք է դիտել նաեւ խորհրդային ուժերուն կողմե Աֆղանիստանի գրավումը (արդյունք՝ Մոսկվայի կողմե բրիտանական լեղի փորձառության տգետ անտեսումին), որ կը միտեր խորհրդային սահմաններեն ներս իսլամական արմատականության թափանցումին առաջքը առնել: Պրեժնեւ, այդ օրերուն, անտեսած էր նաե՛ւ ամերիկյան փորձառությունը Վիեթնամի մեջ:

Զարմանալիորեն, քսաներորդ դարու զարգացած արհեստագիտությամբ զինված, մարդկային, տնտեսական ու գիտական հսկայական կարողականություն ունեցող գերուժերը ողբալիորեն կը ձախողեին նախատեսել իրենց բիրտ ուժի... ձախողությունը՝ ըլլա՛ Վիեթնամի, ըլլա՛ Աֆղանիստանի, կամ ամբողջ Արեւելյան Եվրոպայի մեջ: Ալ ինչո՛ւ զարմանալ, երբ այս բոլոր առավելություններեն զրկված եւ բառացիորեն ասիավարի բըռնատեր մը, Հազկերտ անունով, կը գործեր այդ սխալը՝ 1500 տարի առաջ:

Եվ ահավասիկ, պաղ պատերազմի այսպիսի մթնոլորտի մեջ էր, որ 66 թվականին Հռոմեական կայսրությունը Հայաստանի մեջ Տրդատ Ա-ը գահ բարձրացնելով, կը հաստատեր հռոմամետ վարչակարգ մը, իբրեւ պատվար Պարթեւական կայսրության դեմ: Արշակունիներու վարչակարգով, սակայն, հարցը չէր փակվեր Փոքր Ասիո մեջ: Հռոմի եւ Տիզբոնի միջեւ (այդ օրերու Մոսկվան եւ Ուաշինկթընը) պաղ պատերազմի դրսեւորումներն էին Արշակունի մեկ արեւմտամետ, մեկ արեւելամետ իրերահաջորդ թագավորներու գահ բարձրանալը: Նույնինքն Մեծն Տրդատի գահ բարձրանալը, երրորդ դարու վերջին քառորդին, Հայաստանի մեջ Բյուզանդիոնի՝ միայն ժամանակավոր հաղթանակ մըն էր պարթեւական-պարսկական ազդեցության դեմ: Սակայն այս թագավորի գահ բարձրանալով, կացությունը այլեւս նախկինին նման չէր: Նոր իրականություններ կային այլեւս:

Քրիստոնեության ներկայությունը, թե՛ իբրեւ կրոն, թե՛ իբրեւ գաղափարախոսություն եւ թե յուրահատուկ մշակութային երակ զարգացնող ազդակ, կարեւոր ու նոր երեւույթ էր: Բան մը, որ չվրիպեցավ Մեծն Տրդատի ուշադրութենեն:

Հայաստան գալով, ան շուտով նկատեց, թե պարսկական կրոնամշակութային ազդեցությունը ինչքան հզորացած էր երկրին մեջ: Այնքան մը, որ այլեւս վտանգված էր հայ ժողովուրդի իբրեւ ինքնուրույն հավաքականություն գոյատեւումը: Ան փորձեց վերականգնել հին հայկական, հարազատ հայկական հեթանոսական կրոնա-մշակութային մթնոլորտը երկրին մեջ: Ասով կը բացատրվի Ագաթանգեղոսի այն պատումը, երբ իր հաղթանակեն ետք, Տրդատ կը պարտադրեր բոլորին զոհ մատուցանել Անահիտին: Ապա՝ իր քարտուղար Գրիգորի մերժումը, Խոր Վիրապ բանտարկվիլը եւ այլն, ասոնք կը խորհրդանշեն Տրդատի «պրո-հայկական» քաղաքականության վերադարձը եւ նույն այդ քաղաքականության ձախողությունը, տրված ըլլալով, որ իր դասական զենքերը այլեւս մաշած էին:

Ասոր մեջ կը կայանա քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու Մեծն Տրդատի քաղաքական որոշումի անկյունադարձային բնույթը: Այս որոշումով, Տրդատ կը փորձեր կրոնամշակութային անթափանց պատվար մը ստեղծել արտաքին մշակութային, կրոնական ու ասոնց քողին տակ՝ նաե՛ւ քաղաքական թափանցումներուն դեմ, ըլլան ատոնք արեւելյան (պարսկական), կամ արեւմտյան (հռոմեական-բյուզանդական):

Այս ձեւով, հայ ժողովուրդի ինքնության բյուրեղացումի գործընթացին մեջ անկյունադարձ մը կը ստեղծվեր: Հայությունը, իբրեւ ժողովուրդ, կը ստանար նոր տեսակի դիմագիծ մը, որ տարբեր էր իր հզոր հարեւաններեն:

Այս երեւույթը աննկատ չանցավ այդ օրերու Պաղ պատերազմի երկու բեւեռներու մայրաքաղաքներուն մեջ: Երկուքն ալ շարունակեցին Հայաստանը իրենց ազդեցության գոտիեն ներս պահելու պայքարը, միշտ ի վնաս Հայաստանի: Հետագա տասնամյակներուն, հատկապես պարսից Շապուհ Բ-ի օրերուն, Արշակ Բ-ի, անոր

Տրդատ թագավոր



Գրիգոր Լուսավորիչ

որդի Պապի, Մուշեղ Մամիկոնյանի ու Վարազդատի օրերու անցքերը ազդեցության գոտիներու համար մղվող այս պայքարի դրսեւորումներն էին: Ճիշտ այնպես, ինչպես Սուհարթոյի նման խամաճիկ մը տեղավորելը (Ինտոնեզիո պարագային), կամ Մոսատեղը տապալելով Մոհամմետ Ռըզա շահը Թեհրանի մեջ իբրեւ Արեւմուտքի կամակատար գահ բարձրացնելը, եւ կամ՝ Սալվատոր Ալիենտեին տեղ արյունարբու Փինոշե մը իշխանության բերելը Սանթիակոյի մեջ, Չիլի:

Դար մը ետք քրիստոնեության պետական կրոն հռչակումեն, հասած էր պահը կրոնական հեղափոխությունը մշակութային հեղափոխությամբ ամրապնդելու: (Եթե Մաո Ցե Թունկ քիչ մը հայոց պատմութենեն դասեր քաղած ըլլար...):

Կը սկսի երկրորդ արարը: Բեմ կը մտնեն երեք այլ գործիչներ: Մեսրոպ Մաշտոց, Սահակ կաթողիկոս եւ Վռամշապուհ Արշակունի:

Գիրերու գյուտով, 5-րդ դարու սկիզբը, կը սկսի հայկական մշակութային զարթոնքը, ինչպես նաեւ քրիստոնեությունը ամբողջ երկրին մեջ ավելի հոգեհարազատ դարձնելու գործընթացը: Այլեւս ասորի կամ հույն քարոզիչները գործ պիտի չունենային Հայաստանի մեջ: Այլեւս օտար արեւելումներու համար նպաստավոր մշակութային ենթահող գոյություն պիտի չունենար Հայաստանի մեջ: Գիրերու գյուտը, այդ օրերուն, խորքին մեջ նույն այդ օրերու globalization-ի դեմ մղվող պայքարին դեմ շահվա՛ծ հաղթանակ պետք է համարել:

Մարզ(տ)ադաշտի լուսատախտակին վրա, ցարդ՝ Հայաստան 2 - արտաքին ուժեր (Տիզբոն եւ Կոստանդնուպոլիս)՝ 0:

Սակայն չուշացավ մեծ ուժերու հակադարձությունը: Արդարեւ պատահական չէր, որ գիրերու գյուտեն մոտավորապես երկու տասնամյակ ետք, Հայաստան կորսնցուց իր անկախությունը, 428-ին, եւ երկու գերուժերը զայն բաժնեցին իրարու միջեւ, ինչպես որ մոտ 13 դար ետք եղավ Լեհաստանի ճակատագիրը:

Սակայն քաղաքական անկախության կորուստը չկրցավ կասեցնել հայկական մշակութային հեղափոխությունը: «Ճինի»-ն շիշեն դուրս ելած եւ հայոց Ոսկեդարը սկսած էր իր ճամփան՝ անդառնալիորեն:

Այդ օրերու երկու գլխավոր բեւեռներու միջեւ պայքարը նոր հանգրվան մը թեւակոխեց 5-րդ դարու կեսերուն, երբ քրիստոնյա Արեւմուտքի քաղաքականությունը կը ստանար հոգեմտավոր-գաղափարախոսական նոր արեւելում մը՝ Երուսաղեմը կիզակետ-թիրախ համարելով, ինչպես նաեւ քրիստոնյա աշխարհի ինքնակոչ պաշտպանի դեր ստանձնելով: Սասանյան Պարսկաս-

տանի համար այս մեկը վտանգավոր էր եւ անհրաժեշտ էր հակադարձել, որովհետեւ կը վտանգվեին իր կայսրության աշխարհագրական նվիրականացած սահմանները:

Հազկերտ կը տրամաբաներ, որ նախ անհրաժեշտ է ապահովել Արեւմուտքի դեմ իր սահմանները, որու ամենեն խոցելի կետը, ըստ իր հաշվարկներուն, Հայաստանն էր (Սասանյան կայսրության հյուսիս-արեւմտյան սահմանագիծը), տրված ըլլալով, որ իբրեւ քրիստոնյա երկիր՝ Հայաստան կրնար շատ շուտով եւ շատ դյուրությամբ թիրախ դառնալ Բյուզանդիոնի ծավալապաշտ ձգտումներուն եւ, իբրեւ այդպիսին, կը հանդիսանար իր սահմանային տկար կողը: Իրերու ներկա, այսօրվան դրությամբ, նույն տրամաբանությամբ կը բացատրվի Լիբանանի մեջ իր ազդեցությունը ուժեղացնելու Սուրիո քաղաքականությունը 1970-են, Հաֆեզ Ասատի իշխանության հասնելեն սկսյալ, որովհետեւ աշխարհագրական-ռազմագիտական առումով, Սուրիա-Իսրայել պատերազմի մը պարագային, Լիբանանը պիտի հանդիսանար այն աշխարհագրական գոտին, Սուրիո Աքիլլեսի կրունկը, ուրկե իսրայելյան ուժերը կրնային մեծ առավելություն ձեռք ձգել Սուրիո դեմ:

Ահավասիկ, ասով կը բացատրվի հայերուն զրադաշտականություն պարտադրելու Հազկերտի որոշումը. ուժեղացնել եւ ապահովել իր սահմանները:

Հայաստանի մարզպան նշանակված Վասակ Սյունիի համար ստեղծված էր ծանր կացություն: Ան, իբրեւ երկրի կառավարիչ, հաշվետու էր Սասանյան կայսրության, պատասխանատու էր իր կառավարումին հանձնված տարածաշրջանի կայունության եւ խաղաղության համար: Ինք կը ներկայացներ Հայաստանի քաղաքական ղեկավարությունը: Իսկ Վարդան, բանակի հրամանատարի իր հանգամանքով, կը ներկայացներ զուտ զինվորական թեւը. իբրեւ այդպիսին, ան զուրկ էր Վասակի վարչակառավարման մտածողութենեն ու մանավանդ՝ փորձառութենեն: Այս պատճառով ալ, Հազկերտի որոշումին ստեղծած տագնապի ծանրության չդիմացավ Վարդան եւ խույս տվավ երկրեն: Մարզպանը բանագնացներ ղրկեց իր ետեւեն ու զայն համոզելով վերադարձուց տուն:

Ինչ կրնար ընել փոքրիկ Հայաստանը կայսրության մը դեմ, որուն ուժը կը տարածվեր Մ. Արեւելքեն մինչեւ Հնդկաստան: Առաջինը բանը, որ մտածեց Վասակ, արտաքին զորակցություն ապահովելն էր. ան բանագնացներ ղրկեց Կոստանդնուպոլիս: Երկրորդ, Սասանյան կայսրության այլ սահմանային շրջաններու մեջ բնակող ենթակա ժողովուրդներու հետ զինակցիլ, որպեսզի անոնք եւս լուրջ գլխացավ դառնային Հազկերտի համար, որպեսզի ան չկարենար իր ուշադրությունը կեդրոնացնել միմիայն Հայաստանի ուղղությամբ:

Սակայն Հայաստանի կրոնական իշխանությունը, եկեղեցին, կաթողիկոսը (ներառյալ Ղեւոնդ Երեցով ներկայացված մոլեռանդ խավը), զուրկ էին արտաքին հարցերու առնչվող քաղաքական-դիվանագիտական մտածողութենե կամ փորձառութենե: Անոնք, հակառակ կացությունը հակակշռի տակ պահելու Վասակի ճիգերուն, նոր իրադրություն, տաք-գլուխ մթնոլորտ ստեղծեցին ամբողջ երկրին մեջ: Այս մթնոլորտին դրսեւորումն էր, ահավասիկ, Բագրեւանդ գավառի Անգղ գյուղին մեջ պարսիկ մոգերուն դեմ կազմակերպված ծեծուջարդը, որուն լուրը կարելի է երեւակայել, թե ինչ հակազդեցություն ստեղծեց Տիզբոնի մեջ. հայե՞րը, ի՜նչ հանդգնություն...

Կացությունը այսպիսով ա՛լ ավելի բարդացավ Վասակի համար: Մինչ ան կը փորձեր ժամանակ շահիլ եւ համապարփակ լուծում մը գտնել տագնապին՝ արտաքին զինակցություններով Տիզբոնի դեմ համընդհանուր ապստամբության մը միջոցով, անդին, քաղաքական մտածողութենե զուրկ ամբոխավար խավը, իր անհաշիվ քայլերով, կը խանգարեր իր առնելիք քայլերը:

Պարսկական հակազդեցությունը սարսափելի եւ անխուսափելի էր: Եվ չուշացավ:

451 թվական, մայիս ամիս: Հայաստան անհավասար պայքարի մեջ կը մտներ Սասանյան ուժերուն դեմ (1467 տարի ետք, նույն օրերուն, Ավարայրեն հյուսիս, այս անգամ Արարատյան դաշտավայրին վրա, Հայաստան նույն անհավասար պայքարին մեջ պիտի մտներ Սարդարապատի, Ղարաքիլիսեի (այժմ՝ Վանաձոր) եւ Բաշ Ապարանի ճակատներուն վրա, ի վերջո վերստեղծելով իր պետականությունը):

Փարպեցիի եւ Եղիշեի տվյալներով, այդ կռիվը («պատերազմը») տեւեց մեկ օր միայն եւ վերջ գտավ



այն պահուն, երբ նահատակվեցավ հայկական բանակի սպարապետը, Վարդան: Ապա՝ լացուկոծ, սուգ ու շիվան, իշխաններու-նախարարներու գերեվարում դեպի Պարսկաստան, դատ-դատաստան եւ... վերջակետ:

Իրականությունը այն է, սակայն, որ 451-ի մայիսի վերջերուն Ավարայրի դաշտին վրա տեղի ունեցածը սկիզբն էր միայն պատերազմի մը, որ տեւեց մինչեւ 484 թվականը: Այսինքն, պատերազմ մը, որ շարունակվեցավ 33 տարի: 33 տարիներու արյունալի պատերազմ մը, բացառաբար մղված ֆետայական-կերիլլայական մարտավարությամբ, որովհետեւ հայ քաղաքական-զինվորական մտածողության համար դժվար չեղավ դասեր քաղել Ավարայրեն՝ կարելի չէ բաց դաշտի վրա հավասարե-հավասար պայմաններով պատերազմիլ կայսրության մը դեմ եւ հաղթելու հույս ունենալ: Պետք է ընտրել ուրի՛շ մարտավարություն մը:

33 տարի տեւած այս ֆետայական, մաշումի պատերազմը տվավ իր արդյունքը: Եթե բրիտանական կայսրության ղեկավարները սերտած ըլլային մեր պատմությունը, պիտի չկրկնեին սասանյաններու արկածախնդրությունը Աֆղանիստանի մեջ: Եթե Պրեժնեւ ապա Ճորճ Պուշ քիչ մը պատմություն սերտած ըլլային, պիտի չկրկնեին նույն սխալը: Խորհրդային հսկայական զինվորական մեքենան արյունոտած-ջարդված քիթով դուրս

ելավ Աֆղանիստանեն: Նույնը կը պատահի այսօր նույն այդ երկրին, ինչպես նաեւ բոլոր բռնագրաւումներու պարագային:

Տիզբոնի մեջ, ա՛լ ձանձրացած էին հայերու համառութենեն: Կարելի է երեւակայել, որ եթե այդ օրերուն հեռատեսիլ եւ հաղորդակցության արդի միջոցներ գոյություն ունենային, Տիզբոնի պետական հեռատեսիլը ի՞նչ-ի՞նչ սուտերով պիտի փորձեր օրորել իր հանրային կարծիքը եւ ժողովուրդեն ծածկել Հայաստան կոչված լեռնային երկրի մը մեջ իր տված զոհերը՝ գրեթե ամենօրյա կշռությամբ:

Տիզբոնի մեջ, սասանյան ղեկավարությունը անգամ մը եւս ստիպվեցավ նստիլ քննարկումի սեղանի շուրջ եւ վերստին հաշվել խաղաքարտերը, եզրակացնելու համար՝ հետո ի՞նչ, մինչեւ ե՞րբ այս ծախսալից եւ անհույս արշավը (փառք Աստուծո, այդ օրերուն քարյուղի խնդիր ալ չկար): Ի՞նչ է հայերու ուզածը եւ ի՞նչ կուզենք մենք: Կարժե՞ շարունակել այս ընթացքը:

Փոխադարձ զիջումը սեղանին դրվեցավ Նվարսակի դաշնագրի տեսքով: Հայերը պիտի մնային պարսկական ազդեցության գոտիեն ներս, սակայն ազատ պիտի ըլլային իրենց կրոնական-մշակութային կյանքը ինքնուրույն ձեւով վարելու խնդրին մեջ: Այսինքն, կուզեք իբրեւ հայ-քրիստոնյա՞ ապրիլ, խնդիր չունինք, սակայն պետք է մնաք մեր քաղաքական ազդեցության գոտիեն ներս. այս էր պարսկական տրամաբանությունը: Տարբեր խոսքով, տեղական լայն ինքնավարություն: Այդ օրերուն համար լավագույն լուծում մը՝ երկուստեք, որովհետեւ հայության համար եւս ակնբախ էր այն ճշմարտությունը, որ ֆետայական կռիվներով կարելի չէ տապալել Սասանյան կայսրությունը եւ վերականգնել հայկական անկախ պետականությունը: Անհրաժեշտ էր միջանկյալ, շունչ ու առիթ տվող հանգրվան մը թեւակոխել, մինչեւ որ միջազգային քաղաքական պայմանները ավելի ձեռնտու ըլլային:

Հետագային արաբական արշավանքներն էին, որ խափանեցին հայկական հաշվարկի այս կետը եւ հայկական անկախ պետականության վերստեղծումը հետաձգվեցավ մինչեւ 885, մինչեւ Բագրատունիներու վարչակարգի հաստատվիլը:

Եվ ուրեմն, մեր պատմության մեջ Վարդանանց պատերազմ անունով ծանոթ պայքարը ո՛չ թե «բարոյական» հաղթանակով ավարտեցավ մեզի համար, ինչպես որ թյուրիմացաբար եւ թութակաբար դարեր շարունակ կրկնած ենք, այլ՝ քաղաքական լուրջ նվաճում մըն էր, որուն շնորհիվ հայ ժողովուրդը՝

ա.- կը պահպաներ քրիստոնեությամբ հատկանշվող իր կրոնական դիմագիծը, իր բոլոր ստորոգելիներով հանդերձ,

բ.- կը պահպաներ գիրերու գյուտով հատկանշվող իր մշակութային ուղին,

գ.- եւ մանավանդ՝ այս երկուքին ընդելուզումով իր բյուրեղացուցած ազգային դիմագիծը կը պահպաներ: Այսինքն, 301-ին եւ 404-ին մղված եւ շահված անարյուն ճակատամարտները վերջնականապես կամրապնդվեին այդ օրերու միջազգային օրենքով՝ Նվարսակի դաշնագրով:

Հետեւաբար, տոնել Վարդանանցը՝ առանց նշելու Նվարսակով ձեռք բերված հաղթանակը, հիմնական թյուրիմացություն մըն է: Ահավոր բան է, ամբողջ ենթամշակույթ մը ստեղծված է այս իբրեւ թե «բարոյական» հաղթանակի գաղափարով եւ անհապաղ պետք է վերջ տալ այդ ենթամշակույթին:

Խոսիլ Վարդանանց պատերազմի, Վարդանի եւ 1035 նահատակներուն մասին, եւ չխոսիլ այս պայքարին պսակումը հանդիսացած Նվարսակի մասին, կը նշանակե իր էության մեջ խեղաթյուրել այդ սերունդի շարք մը փայլուն դեմքերու (որոնց մեջ, իմ կարծիքով, Ղեւոնդ Երեցները հաստատապես տեղ չունին) քաղաքական հասունությունը, կը նշանակե իր բովանդակութենեն զրկել այդ դարու մեր մղած արդարացի պայքարը, կը նշանակե խզվիլ մեր ամենաարդար ձեռքբերումեն, որուն շնորհիվ մեր ժողովուրդի ինքնուրույն դիմագիծի բյուրեղացման գործընթացը կը հասներ իր վերջնական փուլին:

Վարդանանց տոնը բարոյական հաղթանակի օր չէ: Պետք է հրաժարիլ բարոյական կեղծ հաղթանակներու էապես վնասակար հոգեբանութենեն. Վարդանանցի կապված «բարոյական հաղթանակ»-ի քարոզչությունը միայն ու միայն կը վնասե մեր դիմագիծին, կը խեղաթյուրե եւ կը ջլատե մեր ազգային հավաքական կամքը: Վարդանանց տոնը էապես քաղաքական հաղթանակի մեծ տոն է, ու այս տրամաբանությամբ պետք է դաստիարակենք մեր սերունդները:

ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ-ում Սերբիայի Հանրապետության Պատվո հյուպատոս

Կան անհատներ, ովքեր իրենց ապրած կյանքով ու թողած գործով մնում են ժողովրդի հիշողության մեջ: Այդպիսին էր նաև Արշալույս Աստվածատրյանը: Եվ, սակայն, ամենևին էլ զարմանալի չէ, որ նրա անունը չի հիշատակվել խորհրդային հայկական հանրագիտարանում, զանգվածային լրատվամիջոցներում: Պատճառները պարզից էլ պարզ են: Խորհրդային կարգերի օրոք Դաշնակցության մասին բարձրաձայնելը, այսպես ասած, «ատելություն ու թշնամանք» էր սերմանում: Համենայն դեպս, այդպես էին կարծում կոմունիստական գաղափարախոսության ջատագովները: Այդ գաղափարախոսությունը, սակայն, ամենևին էլ ստվեր չգցեց Արշալույս Աստվածատրյանի գրական-հասարակական գործունեության վրա, ոչ էլ նսեմացրեց նրա անցած ուղին:

Ճակատագրի բերումով Արշալույս Աստվածատրյանին վիճակված էր ապրել տարագրության մեջ՝ Սերբիայում: Ինչ իմանար, սակայն, 1883-ին Քանաքեռում, ուսուցչի ընտանիքում ծնված, ապա Երևանի թեմական դպրոցն ավարտելուց հետո մանկավարժությամբ զբաղվող Արշալույսը, որ հայրենի Քանաքեռի ճամփաները տանելու են իրեն ավելի հեռու՝ Բելգրադ, ուր պիտի ապրեր մինչև խոր ծերություն և իր հանգիստը գտներ սերբական հողում:

Բելգրադում ապրելու և ստեղծագործելու տարիներին շատ առիթներ եմ ունեցել հանդիպելու Արշալույս Աստվածատրյանի դուստրերին՝ Էմմային և Ցողիկին, նաև թոռանը՝ Սուրենին: Այդ հանդիպումները շատ բանով նպաստել են Աստվածատրյանի կյանքին ու գործին ավելի մոտիկից ծանոթանալուն, տարագրության մեջ ապրող հայի հայրենասիրական-գաղափարական հայացքները խորությամբ ընկալելուն:

Հայ ժողովրդի համար Սարդարապատի բախտորոշ ճակատամարտը անքակտելիորեն ձուլված է Աստվածատրյանի կենսագրությանը և գործունեությանը: Հովհաննես Քաջազնունու կառավարության կազմում լուսավորության փոխնախարար էր, որոշ ժամանակ անց՝ Երևանի քաղաքային խորհրդի անդամ, ապա՝ քաղաքապետի օգնական: Մուսինյանի հրաժարականից հետո Արշալույս Աստվածատրյանը դառնում է Երևանի քաղաքագլուխ: Եվ, ահա, 1920 թվականին Հայաստանի խորհրդայնացումից հետո բարձրաստիճան շատ պաշտոնյաների ու ղեկավար աշխատողների հետ միասին բանտում հայտնվեց նաև Աստվածատրյանը: 1921-ի փետրվարյան ապստամբությունից հետո ազատվեց բանտից, և առանց կնոջ ու զավակների Հայաստանից փոխադրվում է Իրան, ուր հայրե-

Արշալույս Աստվածատրյան, 1920 թ.Երևան



Ձախից աջ՝ Ցողիկ, Անահիտ Մուրադյան, Էմմա, Արամ Մուրադյան, Գուրգեն, 1925 թ.,Բաթում

նակիցների օգնությամբ ձեռք է բերում իրանական անձնագիր, որով մեկնում է Հալեպ, ապա՝ Բեյրութ, որտեղից էլ՝ Մարսել: Կարմիր խաչի միջոցով գտնում է աներորդուն՝ Հմայակ Մուրադյանին, որ բժիշկ էր և այդ ժամանակ ապրում էր սերբական Վրշաց քաղաքում: Արշալույսը Մարսելից փոխադրվում է Վրշաց և այդ մասին տեղեկացնում կնոջը՝ Անահիտ Մուրադյանին, ով իր երեք զավակների՝ Էմմայի, Գուրգենի ու Ցողիկի հետ անորոշությամբ էր ամուսնու նոր տեղեկություններին: Իմանալով, որ Արշալույսը հաստատվել է Վրշացում, 1924-ին մեծ դժվարությամբ կարողանում է ձեռք բերել այն ժամանակվա բոլշևիկյան կառավարության անձնագիր և իր զավակների հետ 1925-ի մայիսին հեռանում է Երևանից: Կրտսեր եղբոր՝ Արամի օգնությամբ հասնում է Բաթում: Ֆինանսական սուղ պայմանների պատճառով որոշում են թուրքական բեռնատար նավով ուղևորվել Տրիեստ: Ճամփա ընկնելուց օրեր անց Արամը Սերբիայում ապրող եղբորը՝ Հմայակին տեղեկացնում է բեռնատար նավով ճամփորդելու անհարմարավետության ու դժվար պայմանների մասին: Հմայակն իսկույն փող է ուղարկում քրոջը՝ հնարավորություն տալով տեղ հասնել ավելի հարմարավետ՝ իտալական մարդատար նավով: Տրիեստում Անահիտին ու զավակներին դիմավորում է Արշալույսը և տանում Վրշաց: Այդպես ընտանիքն ամբողջանում է և Արշալույսը լծվում է զավակներին կրթություն ապահովելու հոգսերով: Շատ տրամաբանական էր, որ ազգային գաղափարներով տոգորված հայը, ինչպիսին Աստվածատրյանն էր, օտարության մեջ իր զավակների հոգում հայրենասիրության սերմեր պիտի սփռեր: Եվ, առաջին հերթին, մայրենի լեզվի միջոցով: Ընտանիքում բացառապես հայերեն էին խոսում, երբեմն՝ ռուսերեն: Աստվածատրյանի ընտանեկան զրույցները հայրենասիրության իսկական դասեր են եղել, որոնցով նա զավակների մեջ վառ է պահել հայաստանասիրությունը և պատմական հայրենիքը վերագտնելու երազապաշտ ոգին: Դա հստակ նկատելի էր նրա դստեր՝ տիկին Էմմայի հետ (արդեն հանգուցյալ) իմ հանդիպումների ժամանակ: Ակամայից զարմանում էի, թե որտեղի՞ց նրա խոսակցականում երևանյան հայերենը: Պատմում էր, որ մի քանի անգամ այցելել է իր ծննդավայրը՝ Երևան, տեսել հարազատներին ու ազգականներին: Ասում էր, որ Աստվածատրյանի մահից հետո պարբերաբար կապ է հաստատել սփյուռքում ապրող հոր դաշնակցական ընկերների հետ՝ դրանով վառ պահելով նրա հիշատակը:

Սերբիա փոխադրվելուց հետո Աստվածատրյանը երբեք չխզեց կապերը համախոհների, դաշնակցական գործընկերների հետ: Մինչև խոր ծերություն աշխատակցում

Անահիտ և Արշալույս Աստվածատրյաններ, 1970 թ.Բելգրադ

էր սփյուռքում լույս տեսնող հայկական ամսագրերին ու թերթերին: Նրա բելգրադյան փոստարկղը համարյա ամեն օր լի էր նամակներով ու թերթերով: Հիշողությանս մեջ մնացել են հնաոճ կահույքն ու կոմինդրե վառարանը, որոնք Աստվածատրյանի կյանքի բելգրադյան շրջանի լուռ վկաներն են:

Բելգրադում իմ անցկացրած տարիներին տիկին Էմման մի անգամ տուն հրավիրեց: Երկար զրուցեցինք, պատմեց հոր մասին, ցույց տվեց խունացած, արդեն պատմություն դարձած լուսանկարներ, նամակներ, արխիվային նյութեր: Նաև՝ հայերեն ու ռուսերեն տասնյակ գրքեր, որոնք տարիների ընթացքում խնամքով հավաքել էր հայրը:

Սերբահայ համայնքում մեծ հեղինակություն ու հարգանք էր վայելում: Նրա բելգրադյան բնակարանը միշտ մարդաշատ էր: Հաճախ էին գալիս սերբ մտավորականներ: Սփյուռքահայեր՝ ավելի հազվադեպ: Բելգրադահայերը, որ հիմնականում զբաղվում էին վաճառականությամբ, հաճախ էին այցելում Աստվածատրյանին, որի բնակարանը մի փոքրիկ Հայաստան էր հիշեցնում, դարձել էր հայրենիքի խորհրդանիշ:

Շատ մտերիմ էր Թալեաթի ահաբեկիչ, բելգրադաբնակ Սողոմոն Թեհլիրյանի և նրա մասին ծավալուն հուշագրության հեղինակ Վահան Մինախորյանի հետ: Վահանի մասին Աստվածատրյանի գրած ծավալուն ակնարկը և Սողոմոն Թեհլիրյանի մահվան առթիվ գրված խոսքը ոչ միայն հրապարակախոսության լավագույն նմուշներ են, այլև՝ մեր ժողովրդին մինչև վերջերս անհայտ պատմության կարևոր վավերագրեր:

Աստվածատրյանը Սարդարապատի հերոսամարտի ժամանակակիցներից էր, հայ ժողովրդի պատմության փայլուն հատվածի վավերագրողը: Նրա հրապարակումներից շատերը լույս են տեսել սփյուռքում հրատարակվող «Հայրենիք», «Վեմ», «Հուսաբեր» ամսագրերում, քանի որ Խորհրդային Հայաստանում արգելված էր Դաշնակցության գործունեությունը: Այդ հանդեսները, անշուշտ, ուղարկվում էին Երևան, սակայն դրանք պահվում էին մեր գրադարանների փակ ֆոնդերում, որոնց հասու էին սահմանափակ թվով մարդիկ, այն էլ՝ պաշտոնական գրությունների միջոցով: Ցավոք, մինչև վերջերս հայաստանաբնակ ընթերցողը անծանոթ էր Արշալույս Աստվածատրյանի կյանքին ու գործին: Դաշնակցական լինելը բավական էր, որ նրա անունը երբեք չհիշատակվեր Խորհրդային Հայաստանում: Ու երբ տասնամյակներ անց փշրվեցին կոմունիստական գաղափարախոսության պարիսպները և ստեղծվեց աշխարհաքաղաքական նոր իրավիճակ, փակ պահոցներից դուրս հանվեց «գաղտնի» համարվող գրականությունը, որ գաղափարական նոր դարաշրջան պիտի բացեր՝ մեզ ավելի մոտեցնելով ազգային ակունքներին:

Սարդարապատի հերոսամարտին վերաբերող նրա արժեքավոր հրապարակումները նորանկախ Հայաստանի պայմաններում հասու դարձան բոլորիս: Աստվածատրյանի անունը մայր հայրենիքում նորովի հնչեց: 2007-ին լույս տեսած «Սարդարապատի պատմաշինությունը և այլ երկեր» գրքում, որ կազմել է պատմական գիտությունների դոկտոր Վարդան Գրիգորյանը, ամփոփված են հեղինակի հուշագրություններն ու հոդվածները իր ժամանակակիցների, գաղափարակից ընկերների, հայ-թուրքական հարաբերությունների մասին, Սարդարապատի պատմաշինությանը վերաբերող ուշագրավ նյութեր:

Արշալույս Աստվածատրյանի անունը հայրենիք վերադարձավ արժանապատվորեն ու հանդիսավոր, տասնամյակներ անց կրկին թևածեց Հայոց երկնքի տակ: Աճյունը՝ Բելգրադում, հոգին՝ Հայաստան երկրի ու հայ ժողովրդի հետ:

ՀԱՅԵՐԸ ԱՄՆ-ՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱՆՑԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արմինե Ամիրյան

1915 թվականն ու հայերի նկատմամբ իրականացված աննախադեպ ոճիրը՝ ցեղասպանությունը, դարձավ այն հիմքը, որով հայերը սփռվեցին աշխարհով մեկ: Օտար ափերում ձեռք բերելով երկրորդ հայրենիք ենթարկվեցին օտար օրենքներին, կազմեցին ընտանիքներ ու ստեղծագործ աշխատանքով իրենք իրենց ու աշխարհին ապացուցեցին, որ հայն ուր էլ լինի հայ է մնում: Հային որքան էլ հարկադրաբար հանեն իր բնօրրանից, միեւնույն է, հայը աշխարհին իր ձայնը լսելի է դարձնելու: Միեւնույն է՝ մի օր աշխարհի գլխավոր մայրաքաղաքներում խոսելու են հայերին հուզող խնդիրների մասին, միեւնույն է՝ մի օր հայն ինքն է օտար ափերում հանդես գալու որպես սեփական խնդիրները լուծող: Ցեղասպանությունը պատմության այն էջն է, որն ընդհանուր պատմություն է ստեղծել բոլոր հայերի համար՝ անկախ բնակման վայրից, այն հիմքն է դարձել, որով յուրաքանչյուր հայ արդարության հասնելու պայքարի գիտակցումը վերածել է կենսակերպի: Ասում են, առաջին հայը ԱՄՆ է եկել «Մեյ Ֆլաուեր» պատմական նավով, 400 տարի առաջ, որտեղ ճամփորդների ցանկում գրված է եղել՝ Մարտին դը Արմենիան: Հետագայում տարբեր պատճառներով ԱՄՆ են տեղափոխվել հայեր աշխարհի տարբեր մասերից, իրենց հետ բերելով սեփական երկրի մշակույթն ու սեփական մշակույթը պահելու ու ներկայացնելու անկոտրում կամքը: Հայերի գաղթը դեպի ԱՄՆ սկսվել է Համիդյան դեպքերի տարիներին՝ 1890-ական թթ: Սկզբնական շրջանում հայերը հաստատվել են Արեւելյան շրջաններում, երկրագործական աշխատանքով զբաղվել ցանկացողները եկել են Կալիֆորնիա, մասնավորապես Ֆրեզնո: Կարճ ժամանակ անց հայերը զբաղեցրել են տարբեր պաշտոններ, աշխարհի երեւելիների ցանկում ի հայտ են եկել հայկական ազգանուններ: Մոսկվայից ու Լոս Անջելեսից հետո հայերով բնակեցված երրորդ խոշոր բնակավայրը Գլենդելն է: Գլենդելում բնակվող ուսանողների 40 տոկոսը հաճախում են հայկական կրթական հաստատություններ, քաղաքային իշխանության պատասխանատուները եւս հայեր են: Մեծ թվով հայեր բնակվում են նաեւ Հոլիվուդում, որը 1970 թվականից սկսած դարձավ հայ գաղթականների սիրտը: Առաջին հայերը այստեղ են եկել Իրանից, Իրաքից, Իսրայելից, որոնց համար Հոլիվուդը դարձավ վերջնական կանգառ: Բացվեցին հայկական հաստատություններ, իսկ մի փոքր ավելի ուշ Հոլիվուդի մի մասը պաշտոնապես անվանվեց Լիթլ Արմենիա՝ Փոքր Հայաստան: Աստիճանաբար նաեւ ԱՄՆ-ի այլ նահանգներում հիմնվեցին հայկական տարբեր հաստատություններ, որոնց

գործունեության գլխավոր նպատակը դարձավ հայապահպանությունը եւ աշխարհասփյուռ հայությանը հուզող խնդիրների բարձրացումը եւ լուծումը: Այս առումով ցեղասպանության խնդիրն ու դրա ճանաչումը, հատկապես ԱՄՆ-ի կողմից, դարձավ գործունեության գլխավոր նպատակ: Թե երբ կճանաչի ԱՄՆ-ը հայոց ցեղա-սպանությունը՝ այս հարցի պատասխանը չգիտե անգամ 28 տարի քաղաքականությամբ զբաղված, 8 տարի Կալիֆորնիայի նահանգապետի պաշտոնը զբաղեցրած Ջորջ Դուքմեջյանը: Ջորջ Դուքմեջյանը ծնվել է ԱՄՆ-ում: Ծնողները գաղթել են Թուրքիայից: ԱՄՆ-ում նա լայն ճանաչում ունի, Կալիֆորնիայի միակ նահանգապետն է եղել, ով անմիջական աշխատել է նախագահ Ռեյգանի հետ, ի դեպ՝ երկուսն էլ հանրապետական են:

ԱՄՆ-ն այսօր աշխարհում կարեւոր դերակատարություն ունի, միաժամանակ ԱՄՆ-ը ցանկանում է լավ հարաբերություններ ունենալ այլ երկրների հետ, եւ սա ոչ միշտ է բխում հայ ժողովրդի շահերից: Մենք չգիտենք, թե երբ ԱՄՆ-ը կճանաչի հայոց ցեղասպանությունը, բայց մենք շարունակելու ենք այդ ուղղությամբ մեր աշխատանքները,- ասում է Դուքմեջյանը:

Ջորջ Դուքմեջյանը վստահ է, որ ԱՄՆ-ի առաջիկա նախագահական ընտրությունները անչափ կարեւոր են լինելու նաեւ այս երկրի արտաքին քաղաքականության առումով:

Հանրապետական ու դեմոկրատ կոնգրեսականները շարունակում են աշխատել հայերին հուզող առավել գլոբալ հարցերի լուծման ուղղությամբ: ԱՄՆ-ում այսօր վստահաբար կարելի է ասել, որ հայկական լոբբին իր ազդեցիկությամբ չի զիջում եւ ոչ մի լոբբիստական կազմակերպության: Թուրքական Լեւինգստոնի հայտնի լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում տարեկան միլիարդավոր դոլարներ է ծախսում քարոզչության համար, սակայն արդյունքները չեն անցնում սպառնալիքների սահմանագիծը, իսկ հայերը հաղթում են, որովհետեւ ճշմարտությունն իրենց կողմն է, ասել է թե թուրքերը երկու մեծ խնդիր ունեն. առաջին ամենագլխավորը այն է, որ ճշմարտությունը իրենց հետ չէ, իսկ երկրորդը՝ որ ԱՄՆ-ում չկան այնքան թուրքեր, ովքեր ակտիվորեն լոբբիստական գործունեություն կծավալեին: Իսկ պատմությունը ջնջել եւ նորից գրել մինչ օրս չի հաջողվել եւ ոչ մեկին: Մեծ աղմուկ հանած 106-րդ բանաձեւը նախորդ գումարման Կոնգրեսում ներկայացված նույն՝ «Բանաձեւ 316»-ն է, որը գերակշռող ձայներով ընդունվել էր Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում: Սակայն լիագումար նիստում քվեարկությանը խոչընդոտել էր նախկին խոսնակ Դենիս Հասթերթը: 106-րդ բանաձեւը կոչ է անում ԱՄՆ-ի նախագահին «ապահովել, որպեսզի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն արտացոլի պատշաճ ըմբռնում հայոց ցեղասպանության հարցում, եւ ապրիլի 24-ին նախագահն իր ամենամյա ելույթում 1915-ի դեպքերը որակի որպես ցեղասպանություն: Դեմոկրատների հաղթանակից հետո ստեղծվել են բանաձեւի ընդունման լավագույն հնարավորությունները», համոզված են ամերիկահայ կազմակերպությունների ներկայացուցիչները: «ԱՄՆ-ը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պատմական, բարոյական խորը պատճառներ ունի, սակայն ունենք նաեւ ներկայից բխող պատճառներ»,- հայտարարել է Ադամ Շիֆը: Ըստ կոնգրեսականների, աշխարհին ու Թուրքիային ուղերձ հղելու առումով այս բանաձեւը բացառիկ կարեւորություն ունի: Սույն բանաձեւը հիմնված է 30 տարբեր փաստերի վրա, ԱՄՆ-ի տարբեր ժամանակների տարբեր պաշտոնյաներ 1915 թվականի դեպքերը որակել են որպես ցեղասպանություն, եւ այդ փաստերն այսօր առկա են ԱՄՆ-ի արխիվներում: Որպես խոսուն փաստ նշված է նաեւ ՄԱԿ-ի համապատասխան կոնվենցիան, որով 1915 թ. դեպքերը լիովին մտնում են ցեղասպանություն հասկացության տակ: 1975 թվականից ի վեր ցեղասպանության վերաբերյալ ավելի քան 10 բանաձեւ է ներակայացվել Սենատ, իսկ Կոնգրեսին՝ ավելի քան 20 բանաձեւ: Արդյունքները տարբեր են եղել, մասամբ դրական, մասամբ էլ՝ բացասական, սակայն բոլոր բանաձեւերի բովանդակությունը ըստ էության նույնն է եղել: Այսօր, երբ դեմոկրատները մեծամասնություն են, նախագահը պարզապես չի կարող

անտեսել կամ շրջանցել նրանց կողմից ընդունված որոշումը: Բայց եւ այնպես, այսօր ամերիկահայ կազմակերպությունները աշխատում են թե դեմոկրատների եւ թե հանրապետականների հետ, քանի որ հաջողության համար հավասարապես անհրաժեշտ է երկու կողմերի աջակցությունն էլ:

Թուրքերի պայքարն այսօր արտահայտվում է ոչ միայն պաշտոնական պատվիրակությունների այցելություններով, այլեւ արվում է հնարավոր ամեն ինչ, որպեսզի թուրքական հարցերով զբաղվող հանձնախմբի անդամների թիվը ավելանա: Թուրքերին սպասվում է համառ պայքար, ասել է թե ամեն ինչ միայն նոր է սկսվում: Մեկ բան հստակ է, որ այս բանաձեւի ընդունումը Ամերիկայի հայկական համայնքի համար ինքնանպատակ չէ. բանաձեւը կընտիպի Թուրքիային ընդունել Հայոց ցեղասպանության փաստը, բացել Հայաստանի հետ սահմանը, իսկ աշխարհը կդառնա ավելի արդար ու ընդունող:

ՀՅԴ Վաշինգտոնի գրասենյակի ղեկավար Արամ Համբարյանը երկար տարիներ է զբաղվում լոբբիստական գործունեությամբ: Նա կարծում է, որ հայ-ամերիկյան հարաբերությունները արագ տեմպերով են զարգանում: Մասնավորապես տնտեսական ոլորտում տարեցտարի նոր արդյունքներ են գրանցվում:

«Ես հավատում եմ, որ մեկ օր Կոնգրեսը կընդունի Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւը: Նախագահի թեկնածուներից շատերն են խոստացել, որ կճանաչեն Հայոց ցեղասպանությունը, բայց նախագահ դառնալուն պես չեն կատարել իրենց այդ խոստումը: Թուրքիայի կառավարությունը այստեղ միլիոնավոր դոլարներ է ծախսում լոբբիստական գործունեության համար: Բայց մենք առանց միլիոնավոր դոլարներ ծախսելու հաղթում ենք, որովհետեւ արդարությունը մեր կողմում է: ԱՄՆ-ը պարզապես չի ցանկանում կորցնել իր ռազմավարական գործընկերոջը: Թուրքիայի հետ հարաբերություններն այս երկրի համար կարեւոր են»,- ասում է Արամ Համբարյանը:

Արամ Համբարյանն ուրախությամբ է պատմում, որ սփյուռքում ապրող հայերի համար Հայաստանի անկախության գաղափարը անչափ կարեւոր է, շատ կարեւոր է, որ Հայաստանն այսօր համաշխարհային քարտեզի վրա փոխել է իր դերն ու նշանակությունը: Գերիզորներն այսօր Հայաստանի հետ իրենց համագործակցությունը կառուցում են միանգամայն այլ հարթության վրա:

Գլենդելի ազգությամբ հայ առաջին քաղաքապետը Լարի Զարյանն է եղել: Նա 1983 թվականին ընտրվել է 210 հազար բնակչություն ունեցող քաղաքի քաղաքապետ: ԱՄՆ է եկել 1952 թվականին Իրանից: Երկար տարիներ զբաղվել է քաղաքականությամբ: Մինչ օրս միակն է, ով երեք անգամ անընդմեջ, 16 տարի շարունակ, զբաղեցրել է քաղաքապետի պաշտոնը: Նահանգապետ Շվարցենեգերի կողմից վերջերս նշանակվել է որպես 37 մլն. բնակչություն ունեցող Կալիֆորնիա նահանգի տրանսպորտի հարցերով 9 համակարգողներից մեկը: Լարի Զարյանը համոզված է, որ միասնական ուժով կարելի է լուծել ցանկացած խնդիր: Լարի Զարյանը Հայաստանում 25 տարի առաջ է եղել, փոփոխություններն իր համար ակնհայտ են: Ասում է՝ Հայաստանի զարգացումը օգնում է նաեւ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացմանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մեծ թվով հայեր ԱՄՆ-ից ու այլ վայրերից տեղափոխվել են Վաշինգտոն: Այստեղ առաջին իսկ պահից եկեղեցին դարձել է այն վայրը, որ համախմբվում են համայնքի ներկայացուցիչները տարբեր առիթներով: Հոգեւոր առաջնորդները վրստահեցնում են, որ ԱՄՆ-ում հոգեւոր դաստիարակության առումով զգալի աշխատանք է կատարվում: Հաճախ կազմակերպվում են հավաքներ, որ ներկայացվում են եկեղեցու պատմությունն ու անցած ճանապարհը: Ավանդույթների պահպանմանը մեծ տեղ են տալիս: Եկեղեցական տարբեր արարողություններ հաճախ են լինում:

Եկեղեցու հովանու ներքո գործող դպրոցներում հայեցի դաստիարակությունը եւս անչափ կարեւորվում է: Այստեղ փոքրիկները ունեն լիարժեք պատկերացում Հայաստանի մասին, հաճախ այցելում են նաեւ Մայր Հայրենիք:

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ



ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՄԵՋ

Արամ Մանուկյանի (բուն անունով՝ Սարգիս Հովհաննիսյան, 1879-1919) հեղափոխական գործունեությունը կը սկսի շատ կանուխ, աշակերտական նստարաններեն (Շուշի, Երեւան) մինչեւ Պաքու եւ մանավանդ Կարս, ուր արդեն իբրեւ ղեկավար դեմք երեւան կուգա Սերգեյ անունով: Հակառակ անոր, որ ժամանակակիցներու հուշագրությանց մեջ առատ վկայություններ կան մեծ հեղափոխականին մասին, բայց Հ.Յ.Դ. արխիվներուն մեջ այս ժամանակաշրջանին վերաբերող եւ իր իսկ գրչին պատկանող գրություններու չենք հանդիպիր:

Հայտնի է, որ երիտասարդ տարիքեն Արամ Մանուկյան ջերմորեն կը ղեկավարեր Երկիր՝ հատկապես Սասուն անցնիլ եւ իր մասնակցությունը բերել տառապող ժողովուրդի ազատագրական պայքարին: Այդ երազը իրականացավ միայն 1904 թ. ետք, այն ալ ոչ թե Սասուն, այլ Վան-Վասպուրականի մեջ գործելու համար: Նախքան հոն հասնիլը, Արամ Մանուկյան քանի մը ամիս հաստատվեցավ Ատրպատական, պատմական Ս. Թադեի վանքը (Մենավոր) եւ զբաղեցավ դեպի Երկիր զենք-զինամթերքի փոխադրության այնքան կենսական գործի կազմակերպումով:

Արամի գրչեն ելած եւ մեզի հասած առաջին գրությունները ահա կը պատկանին այս ժամանակաշրջանին, 1904 թ. աշունեն 1905 թ. փետրվար ամիսը, երբ վերջապես հաջողեցավ անցնիլ Վան, ուր ան տասնամյակ մը ամբողջ պիտի տաներ այնքան բեղմնավոր աշխատանք:

«Դրօշակ»-ի այս թիվով կը ներկայացնենք Արամ Մանուկյանի կողմե տարբեր հասցեներու ուղղված նամակներեն մի քանիսը: Անոնք որոշ պատկերացում կուտան անշուշտ դեպի Երկիր զենք-զինամթերքի փոխադրության հետ կապված բազմապիսի դժվարություններուն եւ վտանգներուն մասին, զորս դիմագրավելու եւ հաղթահարելու կոչված էին պատասխանատու մարմիններն ու գործիչները: Ատիկա տարիներու վրա երկարող ամենօրյա գործ էր, շրջահայաց արթնություն եւ խիզախ արիություն պահանջող գործ, որուն առջեւ տկարանալու իրավունք չունեին հայրենիքի եւ սեփական ժողովուրդի ազատագրության նվիրված այրերը:

Եվ Արամ Մանուկյան ընտիրներեն մեկն էր այդ արի այրերեն:

Ե. ՓԱՄՊՈՒԿՅԱՆ



Վահան Փափազյան (Կոմս)

Փաստ. 468-4

Սիրելի Կոմս(1)!

Ամսուա 4-ին ստացա Սահակի ձեռքով ուղարկած ձեր Դեկ. 24 թվակիր նամակը եւ դրա հետ մի քանի պատմական հնություններ – պ. Տիգրանի(14) Հոկտեմ. թվակիր նամակները, որոնք ուղղված էին Արտուրին եւ բովանդակությամբ ինչպես ասացի միայն հնագետնե-րի հետաքրքրության առարկա կարող է դառնալ... Բոլորը կիրծեցոց(10) լրբություններն են, ամիսներով նամակները եւ ապրանքները հոն քնացնում են, թեեւ ձեր նամակներից երեւում է որ շուտով հասցնելու համար կարգադրություններ արած եք, բայց երբ բացատրություն պահանջեցի ավետարանցիներեն(15), պատճառաբանում են, թե դուք առհասարակ պատվիրել եք նամակները բերել մինչեւ Կիրծ, ձգել հոն, բերին չբերին իրենց գործը չէ: Փոխադարձաբար նույնը եւ կիրծեցիք են ասում: Ես այս անգամ պատվիրեցի, որ ավետարանցիք եւ կիրծեցիք նամակները առանց իրար հրամցեք անելու, բերեն մինչեւ հոս, այլապես 6 օրից ավելի ուշացած նամակների համար խստիվ պիտի պատժվեն: Փոխադրություն այժմ էլ հնարավոր էր մինչեւ Ավետարան, բայց հոս համարյա ապրանքներ չկան, եւ մեծապատիվները պատվիրել են ինձ ձիանով տեղափոխություն չանել... Ես վաղը մի 10 օրով կերթամ Ավարայր(6) մի քանի կարեւոր խնդիրների համար խոսելու, մանավանդ խմորների(16) եւ խնձորների(17) տեղափոխու-թյան մասին հոգ տանելու. գոնե ահագին խնձոր ու խմոր կը տեղափոխենք, եթե հոս լիներ, մինչեւ Ավետարան իսկ՝ այնտեղից այդ կողմը ասում են հեշտ է... Ի դեպ 3-րդ նամակումս էլ գրել էի Ավետարանի ուսուցիչ զուրնաչու(18) մասին (նրանք Կովկասում այժմ այդ անունով են կոչվում). նա հոն լրբություններ է անում եւ գյուղը երկու մասի է բաժանել. այդ հրեշին պատվիրել եմ կամ այդ, կամ այս կողմը թռցնելու: Նամակներ է գրում հոս մեր գյուղի Ռեսին, եւ կարծեք հոս էլ օջախ, բայց օպոզիցիայի օջախ հիմնելու նկատումներ ունեն: Հայտնեցեք նրանց մեծապատիւ ներկայացուցիչներին, որոնք վերջերս եկան միայն. որ եթե այդ ընթացքով գործ սկսեն եւ կատարեն, մեր սիմպատիան ոչ մի պարագայում նրանց կողմը չի կարող լինել. ոչ միայն այդքան պլատոնական վերաբերմունք ցույց կը տանք, այլ եւ բացարձակ կերպով նրանց բոլոր գործողությունները կարգիլենք. долой маску...(8) գառան մորթով մտնողներից են. մեղքը մերոնցն է որ նրանց երես տվին եւ հարմարություններ ստեղծեցին ձեր շրջանն էլ մուրտառելու...

Հեռագիր ուղղակի ես այդտեղից ուղարկեցի Սարուստան(9)..

Մեր գալը առայժմ անհնարին է ձյունների շատության պատճառով, Սահակին կը պահեմ մինչեւ ***մեծ պահքը****(37) մեզ հետ գալու համար, իսկ եթե մեծ կարիք կա, գրեցեք իսկույն ձամբեմ, թեեւ մի ամսից ավելի չենք ուշանա հոս... կը հետեւիմ ձեր խորհուրդներին*

Ծանոթագրություններ

1. Կոմս – Վահան Փափազյան, Վանի հանրածանոթ գործիչներեն, որ այդ օրերուն Դաշնակցության ներկայացուցիչն էր Վասպուրականի մեջ:
2. Դաշնակցության Խորհուրդ – Արեւելյան եւ Արեւմտյան Բյուրոներու, պատասխանատու Կ. Կոմիտեներու եւ ինքնապաշտպանության մարմիններու ներկայացուցիչներեն կազմված վերին մարմին, որ Ընդհ. ժողովներու միջեւ ինկող ժամանակաշրջաններուն պարբերաբար գումարվելով, կը վճռեր այժմեական բնույթ ունեցող կարեւորագույն հարցերը:
3. Շամ – Վան քաղաքի եւ Վասպուրականի Կ. Կոմիտեության կուսակցական ծածկանունը:
4. Մենավոր կամ Վանք – թուրք-պարսկական սահմանագլխին, պատմական Արտազ գավառի մեջ, Ս. Թադեի վանքը, որ կը ծառայեր իբրեւ կարեւորագույն կայան մարտական խումբերու եւ զինամթերքի երկիր անցման:
5. Մեծ Քաղաք (Մ. Ք.) – Թիֆլիս քաղաքը եւ կամ Հ.Յ.Դ. Արեւելյան բյուրոն:
6. Ավարայր-Պարսկահայքի Խոյ քաղաքին կուս. ծածկանունը:
7. Օրերու բացվելուն – այսինքն՝ ծմռան եղանակի ավարտին:
8. Բնագրին մեջ ռուսերեն – Կորչի դիմակը...
9. Սարուստան – ծածկանուն՝ տրված Կովկասի եւ Ռուսաստանի կուսակցական ցանցին, որ կը բաղկանար 10 Կեդր. Կոմիտեություններե. կը գործածվեր նաեւ Ռուսաստանի եւ Կովկասի համար:
10. Կիրճ – ծածկանուն՝ թուրք-պարսկական սահմանագլուխի քրդաբնակ Գյադուկ գյուղակին:

Մալխաս

գալուց:

Գրել էիք թե խմորային(16) արհեստին ծանոթ լինել – չեմ հասկանում: Գիտեք միայն **լեցնել** թե **էլեկտրական պատարիաներով** էլ գիտեք:

Պիտի իմանաք որ արհեստին ծանոթ լինել նշանակում է – որ եթե նյութերի բաղադրությունը լինի, կարող է նոր գումար պատրաստել – բայց սա թեեւ մեզ համար անգործնական բան է, որովհետեւ ինչպես ինձ թվում է հոտ նյութեր ճարելը դժվար է. մնում է օգտըվել պատրաստի եղածներից. իսկ օգտվել նա կարող է շատ հաջող կերպով, որովհետ[եւ] լավ ծանոթ է եւ գործնականապես էլ փորձված. ինչ վերաբերվում է թե **էլեկտրական պատարիաներով** էլ գիտե, այդ գործիքին էլ ծանոթ է եւ գործնականապես էլ փորձված է, գործիքը կար Մրգաստանում(19), պատվիրել էինք մեզնից հետո ուղարկել Ավարայր(6), եթե ուղարկած չլինին, հենց նույն մարդը կուղարկեմ, կերթա հոն վերջին անգամ կը փորձե, հոսանքի մեծ պաշար կը վերցնե եւ մինչեւ մի ամիս հոս կը գա...

Գրում եք թե ձեզնից ո՞վ ինչ կարող է անել. առանձին նամակով գրել էի ընկերներիս մասին, իսկ իմ մասին պիտի գրեին Մ. Ք.-ից(5). միթե մինչեւ հիմա ոչի՞նչ չեն գրել. դեհ, ինչեւիցե, կը գանք ինչ որ ձեռքովս կը գա կանեմ... գոնե մեծ ճանապարհի վրա քար կը փշրեմ:

Դրամի մասին կը գրեմ Մրգաստան(19). ի դեպ իմ գալու օրերը մրգաստանցիք ասում էին, թող պաշտոնապես Կոմը մեզ հետ կապվի, Մ. Ք.-ի համաձայնությամբ մենք բոլոր պահանջներին ժամանակին լրացում տանք, եւ ի զուր տեղը այս եւ այն կողմը չընկնի: Թեեւ ես առարկեցի մրգաստանցիներին հատուկ այդ պաշտոնականության մասին, բայց էլի լավ կը լինի, որ այդպես մի բան անեք: Սարուստանից(9) շատ քիչ դրամ է գալիս Վրեժ(20), հազիվ սրանք իրենց ծախսերը ծածկեն:

Ստացա Ավետարանցի(15) Մարգարից Մալխասի(11) տուփը եւ Արտուրի շալը. մնացած իրերը դեռ չէ եկել:

Պարոն Տիգրանին(14) կը հայտնեք որ Արտուրը հոս չէ, այնպես [որ] նամակներում եղած հարցերին առայժմ ես չեմ կարող պատասխանել, որովհետեւ այդ հարցերին մեծ մասամբ անծանոթ եմ: Իսկ ինչ վերաբերում է թե Կովկասում ինչ նորություններ կան, այդ մասին մի այլ նամակ կը գրեմ, որի մեջ կը գրեմ մեր շրջանների վերջին օրերի տրամադրությունը, պատերազմի առթիվ ներքին խռովությունների բնավորությունը եւ հետեւանքները: Գրեցեք թե ինչ նյութեր է ձեզ համար հետաքրքիր, ես էլ ըստ այնմ ձեզ տեղեկություններ տամ:

Հարգանքներով

ԱՐԱՄ

1905 թ. Հունվար 6-ին

11. Մալխաս – բուն անունով Արտաշես Հովսեփյան, հեղափոխական գործիչ նախ Ատրպատականի եւ ապա Վասպուրականի մեջ:
12. Ջրաբերդ - Կարս քաղաքի եւ Կեղր. Կոմիտեության ծածկանունը:
13. Իշխան – Վասպուրականի հայտնի գործիչ Նիկոլ Պողոսյան-Միքայելյան: Ծանոթ Վանա Իշխան անունով եւ կազմակերպիչը Վասպուրականի լեռնային գավառներուն (Շատախ, Մոկ եւ այլն):
14. Տիգրան – Վան-Վասպուրականի Կ. Կոմիտեի անդամ:
15. Ավետարան – թուրք-պարսկական սահմանագլուխի հայաբնակ Խաչան գյուղը:
16. Խմոր – վառոդ, պայթուցիկ նյութ:
17. Խնձոր – նռնակ, ռումբ:
18. Ջուռնաչի – հնչակյան:
19. Մրգաստան – Երեւան եւ Երեւանյան նահանգի կուսակցական ծածկանունը:
20. Վրեժ – Թավրիզ քաղաքը եւ Ատրպատականի Հ.Յ.Դ. կազմակերպությունը:
21. «Ներսը» – Երկիրն է ընդհանրապես. այս պարագային Վան-Վասպուրականը:
22. Բարձրավանդակ – Սասունի կուս. ծածկանունը. հոս կակնարկվի 1904 թ. Սասնո ապստամբության:
23. Վարդան – ամենայն հավանականությամբ Խանասորա Վարդանն է. բուն անունով՝ Մեհրաբյան Սարգիս:
24. Մինարեթ – Սալմաստ քաղաքի կուս. ծածկանունը:
25. Փայլակ – Ատրպատականի հին գործիչներեն. իսկական անունը՝ Ռուբեն Դերձակյան:
26. Սամսոն – Թադեւոսյան Սամսոն, ծանոթ նույնպես Գարեգին ծածկանունով, քեռորդին Քրիստափոր Միքայելյանի: Կը ղեկավարեր Ատրպատականեն դեպի Վասպուրական մարտական խումբերու եւ զինամթերքի փոխադրության գործը:

Վարդան

27. Անմեղյանց – ծածկանուններեն մեկն է Սեւքարեցի Սաքոյին (Ծովիանյան):
28. Քար – Ալեքսանդրապոլ-Գյումրի քաղաքը եւ շրջանի Կ. Կոմիտեությունը:
29. Արամայիս (Ազնավուրյան) – Կարսի գործիչներեն:
30. Վարդապետ – Ս. Թադեի (Մենավոր) վանահայր Գեվորգ վարդապետ Նալբանդյանն է, ավելի ծանոթ Ընծայր ծածկանունով. նվիրյալ հեղափոխական գործիչ, որ անգնահատելի ծառայություններ կը մատուցեր երկիր անցնող ֆետայիներուն, ինչպես նաեւ զինամթերքի փոխադրության գործին:
31. Ծայր – փամփուշտ, նորի ծայր, այսինքն նոր հրացանի ծայր:
32. Մեսրոպ Մաշտոց – Ատրպատականի գործիչներեն:
33. Սանամերիկ – գյուղ Սալմաստի շրջանին մեջ:
34. Խմբագրություն – այսինքն «Դրօշակ»ի խմբագրություն, որ միեւնույն ժամանակ կը նշանակեր Հ.Յ.Դ. Արեւմտյան Բյուրո:
35. Ռովել – այսինքն ռեվոլվեր, ատրճանակ:
36. Կամուրջ – թուրք-պարսկական սահմանի վրա Կարե գյուղը:
37. Շեղագիր շարվածքները բնագրին մեջ ծածկագիր են (շիֆրե), որ հոս կը բացվին «Մայր Արաքսի ափերով»-ի շարքով:
38. Ոսկանապատը Պաքուն է եւ անոր Կ. Կոմիտեությունը:
39. Վազգեն – իսկական անունով Տերոյան Տիգրան. Վասպուրականի հեղափոխական հայտնի գործիչներեն. նահատակված 1898-ին:
40. Այգեստան – Գանձակի նահանգին կուսակցական ծածկանունը:
41. Ֆարհատ – ծածկանունը հայտնի հեղափոխական Սարգիս Օհանջանյանի:
42. Կոթը՝ հրացանն է:

Մենավոր(4)

Հ. Գ.- Միայն նոր իմացա որ ձեր անցյալ նամակ բերող Ա-վետարանցի Հակովբը նամակներ է բերել զուրնաչիներից(18) գյուղի Ռեսին. վերջինին այսօր կանչելու եմ բացատրվելու. միայն դուք ներկայացուցիչներին հայտնեցեք, որ նրանք Արտուրին, Բժշկին եւ Մալխասին հետ պայմանավորվել են զատ օջախ չհիմնել, հակառակություններ չսերմանել եւ նամակները մեր միջոցով փոխադրել:

Այժմ խոստումներից ոչ մեկը չէ կատարվում, թող իմանան որ այդպիսի ընթացքով գործ կը փչացնեն, իսկ հակառակ պարագայում իրենց նամակները այս գծով չեն տեղափոխվի...

ՆՈՅՆ

Փաստ. 468-13

Վրեժի Կ. Կոմիտեին(20)

Սիրելի ընկերներ!

Ավարայրում(6) լսեցի որ ինձ կանչել եք Վրեժ մինչեւ գարուն մնալու. ցավում եմ որ այսուհետեւ անկարող եմ ընդունել ձեր առաջարկը, որովհետեւ Կոմսի(1) հետ համաձայնության գալով մտադիր եմ Փետրվարի սկզբներին ներս մտնել(21)... իսկ թե ինչո՞ւ այս երկու ամբողջ ամիսը ես Վանքում(4) անգործ ընկա, այդ խնդրում մեղավորը ես չեմ այլ ընկերները, որովհետեւ երբ ես Մենավորից(4) գրել էի Մալխասին(11) թե մնում եմ այնտեղ ամբողջ ձմեռը... Մալխասը պատասխանել էր թե - շատ ուրախ եմ որ վճռել ես մնալ Մենավորում, սպասիր մինչեւ Վրեժից կարգադրություն կանենք...

Այսպես կամ այնպես իմ խնդիրը վերջացած համարելով կարիք եմ զգում մի քանի խոսք ասել Մենավորի գործերի շուրջը:

Անշուշտ գիտեք այն բոլոր հարմարությունները որ ունեն Մենավորի գծերը տեղափոխության համար. գլխավոր պայմանը օտար տարրերի աջակցության մեջ է. սա մի խնդիր է որի վրա մեծ ուշա- դրություն է դարձնելու. մի կողմից սիրաշահելով այդ տարրերին, մյուս կողմից էլ նկատի ունենալով որ այդ տարրերի տրամադրու-թյունը մեծ մասամբ անտեղեկական է լինում, ուստի պետք է եղած ժամանակից օգտվել ամենալայն չափերով:

Գովելով հանդերձ Մենավորի ընկերների եռանդուն գործունեությունը, չի կարելի ուշադրության չառնել մի քանի պակասություններ, որոնք այսպես կամ [այնպես] վնասում են տեղափոխության գործին... Ամենից առաջ դուք, եւ Մենավորում նստող ամեն մի ընկեր պետք է համոզված լինի, որ տեղափոխության գործը այդպիսի բացառիկ պայմաններով չէ կարելի լայն չափերով միմիայն պրոպագանդի ուժով ի կատար ածել, այլ խոսքով, միմիայն «ազգասիրությամբ» տեղափոխություն չի լինի առանց նյութական կանոնա-

վոր վարձատրության: Որովհետեւ այն հասարակությունը որ զբաղում է այդ գործով դեռ գիտակցական զոհաբերության այդ չափը չունի. իսկ մինչեւ այդ աստիճանին կը հասցնենք բանը բանից կանցնի. սովորական դրությամբ, ազգասիրաբար տեղափոխությունը այդ կարգի մարդիկ անում են այն ժամանակ երբ ազատ են լինում եւ տնտեսապես իրենք չեն վնասվում. թե՞ որ դրանք մի առանձին տնտեսական ապահովություն չունեն, կամա թե ակամա մատերի արանքով են նայում այն խնդրին որից քիչ շահ ունեն...

Ըստ իս ներկա պարագաներում երբ մեր կազմակերպությունը նյութականապես կանոնավոր ապահովված է, կարծում եմ տեղափոխության, որ մեր գործի ամենազգայուն ծյուղն է, պետք է արտակարգ ուշադրություն դարձնենք. հավատացնում եմ ձեզ եթե անցյալ տարի ամեն մի հազար ծայրին մի լիրա (տաճկալկան ոսկի) վարձատրություն տրվեր կրկնակին կը փոխադրվեր: Եղել է այսպիսի դեպք Արտուրի օրով. ձիով տեղափոխող սուրհանդակը 4000 ծայրը քցել առանց ապրանքի է վերադարձել մի 2-3 ռուբլու համար... գուցե սա մի այնպիսի դեպք է որ պետք է վերագրել ներկայացուցիչի թուլության, բայց համենայն դեպս այդ կարգի օրինակներ բացառիկ չեն...

Դուք գուցե առարկեք որ մենք այդ իրողությունների մասին տեղեկություն չենք ունեցել եւ անկարող էինք ժամանակին շուտափույթ օգնություն հասցնել. մեծ սխալներից մեկն էլ այդ է, որ Մենավորը ամսեկան գոնե մի ընդարձակ տեղեկագիր չէ ուղարկում յուր բովանդակ գործողության եւ կարիքների մասին Վրեժի Կ. Կոմիտեին. պակասություն որի վրա լուրջ ուշադրություն եք դարձնելու եւ խոսքից գործի եք վեր ածելու:

Կարծ. Մենավորում տեղափոխությունը այս տարի կանոնավորելու համար պետք է մտցնել ներսի համար, կանոնավոր վարձատրության սիստեմ:

Գուցե դուք առարկեք որ Մենավորում ահագին ծախս է եղել, ինչպես հաշիվն է ցույց տալիս. ցավոք սրտի այդ հաշվեպահությունը այնքան խամ եւ անգործնական կերպով է տարված, որ դժվար է կանոնավոր գաղափար կազմել, թե ելքի ո՞ր տոկոսն է գնացել ներսի տեղափոխության գործին. եթե վերջինը զատված լիներ, շատ փառավոր կերպով կը տեսնեիք որ մի շատ չնչին գումար է, իսկ մնացածը տեղական եւ ընկերների ծախսեր է:

Այս տարվա տեղափոխությունը կանոնավորելու համար պետք է ունենալ հատուկ Մենավորի, այն էլ ներսի տեղափոխության համար որոշ գումար, 10-15 ատրճանակներ առնվազը 50-ական ծայրերով (տեսակի վրա ուշադրություն չէ դարձնելու, որովհետեւ սուրհանդակները այդքան բարձր գաղափար չունին տեսակների մասին), չորս հատ ձի, կանոնավոր այն էլ փալանած եւ մի քանի ուրիշ հարմարություններ որ տեղական գույն են կրում եւ կարելի է Մենավորի ներկայացուցչի հետ խոսել այդ առթիվ... Եթե այս պայմանները ժամանակին ի կատար ածվեց, մանավանդ դրամականի խնդիրը հավատացեք որ գործը կիսով չափ հաջողված եւ ապահոված կը լինի...

Երեւակայում եմ որ այս տողերը կարդալուց պետք է մի կուշտ ծիծաղեք եւ ավելացնեք որ այդ բոլորը մենք գիտեինք եւ այդ անիծյալ նյութականի խնդիրն է որ մեզ կաշկանդել է եւ չենք կարողանում մեր ուզածը անել... Այդ պակասը լրացնելու համար միայն մի ճար կա. գործերի ներկա դրության մասին մի կանոնավոր տեղեկագիր կազմել, մեկը ուղարկել Արեւմտ. մեկը Արեւել. Բյուրոյին եւ պահանջել որ իրենց շրջանների Կ. Կոմիտեները] կարգադրեն որ անմիջապես նյութական օգնություն անեն շեշտելով որ այդ փողերը ոչ թե Վրեժի համար է, ինչպես Մ. Ք.-ի(5) ընկերներն են հասկացել, այլ Երկրի եւ Շամի(3)... Իսկ եթե առարկելու լինեն թե Ընդ. ժողովը այդքան գումար չէ հատկացրել Շամին, իրավացի կերպով պատասխանելու եք որ Ընդ. ժողովը չէր կարող նախագուշակել թե Բարձրավանդակի հարցը այդպես շուտով կը վիժվի եւ կը մնա Երկրում միմիայն Շամի շրջան, իսկ եթե Դ[աշնակցության] Խորհրդին(2) կանոնավոր ընկեր ունենայիք, որ ծանոթ լիներ այս բոլոր պարագաներին, շատ բան շահած կը լինեինք. մեր քոռ բախտին էլ Կոմսի(1) գալը ձյունների պատճառով արգելվեց:

Մի քանի խոսք էլ Մենավորի ընկեր ներկայացուցիչների մասին. բայց կանխապես ասեմ որ գրում եմ

Ս. Օհանջանյան

Փայլակ

Սեւքարեցի Սաքո

ոչ իբրեւ բամբասանք, այլ իբրեւ խարակտերիստիկա... Թեեւ Արտուրի խնդիրը վերջացած է, բայց ավելորդ չեմ համարում մի քանի խոսք նրա մասին հայտնելու... Նա մոմենտի ազգասերներից էր եւ, ավելի շատ անմահանալու յուր իշխանական կապրիզների համար էր աշխատում քան գործի. ամենագլխավորը՝ նա չուներ ոչ մի առաջնորդող գաղափար եւ չէր անցել ամենաչնչին հեղ. շկոլա. բնականաբար այսպիսի հատկություններով օժտված մարդը չէր կարող այդտեղ երկար մնալ եւ կանոնավոր գործ կատարել. իսկ նրա օրով եղած գործի հաջողու- թյունը վերագրելու է Վարդանի(23) եռանդին, որ կանոնավոր հիմքերի վրա էր դրել գործը. Շամի մղումներին, որոնցով գործը իներցիայով [էր] առաջ գնում. որի ժամանակ Արտուրը պրատակոլ կազմողի դեր է կատարել, այն էլ շատ անշնորհք. եթե երկրից եկած նամակները կարդանք [կը] տեսնենք որ նույնիսկ տեղափոխված ապրանքների թիվը եւ ցուցակը կանոնավոր չէ կազմվել... որով տեղի է տվել ներսը շատ անգամ մեծ թյուրիմացությունների... իսկ նրա գործողությունների գլուխ գործոցը վերջին քայլերն էր եւ Սարուստան(9) գնալը, որի մասին գիտեք, բայց առանց մի քանի մանրամասնությունների, որոնց մասին կարեւոր եմ համարում գրել, որովհետեւ նրա հետ վարվելու համար կարեւոր է այդ տեղեկությունները:

Մինչեւ գնալու օրը ճիշտն ասած ես չէի կարողանում ճանաչել նրան, թեեւ առիթներ կար ճանաչելու, բայց Ավարայրի(6) ընկերների անտարբերությունը եւ ներողամտությունը ինձ շշկեցրել էր... Հենց այդ էր պատճառը որ ես էլ նրան մի քանի հանձնարարական նամակներ տվի Սարուստանի մի քանի ընկերների եւ մարմինների վրա. ի միջի այլոց մի նամակով խնդրել էի Մրգաստանի(19) ընկեր Ս. Օհանջանյանից 100 ռուբլի հանձնելու, ինձ համար մի քանի բաներ գնելու: Սրա մասին ոչինչ չեք գրել, իսկ նամակ ստացա որ նա վերցրել է, արդեն հարցրեք, թե ի՞նչ է արել այդ 100 ռուբլին. հետո Մ. Ք.-ից(5) խնդրել է ատրճանակներ, փոքրիկները, եւ մի մաուզեր ինձ համար եւ մի քանի ուրիշ իրեր. պետք է տեղեկություն ունենալ Մ. Ք.-ից եւ ըստ այնմ վարվել... Լսեցի որ մի քանի ատրճանակ բերել եւ թաղել է ջրի ափը. խնդրում եմ ուղարկեցեք այդ ատրճանակները հատկապես Մենավոր սուրհանդակների համար. միայն պատվիրեցեք որ Մինարեթում(24) եւ Ավարայրում(6) չվերցնեն:

Արտուրին շրջանից հեռացնելու ժամանակ գործ է դնելու որոշ զգուշություններ, որովհետեւ ինչպես ասացի նրա համար սրբություն չկա, մեկ էլ տեսանք «զուրնաչի» (հնչ.[ակյան]) դառավ եւ Մենավորի բոլոր գաղտնիքները ու հարմարությունները ի չարը գործ դրեց, որոնց մասին ինքը լավ գաղափար ունի: Այս բանի վրա լուրջ ուշադրություն է դարձնելու, որովհետեւ նրանց Հաջի Հակովբը եւ Երվանդը, որ վերջերս մերոնց աջակցությամբ ներս գնացին, արդեն սկսել են գծերի վրա «զուրնաչիների» օջախներ հիմնել այն էլ օպոզիցիայի օջախներ... մեղքը մերոնց է, այսքան խայտառակություններից հետո էլի գրկախառնվում ենք եւ ընկերական հա-

մաձայնու-թյուններ փոխանակում... Մենավորում էլ, հատկապես գյուղի կեղտոտ ռեսի ձեռքով ցանկանում են օ-ջախ հիմնել. վերջերս սուրհանդակները նամակ էին բերել եւ հանձնել ռեսին... Չգիտեմ թե ինչպես են վարվելու ընկերները, բայց իմացեք որ եթե անցյալի պես մատերի արանքով նայինք այդ խնդրին, այդ գիծը կը փչանա եւ նրանք փոխանակ իրենք գործ կատարելու, մեզ էլ կը խանգարեն, ինչպես որ ամեն տեղ անում են:

Լսեցի որ Բժիշկին ուղարկում եք իբրեւ ներկայացուցիչ Մենավորի: Բայց մի երկու խնդիր կա որ աչքից չէ փախցնելու. սկզբից ասեմ որ ես Բժշկին բազմակողմանի չեմ ճանաչում, բայց համենայն դեպս անհամեմատ խոհեմ եւ եռանդոտ է քան Արտուրը եւ կարող է գործերը նրանից լավ վարել, այս բոլորը այնուամենայնիվ բավական չէ: Ի նկատի է ունենալու եւ այլ հանգամանքներ: Փայլակը(25) Մենավորի համար որոշ չափով վտանգված մարդ է եւ կարծում է երկար ժամանակ այնտեղ մնալ չէ կարող, որովհետեւ ամեն կողմից կը խոսին: Սարդարն էլ կը լսե եւ գծերը կը վտանգվին. թե նրան բոլոր շրջանի մարդիկ ճանաչում են, այդ մասին չկասկածեք անգամ. մյուս կողմից էլ Փայլակի բնավորության մեջ կա մի գիծ որ իր կողմից այնքան էլ նպաստավոր հանգամանք չէ ներկայացնում: Անշուշտ գիտեք որ նա ջղային մարդ է եւ շատ անգամ չափից դուրս է գալիս, վշտացնում թե տեղական մարդկանց եւ թե սուրհանդակներին. նրա մասին Մենավորում ընդհանուր կարծիքը այն է որ նա երկար ժամանակ չէ կարող վարվել մարդկանց հետ եւ վաղ թե ուշ կռիվներ կը պատահի:

Այս երկու հանգամանքները ի նկատի ունենալով - մանավանդ առաջինը - կարծեմ Փայլակի վրա նայելու եք իբրեւ ժամանակավոր ներկայացուցիչի վրա եւ օր ավուր առաջ աշխատեցեք Սարուստանից(9) կանչել մարդ որ նրա տեղ բռներ, իսկ [նրան] ուղարկեցեք մի անծանոթ վայր, այդպիսի տեղերում նա ավելի հաջողություն կը գտնի քան ծանոթ տեղերում:

Սարուստանում մի քանի մարդիկ կան որոնց մասին պետք է գրել պաշտոնապես Մեծ Քաղաք(5) եւ խնդրել, որ նրանք անցընեն այս կազմը, մանավանդ որ Սամսոնը(26) եւ Մալխասը(11) հեռանալուց հետո գործերը երեսի վրա կը մնան եւ շատ դժգոհություն կը ստեղծվի... կանչելու համար հարմար մարդիկ հետեւյալներն են. Մենավորի համար Անմեղյանցին(27) (Սաքոյին), գոնե գարնանից մինչեւ աշուն: Նա շատ հարմար է, թե իբրեւ փորձված մարդ եւ թե իբրեւ բնավորությամբ սիրալիր. կարող է մեծ հաջողություն ունենալ: Գրեցեք սրան անպատճառ ուղարկեն. եթե սրան չուղարկեցին, պահանջելու [է] Ջրաբերդի(12) եւ Քարի(28) շրջաններում գործող մեր նախկին ընկերներից Արամայիսին, նա էլ փորձառու եւ լավ մարդ է, Մենավորի համար շատ հարմար: Վերջերս նա վտանգվել է Սարուստանում եւ թերեւս համաձայնվի այս կողմերը գալու. նա ինքը այդ ուղղությամբ տրամադրություն է հայտնել... Քարում ունենք մի շատ եռանդոտ եւ ինտելիգենտ ընկեր - Կարապետ Պարունակյան, Քարի Կ. Կ. անդամներից է, նա էլ ցանկություն ուներ այս կողմերը անցնելու. նա ամուսնացած է եւ ընտանիքով պիտի գա այս կողմերը. ինքը լուսանկարիչ է եւ կինն էլ կարող է վարժուհի լինել. այնպես որ սրանք Մենավորի համար շատ հարմար մարդիկ են եւ Սամսոնից հետո, եթե նա համաձայնվի գալ, իմացեք որ մեծ բան կը լինիք շահած. ինքը ինձ տրամադրություն ցույց տվավ եւ խնդրեց ինձնից տեղեկություն գրեմ: Թե արդյո՞ք յուր արհեստով կարող է այստեղ ապրել եւ ընտանիքը պահել թե ոչ. այնտեղի ընկերների կարծիքով դա հնարավոր է, այնպես որ ես իրեն ընկերա[կան] նամակ կը գրեմ: Դուք էլ ձեր կողմից պաշտոնական նամակներ գրեցեք այդ երեքին (Անմեղյան, Արամայիս եւ Պարունակյան), Քարի եւ Մեծ Ք. ընկերներին (Քարի հասցեն հենց կարող էր գրել իրեն Պարունակյանին):

Մի քանի խոսք էլ վարդապետի(30) մասին. Սրա մասին շատ թեր եւ դեմ լուր է տարածվում մեր շրջաններում. կարծում [եմ] պետք է այդ լուրերի առաջն առնել, որովհետեւ այդ մարդը ոչ մի կողմից արժանի չէ այդ բամբասանքներին.- ինձ թում է թե մենք ծայրահեղությունների մեջ ենք ընկնում. նրա վրա նայելու է իբրեւ մի համակրող եւ սովորական նպաստող դաշնակցականի վրա, որ մեզ ամեն հարմարություններ տալիս է գործի համար. թյուրիմացությունները մեծ մասամբ առաջ են գալիս նրանից որ մենք խառնվում ենք նրա ներքին գործերին եւ վանքի տնտեսական հարցերի մեջ, խնդիրներ՝ որ ոչ մի պարագայում, մեզ չէ վերաբերվում. հայտնելու է միանգամից մի անգամ, Մենավոր գնացող ընկերներին, որ նրանք վանքի ներքին գործերին հետ ոչ մի

հաշիվ չունեն եւ վարդապետի հետ վարվեն իբրեւ ընկերի եւ ոչ իբրեւ ենթարկվողի... Սա շատ կողմերից կարեւոր բան [է]. ի նկատի ունեցեք որ դրանից լավին չենք արժանանա. կրթվածները այն սարի գլխին պատիվ չեն համարի ապրել, տգետներն էլ կը գան իրենց փորի համար, իսկ [սա] գոնե աշխատում է վանքը շենացնել. սրա միակ թուլությունը այն է, որ ամեն բանից քաշում է վանքը վերակենդանացնելու համար. իսկ մեզ եւ մեր գործին ոչ մի պարագայում չէ վնասում, ընդհակառակը կարեցածին չափ օգնում է. հավատացեք որ եթե նա չլինի՝ այն շրջանում ոչ կարող էինք պտըտվել եւ ոչ ապրել, ինչ որ պատահում է նրան ենք ներկայացնում բեկերի եւ խաների առաջ եւ ամեն անգամ ինչպես փաստերը ցույց են տալիս պարզերես է դուրս գալիս...

Կոմսը միշտ ներսից պահանջում է որ խմոր եւ խնձորներ(16-17) ուղարկենք, Սարուստանում ահագին քանակությամբ կա երկուսից էլ (մոտավորապես 20 փութ. խմոր կա եւ 1500 խնձոր) բայց մինչեւ հիմա Մրգաստանից(19) ուղարկել [են] միմիայն 25 հատ լիքը այն էլ առանց կապսուլի եւ ֆիթիլի. գրեցեք որ ապրանքների հետ անպատճառ խմոր եւ խնձորներ տեղափոխեն, մի 200 խնձոր եւ 6-8 փութ խմոր, ֆիթիլ եւ բազմաթիվ կապսյուլներ. գրելու է, որ առանց լցնելու ուղարկեն առանձին առանձին. մենք այստեղ կամ ներսը կը պատրաստենք: Սրանք կարեւոր խնդիրներ են եւ անպատճառ շուտով գրելու եք Մրգաստան եւ Մեծ քաղաք որ մինչեւ Հատիկ անպատճառ տեղափոխեն...

Մենավորում կան մի քանի ատրճանակներ առանց ծայրերի(31), այնպես որ մի քանի 100 ծայր ուղարկեցեք դրանց համար. չմոռանամ հայտնել որ նույն ծայրերի պահանջ կար եւ Երկրում, որի մասին Տիգրանը Շամից գրել էր Արտուրին, Արտուրը գրել էր ձեզ. ինքը ասում էր որ Նիկոլը կուղարկի. մինչեւ հիմա էլ չենք ստացել. ատրճանակները հետեւյալ տեսակներն են. 1. Նագան 2. Բրաունինգ 3. Սմիտվիսոն եւ 4. Մաուզեր - տասը հարվածանի: Եթե ամեն մի տեսակից մի քանի հարյուր հատ ուղարկենք, թե Մենավորի ատրճանակները կը գործադրենք եւ թե ներս կուղարկենք. եթե Մալխասին հասավ, նրա հետ անպատճառ ճամբեցեք եւ պատվիրեցեք ուղղակի ճամբեն Մենավոր:

Ընկերներ! Ներեցեք որ այսքան երկար գրեցի. գուցե խնդիրներից ձեզ շատերը ծանոթ էին, եւ սա մի կրկնողություն էր, բայց բարի եղեք մի ավելորդ անգամ էլ լսելու այդ նկատողությունները եւ շուտափույթ կարգադրեցեք քանի որ ուշ չէ. երբ ծանապարհները բացվեցին, սուրհանդակները կը գան եւ դատարկ կերթան:

Ես մի երկու օրից կը վերադառնամ Ավարայր(6), այնտեղից Մենավոր եւ կը սպասեմ սուրհանդակներին:

Մնաք բարով, եթե կյանքի պատահարները այնպես դասավորվեցին որ ես չկարողացա տեղ հասնել եւ իդեալիս ծառայել, մեռնելուց կը մխիթարվեմ միմիայն նրանով, որ կենդանի մնացած ընկերները կը շարունակեն գործը եւ բարձր կը պահեն «Ազատության դրոշը»:

Ընկերական համբույրներով
ԱՐԱՄ

1905 թ. Հունվար 18-ին

Մինարեթ(24)

Փաստ. 662-74

Սիրելի Մալխաս(11)!

Ապահով տեղ հասանք. Ընծայրը(30) գալիս է Թավրիզ գնալու. խոսեցեք շուտ վերադառնալու մասին. նրա հոս լինելու հետ շատ խնդիրներ է կապված, դեռ մի կողմ եմ թողնում տեղիդ տեղափոխության հարցը. մտածեցեք եթե ամսից ավելի մնաց այն կողմերը մեր բանը շատ դժվար կը լինի. գոնե Մաշտոցին(32) նամակ

գրեք որ շուտով համաձայնություն տա. եթե տալու է եւ սա էլ յուր պատգամավորությունը արագ կատարելով վերադառնա: Դեռ սուրհանդակներ չեն եկել. շուտով պետք է մարդիկ կանչեմ, թե օտարներ թե մերոնք, պայմանավորվելու մասին. նպատակ ունեմ մի նոր գիծ էլ բանալ, որի մասին հարցրեք Ընծայրից. շատ հարմար գիծ է, եթե հաջողեցինք շատ բան կը շահենք. բայց անպիտան փողի հարցը ինձ կասեցնում է. վախենում եմ խոստումներ անել, ծրագիրներ կազմել եւ հանկարծ խայտառակվել եթե ժամանակին դրամ չհասնի, ինչ եւ իցե, գոնե իմանայինք Մ. Ք.-ի(5) ընկերների տրամադրությունը եւ ըստ այնմ վարվեինք. Հակովբին ե՞րբ ես ուղարկել, եւ պատվիրեցի՞ր շուտ վերադառնալու: Թեեւ մի քիչ վաղ բայց մի բան եմ արել. արդեն քեզ հետ խոսել եմ, որ լավ կը լինի եթե այստեղ մենք վարձով տեղացի սուրհանդակներ ունենանք թե մեր եւ թե թերթերի տեղափոխու- թյան համար. ես Մելքոնին առաջարկեցի այդ պաշտոնը. նա ուրախությամբ ընդունեց հետեւյալ պայմանով. աչքի առաջ ունենալով զանազան հաշիվներ, ես նրան առաջարկեցի 35 թուման, ինքը յուր ձիով աշխատելու համար. ի հարկե ամէն անգամ երբ կարիք եղավ այս եւ այն կողմը գնալու, նա առանց պատճառաբանության պետք [է] գնա: Կարծ, նա ամբողջապես պիտի ինքզինքը դնի կազմակերպության տրամադրության տակ:

Սա թե իրեն եւ թե առանձնապես մեզ շատ շահավետ է, այդ փողն միայն մի ձիու գին է, որ մենք պիտի առնենք եւ տարվա վերջը 8 թումանով ծախենք... Իսկ թե Մելքոնը ընտանեկան գործերից ազատ եղավ, որքան օգտակար կը լինի, այդ բոլորիս համար պարզ է: Սա ես արի հատկապես Քարեցոց(28) թերթի փոխադրությունը աչքի առաջ ունենալով. բայց հակառակ պարագայում էլի չենք վնասվի, որովհետեւ եթե տարվա մեջ 20 անգամ էլ գնա գա, էլի 40 թուման կանե. բայց հուսով եմ որ ավելին կը շահենք: Մտածեցեք եւ գրեցեք ձեր եզրակացությունը, որպեսզի վերջին խոսք ասեմ նրան, նա էլ իր անելիքը տեսնե. որովհետեւ եթե համաձայնվեց պիտի իրենց տանը համար ծառա վերցնե. բայց կարծում եմ մնացածներին չգայթակ[ղե]ցնելու համար պետք է այս բանը գաղտնիք մնա. գոնե գումարի խնդիրը:

Եթե փողերի հարցը կարգադրվեց կամ Մ. Ք.-ից նամակ եկավ, իսկույն ինձ իմաց տուր. դա կարեւոր է թե այստեղի ձեռնարկների համար եւ թե ներս գնալու ժամանակ. այդ խնդրի մասին պետք է որոշ կարգադրու-թյուններ անեմ Կիրձում(10) եւ Ավետարանում(15)...

Ձիաների խնդիրը մտից չէ հանելու, Ցոլակի մեջքը փչացել է, պահում եմ որ առողջացնեմ, վախենում եմ բանեցնենք բոլորովին փչանա եւ հիմար դրության մեջ ընկնենք. սպիտակ ձիուն ոտը դեռ բոլորովին չէ լավացել, մի 10-15 օր պետք է կապեմ որպեսզի բոլորովին պնդի: Այդտեղ եղած կարմիր ձին լավ պահեցեք որ փալանով ներսի փոխադրության համար գործադրենք:

Էլի վանքը դատարկվել է, ոչինչ չկա ուտելու, նույնիսկ չուրաթանն էլ վերջացել է. Պատվելուն հայտնիր որ Համանի հետ մի քիչ կարտոֆիլ եւ սոխ ուղարկե. մի պատի օրացույց անպատճառ ուղարկեցեք, ամիսների եւ օրերի հաշիվը լոբիայով ենք պահում... Քո ատրճանակի չափով երկու դուբուր շինել տվեք եւ ուղարկեցեք - հոս եղած երկու հատն էլ առանց դուբրի են - Պատվելուն իմ կողմից խնդրիր որ մի քիչ թուրշի ուղարկե եւ երկու շիշ էլ քացախ: Երկու ջուխտ սոլ ուղարկեցեք այստեղ հագնելու համար. թող բավական մեծ լինեն:

Մրգաստան(19) գրեցեք որ ձեր ուղարկած 24 խնձորի խմորը(16-17) բոլորովին փչացել է, պաղելուց նրա պայթուցիկ մասի ուժը կորչում է, այնպես որ նորից պիտի լցնել, այսուհետեւ ոչ մի նոր լցված խնձոր չեն ուղարկելու...

Հայր սուրբի հետ Սանամերիկ(33) Ասլանին մի խենչալ ուղարկի, խոստացանք եւ մոռացանք ուղարկել:

Ես մոռացա այդտեղ անձամբ մի երկու ձեռնափայտեր շինել տալ սուրհանդակների համար, այնպիսի հարմարությամբ որ մի երկու նամակ պահե մեջը. կարծում եմ եթե կարողանան պտուտակներով շինել շատ լավ կը լինի եւ մշտական կը լինի. սովորական դրությամբ շատ կոպիտ է լինում եւ աչքի կը զարնվի. նամակի տեղը ներքեւի մասում է շինելու. փայտը պետք [է] շատ հասարակ ձեւ (ավելի տձեւ) ունենա որպեսզի աչ-

քի չզարնվի:

Ուղարկում եմ տեղիս արխիվը, դրա հետ եւ Արտուրի անձնական նամակները, բայց ես մի փոքրիկ զարտուղություն եմ արել, որ սովորական դրության մեջ թերեւս հանցանք սեպվեր. բացել եմ նրա անձնական նամակների ծրարը եւ զատել զուտ անձնական մեր գործերի հետ կապ ունեցողը՝ դրել ընդհանուր նամակների հետ. կարծում եմ հեղափոխական բարոյագետը կը ներե ինձ այդ հանցանքի համար, ի դեմ այն մեծ շահագործության որ Արտուրը գործել է իմ վերաբերմամբ...

Առայժմ այսքանը.

Հարգանքներով՝
ԱՐԱՄ

1905 թ. Հունվար 28-ին
Մենավոր

Հ. Գ.- Նամակս գրել էի երբ եկան երկու սուրհանդակներ առանց նամակների, իբր թե նամակները անապահովության համար թողել են Ավետարան(15), որ այսօր կամ վաղը պետք է բերեն:

Ընծայրին(30) այսօր հատկապես պահեցի նամակների համար. եթե հասավ նամակների հետ կուղարկեմ եթե ոչ այլ անգամ:

Մոռացել էի գրել որ այստեղ ձիաներից մեկը առանց այարի է. Զամանի հետ մի կանոնավոր այար ուղարկեք բոլոր թախումներով, չմոռանաք մանավանդ մի կակուղ թարեք[?] գնել եւ այարի հետ դնել, գամը ինքն ըստ ինքյան չեք մոռանա:

Մի երկու հատ էլ մեծ թաշկինակ ուղարկեք աղա քյուրդ՝ Սահակի համար:

Խմբագրության ուղարկած տեղեկագիրը եւ Դ[աշնակցության] Խ[որհրդին](2) առաջարկվելիք հայցերը մոռացա բերել, շուտով ուղարկեք Շամի(3) համար:

Մոռացա այդտեղ ասել որ խնձորները(17) վտանգից ազատելու համար, մի մեծ կաթսա ջուր եռացրեք եւ կրակից հեռացրեք եւ ածեցեք մեջը, կը կակղի. ապա եթե կանոնավոր կակղեց, եթե հնարավոր է ուղարկեք որովհետեւ շատ հարմարություններ կան ներս ուղարկելու (24):

Փող, փող եւ փող. եկած սուրհանդակի հետ պայմանավորվեցինք առաջիկա փոխադրության մասին. շուտով փող հասցրեք որ արագացնեմ:

Հարությունը դեռ չի եկել. տեսնենք երբ կը գա, վախենում եմ խեղճը հոն վտանգվի...

Այսօր պատահական կերպով առիթ ունեցա կարգադրել եւ մի ուրիշ խնդիր, որի մասին հետաքրքիր է ձեր կարծիքը. բացի Մելքոնից ես աչքի առաջ ունիմ եւ մեկ ուրիշին որը թե կարեւոր է այստեղի գործերի համար եւ թե մանավանդ այստեղ այնտեղ ուղարկելու համար ոտքով կամ ձիով. դրա մասին կարող եք հարցնել Ընծայրից. նա վանքի հին ծառա Առաքելն է, ամբողջ տարվա վարձը 10 թուման է եւ 2 թումանի էլ շորի այնպես որ դրան եւ Թումոյին տարեկան եթե տանք 25 թուման, չորս զինվորի չափ կաշխատին եւ մենք կազատինք շատ անդյուրեկանություններից. նկատի ունեցեք որ հոս գարնանից դժվար է մարդիկ հանել մեր գործի համար. որովհետեւ զբաղված են լինում: Կարծում եմ ամենալավ զինվոր կոչեցյալը տարեկան 20 թումանից ավելի է նստում մեզ վրա:

Եթե խմբագրության(34) մեքենայի մասին դեռ չես գրել, շուտ գրիր որ անպատճառ ուղարկեն. երբ հարցը գալիս է եվրոպական այս եւ այն քաղաքում միտինգ կազմելու փողերը չեն խնայում, իսկ երբ հարցը գալիս [է] երկրի համար որեւէ բան առնել, ասում են թանգ է. դրանից մեծ վիրավորանք չկա երկրի ընկերների եւ գործի հասցեին: Խնդրում եմ այդպես էլ իրենց գրես:

ԱՐԱՄ

Փետր. 1-ին

Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ

№ 5 (193) XVIII ՏԱՐԻ ՄԱՅԻՍ 1908

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Ամսալուրեր

Սամոս կղզին նոր արյունահեղությանց թատերաբեմ եղավ:

Մայիս 25-ին պարզ միջադեպի մը հետեւանքով, հանկարծ թյուրք զորքեր կղզին ցամաք ելան: Կռիվ տեղի ունեցավ: Երկուստեք սպաննված եւ վիրավորված են 150 հոգի, մանավանդ կիներ եւ երեխաներ: Սելանիկի վալին մարտանավերով մեկնեցավ Վաթի (Սամոսի մայրաքաղաք), Պոլսեն եւս զորքեր ճամփա ելան, կարգը վերահաստատելու համար: Կղզիին մեջ հեռագրաթելերը կտրված ըլլալով՝ արտաքին հարաբերությունները խզվեցան, ժողովուրդը պատրաստվեցավ դիմադրելու: Մյուս կողմեն եվրոպական երաշխավոր պետություններուն, Անգլիա, Ֆրանսա եւ Ռուսիա, կոչ եղավ որ նավեր ղրկեն, թյուրքերու կողմեն կոտորածի առջեւը առնելու համար: Մոտ 150 կիներ, երեխաներ, սարսափահար, Ծիրա կղզին ապաստանեցան:

Թյուրք կառավարությունը կ'ամբաստանե տեղին հույն հյուպատոսը, որ հակառակորդ կուսակցությունը քաջալերելով, պատճառ եղած է ներկա խռովություններուն, եւ կպահանջե անոր հեռացումը: Հույն կառավարությունը չընդունիր սուլթանի մեղադրանքը եւ կպահանջե որ Թյուրքիա փաստաճեւե իր ըսածները:

Շատ մը թերթեր, ինչպես եւ թյուրք աղբյուրե, համահելլենական բնավորություն կուտան Սամոսի շարժման, իբր թե սամոսցիք կուզեն Կրետեի պես Հունաստանի միանալ: Այս դիտումավոր լուրը կհերքեն Աթենքի լրագրները եւ կըսեն, թե գրգռումը հետեւանք է այն բանին, որ տաճիկ կառավարությունը բռնաբարելով միջազգային դաշինքը, որ

1832 դեկտ. 11-են ի վեր, կերաշխավորե կղզիին ինքնավարությունը, կղզին զորք հանած է:

«Temps» ֆրանսական մեծ օրգանը, կավելցնե այս առթիվ՝ «թրքական զսպումները չափավոր ըլլալու սովորությունը չունին: Եվ փորձառությունով գիտենք, թե ինչպես Դուռը, երբ ասպարեզ գտնե, կվերահաստատե կարգը: Եվրոպայի պարտականությունն է հսկել, որ սահմանը չանցնի Թուրքիան, եւ սիկարեթներու ապստամբությունը կոտորածի չայլասեռվի»:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Եվրոպա, Ասիա. - Եվրոպական «հավասարակշռությունը», որ խանգարված էր Ռուսիո պարտութենեն ի-վեր, ի նպաստ Գերմանիո, նոր մարդեղություն կկրե: Անգլիա դուրս գալով իր «փայլուն կղզիացումեն», կկազմե «համաձայնության» նոր համախումբ մը, հակակշռելու համար եռյակ դաշնակցությունը, որուն կռթնած գերմանական հեգեմոնիան սկսած էր վտանգ մ ըլլալ աշխարհի անդորրության:

Ամենեն ավելի Անգլիան իրավունք ունի սրտնեղելու Գերմանիայեն, որուն հսկա աճումը կսպառնա իր տնտեսական եւ առեւտրական գերակշռության:

Անգլիո համար կենսական հարց է, որ Գերմանիան շատ չը զորանա, սակայն Գերմանիո դեմ համաշխարհային հակակրությունը պետք չէ միայն տնտեսականով բացատրել, այլ նաեւ այն պատճառով, որ գերմանացիները իրենց կոպիտ, ամբարտավան քաղաքականությունով, իրենց շուրջը ստեղծեցին ջղայնոտ մթնոլորտ մը:

Իր ցամաքային զորության հետ, երբ Գերմանիա ուզեց նաեւ խլել Անգլիայեն Ծովերու տիրապետությունը, Անգլիան նշմարեց իր հակառակորդին հետին դիտավորությունը եւ միացավ Ֆրանսային: Երկու երկրների հարաբերությունները ավելի սերտացան եւ երբ Ֆրանսայի նախագահը, մայիս 25-ին, այցելեց Անգլիա, ամենաշքեղ ընդունելությունը եղավ իրեն:

Էդվարդ թագավորը եւ նախագահ Ֆալիեր իրենց բաժակաճառերուն մեջ ուղղակի ակնարկություն չըրին «դաշնակցություն» բառին, բայց իրենց «համաձայնությունը» ամրապնդեցին «տեւական» եւ «ավելի սեղմ» մակդիրներով:

Գերմանական մամուլը, մանավանդ ազգայնամոլ թերթերը, իրենց «տեւտոնական կատաղությունը» թափեցին դեպի Անգլիան եւ Ֆրանսան: Պատերազմաշունչ ոգի մը կար անոնց սպառնական տողերուն մեջ, մասնավորապես Ֆրանսայի դեմ: Գերմանիան կպատրաստվի միջազգային ամեն պատահականության, որը անխուսափելի կնկատե արդեն:

Անգլիո թագավորը կմեկնի Ռուսաստան: Երկու դարավոր հակառակորդներու այդ ցույցը, մեծ նշանակություն ունի, թե Եվրոպայի, թե Ասիո համար: Սույն եռյակ տեսակցութիունը նախաբանը կուտա ուժեղ եռյակ դաշնակցության մը,- այժմեն «եռյակ համաձայնություն»- հակակշռելու գերմանական եռյակը: Իտալիո դիրքը շատ փափուկ է եւ չը գիտեր ինչ դիրք բռնե, սակայն գիտե իր հավասարակշռությունը պահել:

Եվրոպական համախմբումները առարկա ունին ավելի ասիական շահերը, մասնավորապես Մոտիկ Արեւելքը: Թյուր-

քիան հետզհետե կուլ կգնա միջազգային տնտեսական պայքարին մեջ: Գերմանիա իր թաթը նետած է արդեն Փոքր Ասիո վրա: Նոր «եռյակ համաձայնությունը» իրականանալով, Արեւելյան հարցը ծանրակշիռ կերպարանք կստանա, որուն նախաբանը կհանդիսանա Մակեդոնիո հրատապ խնդիրը:

Սակայն Անգլիա զերծ չէ ներքին հուզումներե եւ վտանգներե: Հնդկաստանի ազգայնական շարժումը Անգլիո համար մտահոգության կետ մըն է: Գերմանացիք, այդ նախատեսելով, հույս ունին նաեւ մահմեդական աշխարհի վրա, որոնք սուլթանի դրդումով, պիտի ընդվզին եւ փորձանք դառնան Անգլիո:

Հավանորեն, Անգլիա պահանջված բարենորոգումները տալով Հնդկաստանին պիտի կրնա լռեցնել հնդիկները: կմնա Եգիպտոսը, որ դեռ երկյուղ ազդելու շրջանին մեջ չէ:

***

Ռուս-թուրք պատերազմի լուրերը նույն համառությունով չեն պտտիր, բայց համառորեն երկուստեք պատրաստություններ կտեսնվին, թեեւ սուլթանը եւ ցարը կշարունակեն իրար ապահովել: Սակայն ո՞ւմ համար են այդքան զորահավաք եւ ռազմամթերք, որ սուլթանը կլեցնե Հայաստանի վիլայեթներուն մեջ, կամ Կովկասի մեջ համիսլամական փրոփականդը: Արդյո՞ք Գերմանիո քաղաքականությունն է: Ով գիտե, թերեւս Թյուրքիո բախտը պիտի վճռվի Հայաստանի լեռնադաշտին վրա:

Իտալական նավերը դեռ իրենց ցռուկները չեն դարձուցած թրքական ջուրերեն: Իտալական թերթերը կնկատեն մյուսյուլմաններուն մեջ հակաիտալական շարժում մը:

Կրետե կղզին գտնված միջազգային զորքերը մինչեւ տարիին վերջը պիտի պարպվին: Սուլթանը կբողոքե այդ հեռացումին դեմ եւ կպնդե, որ 20 հոգիե ջոկատ մը զորք գտնվի հոն օսմանյան դրոշակը պահպանելու համար:

Հունաստանը կերազե, հանուն հելլենականության «մեծ գաղափարին», երկրորդ անկախության պատերազմ մը մղել Թյուրքիո դեմ:

***

Պարսկաստանը, չունենալով զինվորական հարկավոր ուժը որ իր միջազգային իրավունքները հարգել տա, կբավականանա արդարության եւ իրավունքի պլատոնական բողոքներով, երբ Թյուրքիա եւ Ռուսիա իր սահմանները ոտնակոխ կընեն: Ուրմիա եւ Սալմաստ գավառները արյունոտ ասպարեզը եղած է քրդական ասպատակություններու, որոնք կկատարվին թյուրք սպայակույտի հրահանգով:

Հյուսիսային կողմեն Ռուսիա, պատրվակ բռնելով Գարադաղի թափառիկ ցեղերու ավազակությունները, ավերեց ինքնագլուխ կարգ մը խեղճ գյուղեր եւ մտադիր էր Պարսկաստանի այդ մասը կուլ տալ: Երկուստեք այժմ համաձայնության գալու վրա են, քանի որ պարսիկ կառավարությունը գոհացում կուտա ռուսաց պահանջներուն: Բայց Ռուսիան, օհ, ան զորավորագույնի պահանջները ունի:

Լաուրա Ավետիսյան

Վերջին տարիներին Լոս-Անջելեսում բնակվող և ստեղծագործող Լաուրա Ավետիսյանը ծնվել է և ուսանել Երևանում: Դեռևս ուսանողական տարիներից նա արդեն ցուցադրվում էր Եվրոպական մի շարք երկրներում, Կանադայում:

1989 թվականին նա արժանացել է Հայաստանի Տարվա նկարիչ պատվավոր կոչմանը:

Լաուրա Ավետիսյանը բազմաթիվ ցուցահանդեսներ է ներկայացրել Նյու-Յորքում, Դետրոյթում, Բոստոնում, Սան-Ֆրանցիսկոյում և Լոս-Անջելեսում: Նրա կտավներն իրենց ուրույն տեղն են գրավում աշխարհի ամենատարբեր պատկերասրահներում և անհատական հավաքածուներում: Նա ուղղակի համոզված է, որ կինն է գեղեցկության խորհրդանշանը:

«ԴՐՕՇԱԿ» -ի պատկերասրահ